

Վարդապետության սերտում

Նոր Կտակարանի ուսուցչի ձեռնարկ

Վարդապետությունների սերտման Նոր Կտակարանի ուսուցչի նյութեր

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Մեկնաբանությունները և ուղղումները ողջունվում են: Խնդրում ենք ներկայացնել դրանք.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services
50 E North Temple Street
Salt Lake City, UT 84150-0008 USA
Email: ces-manuals@ldschurch.org

Խնդրում ենք նշել ձեր լրիվ անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Մեկնաբանություններ կատարելիս չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը:

© 2016 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Տարբերակ 1, 3/16

Անգլերենի հաստատումը. 1/16
Թարգմանության հաստատումը. 1/16
Doctrinal Mastery New Testament Teacher Material-ի թարգմանությունը
Armenian
13231 201

Բովանդակություն

Հրահանգներ ուսուցիչների համար v
Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ 1
Աստվածազլուխ 14
Փրկության ծրագիրը 19
Հիսուս Քրիստոսի Քավությունը 26
Վերականգնում 33
Մարգարեներ և հայտնություն 38
Քահանայություն և քահանայության բանալիներ 45
Արարողություններ և ուխտեր 52
Ամուսնություն և ընտանիք 56
Պատվիրաններ 63

Հրահանգներ ուսուցիչների համար

Սեմինարիաների և Կրոնի ինստիտուտների նպատակի մեջ ասվում է. «Մենք ուսանողներին ուսուցանում ենք ավետարանի վարդապետությունները և սկզբունքները, ինչպես տրված են սուրբ գրություններում և մարգարեների խոսքերում» (*Ավետարանի ուսուցում և ուսում նասիրություն. ձեռնարկ սեմինարիաների և կրոնի ինստիտուտների ուսուցիչների համար* [2012], x): Սեմինարիայում սա հիմնականում կատարվում է սուրբ գրությունների հաջորդական ուսումնասիրության միջոցով՝ հետևելով սուրբ գրություններում գրքերի հերթականությանը սկզբից մինչև վերջ: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը շեշտել է, որ «սա առաջին և ամենահիմնական ուղին է՝ կենդանի ջուր ձեռք բերելու համար» (“A Reservoir of Living Water” [Church Educational System fireside for young adults, Feb. 4, 2007], 3, lds.org/broadcasts):

Մեկ այլ ուղի, որով կարող ենք օգնել ուսանողներին հասկանալ, հավատալ և ապրել ըստ Հիսուս Քրիստոսի վարդապետության, վարդապետություններ սերտելն է: Վարդապետություններ սերտելու համար սեմինարիաներում և կրոնի ինստիտուտներում գործադրվում են լրացուցիչ ջանքեր, ինչպես օրինակ՝ սուրբ գրությունների սերտումը և Հիմնական Վարդապետությունների ուսումնասիրությունը: Վարդապետությունների սերտումը նախատեսված է ուսանողներին օգնելու համար, որ հասնեն հետևյալ արդյունքներին.

1. Սովորել և կիրառել աստվածային սկզբունքներ՝ հոգևոր գիտելիք ձեռք բերելու համար:
2. Սերտել Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությունը և սուրբ գրությունների հատվածները, որտեղ ուսուցանվում է այդ վարդապետությունը: Մենք հիմնականում կկենտրոնանանք հետևյալ ինը թեմաների հետ կապված վարդապետության վրա.
    - Աստվածագլուխ
    - Փրկության ծրագիրը
    - Հիսուս Քրիստոսի Քավությունը
    - Վերականգնում
    - Մարգարեներ և հայտնություն
    - Քահանայություն և քահանայության բանալիներ
    - Արարողություններ և ուխտեր
    - Ամուսնություն և ընտանիք
    - Պատվիրաններ

Սեմինարիաները և Կրոնի Ինստիտուտները ներկայացրել են ուսումնական նյութեր, որոնք կօգնեն ուսուցիչներին և ուսանողներին

հասնել այդ արդյունքներին: Այդ նյութերը ներառում են *Վարդապետությունները սերտելու հիմնական փաստաթուղթը* և Վարդապետությունները սերտելու ուսուցչի նյութերը: (*Նշում.* Վարդապետությունները սերտելու ուսուցչի նյութերը մատչելի կլինեն սեմինարիայի չորս դասընթացներից յուրաքանչյուրի համար:)

Վարդապետության սերտման հիմնարար փաստաթուղթ

Վարդապետության սերտման հիմնարար փաստաթուղթը հասցեագրված է ուսանողներին: Այն կազմված է (1) նախաբանից, որտեղ բացատրվում է, թե ինչ է Վարդապետության սերտումը և ինչպես այն կարող է օգնել նրանց, (2) հրահանգից, որը սովորեցնում է նրանց հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքներ և (3) վերևում թվարկված վարդապետական թեմաների բաժնից: Վարդապետական թեմաներից յուրաքանչյուրն ընդգրկում է վարդապետությունների հայտարարություններ, որոնք առնչություն ունեն ուսանողների կյանքի հետ և կարևոր է, որ նրանք հասկանան, հավատան ու կիրառեն դրանք:

Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» և «Վարդապետական թեմաներ» բաժինների որոշ վարդապետություններին և սկզբունքներին առընթեր տրված են վարդապետությունների սերտման սուրբ գրությունների հատվածները: Ուսումնական յուրաքանչյուր դասընթացի համար նախատեսված են 25 վարդապետությունների սերտման սուրբ գրությունների հատվածներ (Հին Կտակարան, Նոր Կտակարան, Մորմոնի Գիրք, Վարդապետություն և Ուխտեր և Եկեղեցու պատմություն), ընդամենը 100 հատված: Այդ հատվածների ցանկը տրված է *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի* մյուս կողմում: Որպես ուսուցիչ ձեր աշխատանքի կարևոր մասն է կազմում օգնել ուսանողներին հիշել և գտնել այդ հատվածները և հասկանալ, թե ինչպես են հատվածներն ուսուցանում Փրկիչի վարդապետությունը:

Վարդապետությունների սերտման սուրբ գրությունների 100 հատվածներից յուրաքանչյուրն օգտագործվում է *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի* անմիջականորեն միայն մեկ վարդապետությանն աջակցելու համար: Օրինակ, Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.15–20 հատվածները մեջբերված են վարդապետական թեմա 4-ում՝ «Վերականգնում», հաստատելու այն ճշմարտությունը, որ **Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին՝ ի պատասխան Ջոզեֆի աղոթքի, և Նրանք կանչեցին նրան լինելու Վերականգնման Մարգարեն:** Ինչևէ, այս վարդապետության սերտման հատվածը կարող է նաև օգտագործվել վարդապետական 1-ին՝ «Աստվածագլուխ» թեմայում առկա ճշմարտությունը հաստատելու համար, որ **Աստվածագլուխն ընդգրկում է երեք առանձին անձնավորություններ. Աստված՝ Երկնային Հայրը, Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին:** Ուստի, այս վարդապետության սերտման հատվածը նշված է որպես այդ թեմային կից հղում:

Իմացությունը, թե որտեղ է մեջբերված վարդապետության սերտման յուրաքանչյուր հատվածը, ձեզ թույլ է տալիս իմանալ, թե ուսուցման որ փորձում տվյալ հատվածը կքննարկվի տվյալ տարվա ուսումնական դասընթացի Վարդապետության սերտման ուսուցչի նյութերում: Նախորդ օրինակում՝ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.15–20 կօգտագործվի *Վարդապետությունների սերտում Վարդապետություն և Ուխտերի և Եկեղեցու Պատմության ուսուցչի նյութերի* «Վերականգնում» թեմայի ուսուցման փորձում:

Ոչ բոլոր վարդապետական թեմաները ամեն տարի կարժանանան նույն ուշադրությանը: Չնայած յուրաքանչյուր վարդապետական թեմա ամեն տարի կամփոփվի, միայն տվյալ տարվա ուսումնական դասընթացի վարդապետությունների սերտման հատվածները հաստատող որոշակի վարդապետական հայտարարությունները կշեշտվեն այդ տարվա Վարդապետությունների սերտման դասերում:

Վարդապետությունների սերտման ուսուցչի նյութեր

Վարդապետությունների սերտման ուսումնական ծրագիրը պարունակում է 10 ուսումնական փորձեր, որոնք պետք է կատարվեն տարվա ուսումնական դասընթացի ընթացքում: Յուրաքանչյուր ուսումնական փորձի հրահանգիչ նյութը հավանաբար կուսուցանվի մի քանի դասերի ընթացքում:

Առաջին ուսումնական փորձը կենտրոնացած է այն բանի վրա, որ օգնի ուսանողներին սովորել և կիրառել սկզբունքներ, որոնք կապված են հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու հետ: Սա պետք է ուսուցանվի ուսումնական տարվա առաջին երկու շաբաթների ընթացքում: Դա կօգնի ուսանողներին պատկերացնել վարդապետությունների սերտման հեռանկարը: Բացի դրանից, այս ուսուցման փորձում ուսուցանված սկզբունքները հիմք են նախապատրաստում և կրկնվում են հաջորդ ինը ուսուցման փորձերի ժամանակ, որոնք կուսուցանվեն տարվա ընթացքում:

Ուսուցման փորձերից յուրաքանչյուրը հիմնված է նախապես թվարկված ինը վարդապետական թեմաներից մեկի վրա: Դրանք նախատեսված են ուսանողներին օգնելու համար, որ ավելի խորությամբ հասկանան Փրկիչի վարդապետությունը և ավելի պատրաստակամորեն կիրառեն այն իրենց կյանքում: Այս ուսուցման փորձերից յուրաքանչյուրը բաղկացած է երեք հիմնական մասերից. «Հասկանալ վարդապետությունը», «Կիրառել վարժությունները» և «Վարդապետության սերտման կրկնություն»:

Հասկանալ վարդապետությունը: Յուրաքանչյուր ուսումնական փորձի այս մասը ներառում է մի շարք ուսումնական վարժություններ կամ մասեր, որոնք կարող են ուսուցանվել մեկ կամ մի քանի դասերի ընթացքում: Այս վարժությունները կօգնեն ուսանողներին ձեռք բերել ավելի խորը հասկացողություն վարդապետական յուրաքանչյուր թեմայի և յուրաքանչյուր թեմայի հետ կապված հատուկ հայտարարությունների վերաբերյալ:

«Հասկանալ վարդապետությունը» վարժությունները հաճախ սկսվում են *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի* վարդապետական թեմայի ուսումնասիրությամբ: Բացի դրանից, վարժությունները կենտրոնանում են վարդապետության վերաբերյալ առանձնահատուկ հայտարարության վրա, որոնց կցված են լինում վարդապետության սերտման հատվածներ՝ վերցված տվյալ տարում ուսումնասիրվող սուրբ գրությունից: Օրինակ, *Վարդապետության սերտման Նոր Կտակարանի ուսուցչի նյութերի* «Աստվածազլուխ» թեմայի ուսումնական փորձում ուսուցիչներին հրահանգվում է օգնել ուսանողներին սերտել Եբրայեցիս 12.9: Երբ ուսանողները սեմինարիայի հաջորդ տարիների ընթացքում ուսումնասիրեն Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Եկեղեցու պատմությունը, նրանք կկենտրոնանան վարդապետությունների սերտման այլ հատվածների վրա, որոնք կհաստատեն այլ վարդպետական հայտարարություններ՝ կապված *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի* «Աստվածազլուխ» թեմայի հետ:

«Հասկանալ վարդապետությունը» վարժություններում ուսանողները խրախուսվում են գտնել, նշել և ուսումնասիրել վարդապետության սերտման հատվածները, որպեսզի կարողանան օգտագործել դրանք՝ ուսուցանելու և բացատրելու վարդապետական հայտարարությունները հատվածների օգնությամբ: Դուք կարող եք անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ ուսումնական վարժություններ, որպեսզի օգնեք ուսանողներին սերտել վարդապետական հայտարարությունները և վարդապետության սերտման հատվածները, որոնք հաստատում են դրանք:

Կիրառել վարժությունները Յուրաքանչյուր ուսումնական փորձ ուսանողներին առաջարկում է առնվազն մեկ կիրառման վարժություն: Այս վարժությունները հիմնականում կազմված են իրավիճակների ուսումնասիրությունից, դերախաղերից, սցենարներից կամ հարցերից, որոնք ուսանողները կարող են ներկայացնել կամ միասին քննարկել փոքր խմբերով կամ ամբողջ դասարանով: Այս վարժությունները շատ կարևոր են՝ օգնելու ուսանողներին հասկանալ, թե վարդապետական հայտարարությունները, որոնք նրանք ուսումնասիրում են, որքանով են արդիական ժամանակակից իրավիճակներում: Վարժությունները նաև շեշտում են, թե վարդապետությունը, որն ուսանողները սովորել են, ինչպես կարող է օրհնել և աջակցել իրենց ապրել ավետարանով, ուսուցանել ավետարանը և ուրիշներին բացատրել իրենց համոզմունքները պատշաճ ձևով:

Սուրբ գրության սերտման կրկնություն: Ուսանողներին աջակցող վարդապետական հայտարարությունները և վարդապետության սերտման հատվածները հաճախակի կրկնելը կօգնի նրանց սերտել դրանք: Յուրաքանչյուր ուսումնական փորձ ներառում է գաղափարների բաժին, որոնք կօգնեն ձեզ առաջնորդել ուսանողներին կրկնել վարդապետական հայտարարությունները և դրանց ուղեկցող վարդապետության սերտման հատվածները, որոնք նրանք սովորել են ուսումնական տարվա ընթացքում:

Իրականացնել Վարդապետության սերտումը

Վարդապետության սերտումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված այն բանից, թե սեմինարիայի ինչ ծրագրում են ուսանողներն ընդգրկված՝ ամենօրյա սեմինարիա (վաղ առավոտյան և ազատ գրաֆիկով ծրագրեր), առցանց սեմինարիա և տնային ուսուցման սեմինարիա:

Վարդապետության սերտումն ամենօրյա սեմինարիայում

Նախատեսվում է, որ դուք ուսումնական տարվա ընթացքում դասերի ժամանակ շաբաթական մոտավորապես 30 րոպե կծախսեք Վարդապետության սերտման վրա: 10 ուսումնական փորձերից յուրաքանչյուրին հատկացվող շաբաթների քանակը կփոփոխվի՝ կախված վարդապետական հայտարարությունների և վարդապետության սերտման հատվածների քանակից, որոնք պետք է շեշտվեն և ուսուցանվեն այդ վարդապետական թեմայի համար: Որոշ թեմաներ հնարավոր կլինի ամփոփել երկու շաբաթվա ընթացքում, մինչդեռ մյուսները կպահանջեն լրացուցիչ շաբաթներ (ստորև տես «Նոր Կտակարանի վարդապետության սերտման ուսուցման ուղեցույցը»):

Վարդապետության սերտման ուսումնական փորձերից յուրաքանչյուրի «Հասկանալ վարդապետությունը» մասը բաժանված է ուսուցման վարժությունների (մասերի), որոնցից յուրաքանչյուրը հիմնականում հնարավոր է կատարել 5-10 րոպեում: Սա թույլ է տալիս ավելի ազատ տնօրինել դասաժամը Վարդապետության սերտման համար: Օրինակ, մի օր դուք կարող եք ծրագրել դասի ժամանակ ամփոփել մեկ կամ երկու ուսումնական վարժություններ, մինչդեռ մի ուրիշ օր ձեզ անհրաժեշտ կլինի ողջ դասաժամը, որպեսզի պատշաճ ձևով ամփոփեք սուրբ գրության հատվածը՝ ժամանակ չթողնելով Վարդապետության սերտման համար: Որոշ ուսումնական վարժություններ պահանջում են ավելի շատ ժամանակ, ուստի դուք ցանկանում եք անել դրանք ավելի հարմար ուսումնական օր (տես «Ուսումնական ուղեցույց ամենօրյա ուսուցիչների համար» և «Առաջարկներ հարմարվող օրերի համար» ուսուցչի ձեռնարկի ցուցիչում):

Ի լրումն սուրբ գրությունների հիմնական հատվածները թեմաներով գտնելուն՝ որպես Վարդապետության սերտման մի մասի, դուք պետք է շեշտեք այդ նույն հատվածները, երբ հանդիպում եք դրանց ուսանողների հետ սուրբ գրությունների հաջորդական ուսումնասիրության ժամանակ: Դա կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ յուրաքանչյուր հատվածի համատեքստն ու բովանդակությունը, ինչպես նաև կմեծացնի յուրաքանչյուր հատվածում ուսուցանվող ճշմարտությունների կարևորությունը:

Ամենօրյա սեմինարիայում Վարդապետության սերտումը հենվում և փոխարինվում է սուրբ գրությունների սերտման ծրագրով: Վարդապետության սերտման այն հատվածների համար, որոնք նախապես ներկայացվել են որպես սուրբ գրությունների սերտման հատվածներ, *Նոր Կտակարանի սեմինարիայի ուսուցչի ձեռնարկը* պարունակում է առաջարկներ և ուսումնական վարժություններ, որոնք

կօգնեն ձեզ համապատասխան շեշտադրում կատարել հատվածի վրա՝ ուսանողների հետ սուրբ գրությունների ձեր հաջորդական ուսումնասիրության ժամանակ: Երբ վարդապետության սերտման հատվածները նոր են, ուսուցչի ձեռնարկը չի ներկայացնի նմանատիպ հատվածներ. ձեզ համար կարևոր կլինի արդյունավետ և պատշաճ կերպով շեշտադրել հատվածները՝ որպես սուրբ գրությունների հաջորդական ուսումնասիրության մի մաս:

Նշում. Սուրբ գրությունների որոշ հատվածներ ներկայացված են *Նոր Կտակարանի սեմինարիայի ուսուցչի ձեռնարկում* որպես սուրբ գրությունների սերտման հատվածներ, սակայն դրանք վարդապետության սերտման հատվածներ չեն: Այդ հատվածներն այլևս չպիտի շեշտվեն համաձայն ձեռնարկի սուրբ գրությունների սերտման հրահանգների, սակայն դրանք պետք է ամփոփվեն սուրբ գրությունների հաջորդական ուսումնասիրության ընթացքում:

Նոր Կտակարանի վարդապետության սերտման ուսումնական ուղեցույց

Նոր Կտակարանի 10 ուսուցման փորձերից յուրաքանչյուրին հատկացվող շաբաթների քանակը կփոփոխվի՝ կախված վարդապետական կետերի և սուրբ գրությունների հատվածների քանակից, որոնք պետք է ուսուցանվեն վարդապետական թեմայի համար: Վարդապետությունների սերտման համար պետք է օգտագործվի շաբաթական մոտ 30 րոպե՝ օգտագործելով հետևյալ ուսումնական վարժությունները.

- Հասկանալ վարդապետության առանձին մասերը
- Կիրառել վարժությունները
- Վարդապետությունների սերտման կրկնության վարժություններ

Օրինակ, ստորև տրված ուսումնական ուղեցույցում Աստվածազգի հետ կապված Վարդապետության սերտման վարժություններին հատկացված է երկու շաբաթ: Առաջին շաբաթվա երկուշաբթի օրը դուք կարող եք անել «Հասկանալ վարդապետությունը» բաժնի առաջին մասը: Երեքշաբթի օրը դուք կարող եք անել երկրորդ և երրորդ մասերը, իսկ չորեքշաբթի օրը դուք կարող եք ընտրությամբ կատարել երեքից հինգ րոպեանոց սերտման վարժություն, որը դուք եք նախագծել կամ ընտրեք *Նոր Կտակարանի սեմինարիայի ուսուցչի ձեռնարկի* ցուցիչում տրված աղբյուրներից: Հինգշաբթի օրը դուք կարող եք ընտրել չկատարել Վարդապետության սերտման վարժություն, քանի որ ձեզ անհրաժեշտ է ամբողջ դասաժամը, որպեսզի պատշաճ կերպով ամփոփեք սուրբ գրության հատվածը, իսկ ուրբաթ օրը դուք կարող եք կատարել «Հասկանալ վարդապետությունը» բաժնի չորրորդ մասը: Երկրորդ շաբաթ դուք կարող եք կատարել ուսուցչի ընտրած մեկ լրացուցիչ սերտման վարժություն, կիրառման վարժություն և «Վարդապետության սերտման կրկնություն» վարժություն:

Հաջորդ շաբաթվա համար *Նոր Կտակարանի սեմինարիայի ուսուցչի ձեռնարկի* ուսումնական ծրագիրը, ինչպես նաև *Վարդապետության սերտման Նոր Կտակարանի ուսուցչի նյութերում* պարունակվող Վարդապետության

սերտման ուսումնական վարժությունները կրկնելը կօգնեն ձեզ ծրագրել և դասի ընթացքում ժամանակ հատկացնել Վարդապետության սերտմանը: Դուք կարող եք ամփոփ ներկայացնել դասի որոշ մասերը, որպեսզի ժամանակ հատկացնեք Վարդապետության սերտման ուսումնական վարժություններին և կիրառման վարժություններին:

Հետևյալ ուսումնական ուղեցույցը հիմնված է վարդապետական կետերն ամփոփելու վրա ըստ այն հերթականության, որով դրանք հայտնվում են *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթում:* Այնուամենայնիվ, մինչ «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» ուսուցման փորձն առաջինն է ուսուցանվում, այլ վարդապետական թեմաները կարող են ուսուցանվել ցանկացած կարգով: Մտածեք հետևյալ երկու մոտեցումների մասին.

- Ամփոփեք վարդապետական թեմաներն այնպես, ինչպես դրանք հայտնվում են *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթում* (սկսած «Աստվածագլխից» մինչև «Պատվիրանները»):
- Հնարավորինս համատեղեք ուսանողների ուսումնասիրության վարդապետական թեմաներն այն թեմաների հետ, որոնք նրանք կուսումնասիրեն իրենց կիրակնօրյա ժողովներում:

Շաբաթ	Վարդապետական թեմա
1	Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ
2	
3	
4	
5	Աստվածագլուխ
6	
7	Փրկության ծրագիրը
8	
9	
10	
11	
12	
13	Քավություն
14	
15	
16	
17	Վերականգնում
18	

Շաբաթ	Վարդապետական թեմա
19	
20	Մարգարեներ և հայտնություն
21	
22	
23	
24	Քահանայություն և քահանայության բանալիներ
25	
26	Արարողություններ և ուխտեր
27	
28	Ամուսնություն և ընտանիք
29	
30	Պատվիրաններ
31	
32	

Վարդապետության սերտումն առցանց սեմինարիայում

Վարդապետությունները սերտելու ուսումնական վարժությունները կներառվեն սեմինարիայի առցանց դասերում: Եթե դուք ուսուցանում եք առցանց սեմինարիայի դաս, օգտակար կլինի վերանայել «Վարդապետության սերտում ամենօրյա սեմինարիայում» թեման, որը կօգնի ձեզ հասկանալ կարևոր սկզբունքներ և սովորույթներ, որոնք կարող են հարմարեցվել և կիրառվել սեմինարիայի առցանց միջավայրում:

Վարդապետության սերտումը տնային ուսուցման սեմինարիայում

Այս դեպքում նյութերը, որոնք տնային ուսուցման ուսուցիչները և ուսանողներն ունեցել են, չեն թարմացվել՝ ներառելու Վարդապետության սերտման համատեքստը: Ուստի, ուսուցիչները և ուսանողները պետք է շարունակեն օգտագործել ներկայիս տնային ուսուցման նյութերը և ներառեն սուրբ գրությունների սերտման վարժությունները: Մինչև տնային ուսուցման նյութերի թարմացումը ուսուցիչներին խրախուսվում է ուսանողներին տրամադրել *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի* օրինակ և խրախուսել նրանց ինքնուրույն ուսումնասիրել այն և վարդապետության սերտման սուրբ գրությունների հատվածները:

Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ

Մաս 1 (40 րոպե)

Նշում. Մաս 1-ը և 2-ը կարող են ուսուցանվել երկու 40 րոպեանոց դասերի ընթացքում կամ կարող են միասին ուսուցանվել 80 րոպեանոց դասի ընթացքում:

Հավերժական ճշմարտության որոնումը

Գրատախտակին գրեք *Ճշմարտություն* բառը և ուսանողներին տվեք հետևյալ հարցը.

- Ի՞նչ դժվարություններ կարող են առաջանալ ճշմարտությունը բացահայտելիս կամ սովորելիս:

Մի քանի ուսանողների պատասխանները լսելուց հետո գրատախտակին գրեք հետևյալ հարցը. *Ինչպե՞ս ես կարող եմ սովորել և իմանալ ճշմարտությունը:*

Բացատրեք, որ Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը խոսել է ճշմարտությունը սովորելու հետ կապված դժվարությունների մասին, կիսվելով մի հին առակով, որը կոչվում է «Կույրերը և փիղը»:

Կարող եք ցուցադրել Նախագահ Ուխդորֆի հետևյալ հայտարարությունը կամ յուրաքանչյուր ուսանողի տրամադրել մեկական օրինակ: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հայտարարությունը: Դասարանին հորդորեք հետևել նրան, ուշադրություն դարձնելով, թե ինչպես է այս առակը ներկայացնում որոշ խնդիրներ, որոնց մենք հանդիպում ենք ճշմարտությունը փնտրելիս:

«Ավելի քան հարյուր տարի առաջ ամերիկացի մի պոետ բանաստեղծության տեսքով ներկայացրեց մի հին առակ: Ներկայացնում եմ ձեզ առաջին տունը.

Ինդոստանից վեցը մարդ
Սովորելու շատ հակված,
Գնացին փիղ տեսնելու,
(Թեև բոլորն էլ կույր էին),
Որ յուրաքանչյուրն էլ զննման միջոցով
Կարողանար գոհացնել իր մտքին:

Բանաստեղծության մեջ վեց ճամփորդներից յուրաքանչյուրը բռնում է փղի տարբեր մասերը և ուրիշներին նկարագրում է իր բացահայտումը:

Նրանցից մեկը գտնում է փղի ոտքը և նկարագրում այն որպես կլոր ու կոպիտ ծառի նման մի բան: Մեկ ուրիշը շոշափում է ժանիքը և նկարագրում փղին որպես նիզակ: Երրորդը բռնում է պոչից ու պնդում, որ փիղը նման է պարանի: Չորրորդը բացահայտում է կնճիթը և պնդում, որ փիղը նման է մեծ օձի:

Նրանցից յուրաքանչյուրը տալիս է ճիշտ նկարագրություն:

Եվ քանի որ ճշմարտությունը բացահայտում են սեփական փորձով, յուրաքանչյուրն էլ պնդում է, որ նա գիտի այն, ինչը գիտի:

Սիա բանաստեղծության վերջաբանը.

Ուստի, Ինդոստանի այս մարդիկ,
Բարձրաձայն ու երկար վիճեցին:
Յուրաքանչյուրը պնդելով իր կարծիքը
Հաստատակամ ու վստահ,
Չնայած յուրաքանչյուրն էլ մասամբ ճիշտ էր,
Սակայն բոլորն էլ սխալ էին:

[John Godfrey Saxe, The Poems of John Godfrey Saxe *(1873), 135–36, books.google.com]»:*

(«Ի՞նչ է ճշմարտությունը» [Church Educational System devotional, Jan. 13, 2013], lds.org/broadcasts:)

- Ինչպե՞ս է այս առակը լուսաբանում ճշմարտությունը բացահայտելու հետ կապված որոշ դժվարությունները:
- Ուրիշ ի՞նչ դժվարություններ կարող են առաջ գալ ճշմարտությունը բացահայտելու գործընթացում:
- Ի՞նչը կարող էր օգնել կույրերին ավելի ճիշտ պատկերացում կազմել փղի մասին: (Օրինակ՝ օգնություն ընդունել մեկի կողմից, ով կարողանում է տեսնել փղին ամբողջությամբ:)

Աստված հավերժական ճշմարտության աղբյուրն է

Բացատրեք, որ սեմինարիայում ունեցած իրենց փորձառությունների ընթացքում ուսանողները բազմիցս հնարավորություն կունենան հարստացնելու իրենց գիտելիքները հավերժական ճշմարտության մասին: Որպեսզի օգնենք ուսանողներին արդյունավետ կերպով անել դա, ներկայացնում ենք Վարդապետությունների սերտում կոչվող փորձը: Այն ներառում է սկզբունքները սովորելու և կիրառելու ձգտում՝ սուրբ գրությունների վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու և Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևորագույն վարդապետությունների վերաբերյալ ավելի խորը հասկացողություն զարգացնելու համար:

Ուսանողներին տվեք *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթուղթը* և խնդրեք նրանց բացել «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժինը: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ առաջին պարբերությունը՝ փնտրելով հավերժական ճշմարտության աղբյուրը:

Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով: Կարող եք առաջարկել նրանց նշել հետևյալ վարդապետությունը. **Աստված գիտի բոլոր բաները և ամեն ճշմարտության աղբյուրն է:**

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այս վարդապետությունը, հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 4.9 հատվածը: Հանձնարարեք դասարանի անդամներին հետևել նրան և ուշադրություն դարձնել, թե ինչպես է այս հատվածն օգնում մեզ

հասկանալ, թե ինչու մենք կարող ենք վստահել Աստծուն որպես ամեն ճշմարտության աղբյուրի:

- Այս հատվածի ո՞ր բառերը կամ արտահայտություններն են նկարագրում, թե ինչու է Աստված ճշմարտության միակ վստահելի աղբյուրը:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ապավինել Աստծուն որպես ամեն ճշմարտության աղբյուրի: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ ճշմարտությունը ձեռք բերելու առաջին քայլերից մեկն է իմանալ, թե որ կողմը դառնալ:)

Ինչպես ձեռք բերել հոգևոր գիտելիքներ

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի առաջին պարբերության վերջին նախադասությունը և երկրորդ պարբերությունն ամբողջությամբ, որը գտնվում է *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթում:* Դասարանին խնդրեք հետևել՝ պարզելով, թե մենք ինչ կարող ենք անել, որպեսզի հրավիրենք Աստծուն հայտնել մեզ հոգևոր ճշմարտությունը:

Խնդրեք ուսանողներին հաղորդել իրենց գտածը: Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունն այն մասին, թե մենք ինչ պետք է անենք հոգևոր ճշմարտություն ձեռք բերելու համար, դասարանը բաժանեք չորս խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք ուսումնասիրել վարդապետությունների սերտման հետևյալ հատվածներից կամ հատվածների խմբերից մեկը.

- Մորոնի 10.4–5
- Հովհաննես 7.17
- Հակոբոս 1.5–6, 2 Նեփի 32.8–9
- Բ Տիմոթեոս 3.15–16, 2 Նեփի 32.3

Բացատրեք, որ նրանց կտրվի հինգ րոպե՝ հանձնարարված հատվածները խմբով կարդալու և հետևյալ հարցերի միջոցով իրենց կարդացածը քննարկելու համար: (Կարող եք գրել այս հարցերը գրատախտակին կամ պատրաստել թերթիկների տեսքով:)

1. Հոգևոր ճշմարտություն փնտրելու մասին ի՞նչ սկզբունք է ուսուցանվում այս հատվածներում:
2. Ինչպե՞ս են այդ հատվածներն օգնում ձեզ ավելի լավ հասկանալ, թե ինչպես դուք կարող եք փնտրել հոգևոր ճշմարտություն:
3. Ի՞նչ փորձառություններ եք ունեցել հոգևոր ճշմարտություն ձեռք բերելու օրինաչափության այս մասի հետ կապված:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո յուրաքանչյուր խմբից որևէ անդամի հրավիրեք դասարանի հետ կիսվել իրենց քննարկումներով: Համոզվեք, որ խմբերից յուրաքանչյուրը զեկուցում է իր գտած նյութերի մասին, որոնք ընդգրկում են նաև այն, թե հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու գործընթացի որ մասն է ուսուցանված իրենց հատվածներում:

Յուրաքանչյուր խմբի զեկույցը լսելուց հետո դուք կարող եք խնդրել ուսանողներին կիսվել լրացուցիչ մտքերով կամ փորձառությամբ, որոնք կապված են հոգևոր ճշմարտություն ձեռք բերելու հետ: Ապա մտածեք հետևյալ հարցը տալու շուրջ.

- Ինչպե՞ս են իրար հետ կապված ճշմարտությունը փնտրելու այս ուղիներից յուրաքանչյուրը, մինչ օգնում են մեզ ձեռք բերել հոգևոր գիտելիքներ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը: Դասարանին հորդորեք լսել, թե ըստ Երեց Սքոթի, ինչ էր անհրաժեշտ հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու համար:

«Մեծ արժեք ունեցող գիտելիքներ ձեռք բերելը պահանջում է արտակարգ անձնական ջանքեր: Սա հատկապես ճշմարիտ է այն դեպքում, երբ մենք ցանկանում ենք ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» (”Acquiring Spiritual Knowledge,” *Ensign*, Nov. 1993, 87):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերն ակնկալում մեր իսկ ջանքերը՝ նախքան մենք կկարողանանք ձեռք բերել հոգևոր գիտելիքներ:
- Ելնելով ձեր փորձառությունից, ինչու են ձեր ջանքերն արժանի հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու համար, ինչպիսին են մեր Երկնային Հոր, Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Նրանց ուսմունքների ճշմարտացիության մասին վկայությունը:

Վկայեք, որ հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ են մեր լավագույն ջանքերը: Երկնային Հայրը պատրաստ է ուսուցանել մեզ, սակայն մենք էլ պետք է հոժարակամ լինենք անելու մեր մասը:

Հարցեր տալը և պատասխաններ փնտրելը ճշմարտությունը սովորելու համար մեր գործադրած ջանքերի կարևոր մասն են կազմում

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի երրորդ պարբերությունը *Վարդապետության սերմման հիմնարար փաստաթղթից:* Դասարանին հանձնարարեք հետևել՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ է ուսուցանում այս պարբերությունը հարցեր տալու կարևորության մասին, երբ ջանում ենք ձեռք բերել հոգևոր գիտելիքներ:

Հանձնարարեք ուսանողներին զեկուցել իրենց գտած նյութի մասին: Ապա գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Հարցեր տալը և ջանասիրաբար պատասխաններ փնտրելը ճշմարտությունը սովորելու համար մեր գործադրած ջանքերի կարևոր մասն են կազմում:**

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ջանասիրաբար պատասխաններ փնտրել հարցերին, որոնք առաջ են գալիս ճշմարտությունը սովորելու ընթացքում:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու վերաբերյալ այս տեսակետի կարևորությունը, հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ խոսքերը. Դասարանին հորդորեք լսել, թե ինչ էր ուսուցանում Նախագահ Ուխդորֆը ճիշտ հարցեր տալու մասին: (Դուք կարող եք ուսանողներին տալ այդ խոսքերի մեկական օրինակ:)

«Երբ հարցը վերաբերում է հոգևոր ճշմարտությանը, մենք ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ ճիշտ ուղու վրա ենք:

Եղանակներից մեկը ճիշտ հարցադրումներ անելն է՝ այնպիսիք, որոնք կօգնեն մեզ մտածել մեր առաջընթացի մասին և գնահատել, թե ինչպես են գործերն առաջ գնում: Այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

«Արդյո՞ք իմ կյանքն իմաստ ունի»:

«Հավատո՞ւմ եմ արդյոք Աստծուն»:

«Հավատո՞ւմ եմ արդյոք, որ Աստված ճանաչում և սիրում է ինձ»:

«Հավատո՞ւմ եմ արդյոք, որ Աստված լսում և պատասխանում է իմ աղոթքներին»:

«Իսկապե՞ս ես երջանիկ եմ»:

«Արդյո՞ք իմ ջանքերը հանգեցնում են կյանքի ամենաբարձր հոգևոր նպատակներին և արժեքներին»:

Կյանքի նպատակին վերաբերող այդպիսի լուրջ հարցերը աշխարհի բազմաթիվ անհատների և ընտանիքների առաջնորդել են դեպի ճշմարտության որոնումները: Հաճախ այդ որոնումներն առաջնորդել են նրանց դեպի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին և վերականգնված ավետարանը» («Ավետարանը հրաշալիորեն գործում է»:*Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2015, 20-21):

- Նախագահ Ուխդորֆի այս հայտարարությունն ինչպե՞ս է օգնում մեզ ավելի լավ հասկանալ ճիշտ հարցեր տալու կարևորությունը:

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք կարող են օրինակներ մտաբերել սուրբ գրություններից, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են հարցեր տալը և ջանասիրաբար պատասխաններ փնտրելն առաջնորդել անհատներին ձեռք բերել հոգևոր գիտելիքներ: (Հնարավոր օրինակներ. Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.10–20, Ենովս 1.1–8, Վարդապետություն և Ուխտեր 138.1–11):

Նշեք հետևյալ սկզբունքը, որը գտնվում է «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի երրորդ պարբերության վերջում: **Հարցեր տալիս և պատասխաններ փնտրելիս մեր ունեցած վերաբերմունքը և նպատակը մեծապես կազդեն Սուրբ Հոգու միջոցով սովորելու մեր ունակության վրա:** Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այդ սկզբունքը *Վարդապետության սերման հիմնարար փաստաթղթի* իրենց օրինակի վրա:

Որպեսզի ցույց տաք անկեղծ հարցերի և մեկի վարքագիծն արդարացնելու, քննադատելու կամ մեկին ծուղակը գցելու համար տրվող հարցերի միջև եղած տարբերությունը, հրավիրեք ուսանողներին աշխատել զույգերով, մինչ նրանք կհակադրեն Զիզրոմի տված առաջին հարցերն այն հարցերի հետ, որոնք նա տվեց Ալմայի և Ամուղեկի

վկայությունները լսելուց հետո: Զուգընկերներից մեկին հանձնարարեք լուռ ուսումնասիրել Ալմա 10.31–32, 11.21 հատվածները, իսկ մյուսին հանձնարարեք լուռ ուսումնասիրել Ալմա 12.8-ը: Հրավիրեք ուսանողներին բացատրել իրենց զուգընկերներին, թե Զիզրոմի հարցերն ուսումնասիրելով, ինչ սովորեցին անկեղծության և հնարավոր դրդապատճառների մասին: Երբ ուսանողներն իրենց զուգընկերների հետ քննարկեն իրենց հանձնարարված հատվածները, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ տարբեր դրդապատճառներ ու նպատակներ էին հետապնդում Զիզրոմի տված առաջին հարցերը և այն հարցերը, որոնք նա տվեց Ալմայի և Ամուղեկի վկայությունները լսելուց հետո:
- Համաձայն Ալմա 12.8-ի, ինչ ճշմարտություն էր Զիզրոմը փնտրում Ալմայի և Ամուղեկի վկայությունները լսելուց հետո: (Ծեշտեք, որ Ալմայի և Ամուղեկի վկայությունները լսելուց հետո Զիզրոմի մոտ շարունակեցին հարցեր առաջ գալ, սակայն փոխվեց այդ հարցերի էությունը: Զիզրոմը «սկսեց հարցաքննել … ջանասիրաբար, որպեսզի կարողանար իմանալ ավելին Աստծո արքայության վերաբերյալ»:)

Բացատրեք, որ Ալմա 12-13 գլուխներում ուսուցանված հրաշալի վարդապետության մեծ մասը տրվեց հարցերի արդյունքում: Այդ հարցերն ու պատասխաններն ի վերջո օգնեցին Զիզրոմին դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը (տես Ալմա 14.6, 15.3–12):

Կարող եք նաև վկայել անկեղծ հարցեր տալու և ջանասիրաբար պատասխաններ փնտրելու կարևորության մասին: Կիսվեք, թե ինչպես եք իմացել, որ Տերը կպատասխանի մեր անկեղծ հարցերին:

Մաս 2 (40 րոպե)

Պատասխանել վարդապետական կամ պատմական հարցերին

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Երիտասարդները զարմանում են, թե «ինչո՞ւ» են մեզ պատվիրում *անել* որոշ բաներ և ինչո՞ւ են պատվիրում *չանել* այլ բաներ» ("The Great Plan of Happiness" [address to Church Educational System religious educators, Aug. 10, 1993], si.lds.org):

Դուք երբևէ խորհե՞լ եք, թե ինչու է Աստված պատվիրել մեզ անել որոշ բաներ և չանել ուրիշ բաներ: Օրինակ, ոմանք կարող են զարմանալ, թե ինչու է Աստված պատվիրել մեզ սուրբ պահել Հանգստյան օրը կամ ինչու է Նա պատվիրել, որ սեռական հարաբերությունները թույլատրելի են միայն այն տղամարդու և կնոջ միջև, ովքեր օրինական ամուսնացած են: Ծեշտեք, որ դասի այս մասը, որը վերաբերում է հոգևոր գիտելիքներ ձեռք բերելուն, նպատակ ունի օգնել ուսանողներին սովորել սկզբունքներ, որոնք կարող են առաջնորդել նրանց, երբ նրանք հարցեր ունենան կամ

երբ ուրիշներն իրենց առաջադրեն հարցեր վարդապետության, սկզբունքների և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պատմության վերաբերյալ:

Հիշեցրեք ուսանողներին ճշմարտության աղբյուրի և հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու վերաբերյալ սովորած վարդապետության մասին. Աստված գիտի բոլոր բաները և ամեն ճշմարտության աղբյուրն է: Բացատրեք, որ այս ճշմարտությունը հիշելն օգտակար է, երբ մենք հարցեր ունենք Եկեղեցու վերաբերյալ, որոնք կարծես թե դժվար է հասկանալ:

Ցուցադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքները.

- *Գործեք հավատքով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Զգուշ մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Բացատրեք, որ այս սկզբունքները կարող են առաջնորդել մեզ, երբ ձգտում ենք սովորել և հասկանալ հավերժական ճշմարտությունը և պարզաբանել հարցերն ու խնդիրները:

Գործեք հավատքով

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 1-ին սկզբունքը՝ «Գործեք հավատքով», որը գտնվում է *Վարդապետության սերման հիմնարար փաստաթղթի* «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնում: Հանձնարարեք նրանց փնտրել և նշել այն սկզբունքները, որոնք կօգնեն նրանց պատասխանել հարցերին, որոնք նրանք և ուրիշներն ունեն Եկեղեցու մասին:

Խնդրեք ուսանողներին զեկուցել իրենց գտած նյութի վերաբերյալ: Եթե նրանք չնշեն դա, շեշտեք հետևյալ սկզբունքը. **Մինչ մենք ձգտում ենք զարգացնել մեր հասկացողությունը և լուծել մտահոգությունները, կարևոր է, որ մենք ապավինենք այն վկայությանը, որն արդեն իսկ ունենք Հիսուս Քրիստոսի, Նրա ավետարանի Վերականգնման և Նրա կարգված մարգարեների ուսմունքների վերաբերյալ:**

- Ձեր կարծիքով, այս սկզբունքներն ինչպե՞ս կարող են օգնել մեզ, երբ անկեղծորեն հասկացողություն ենք փնտրում և պատասխաններ՝ դժվար հարցերին ու խնդիրներին:

Հրավիրեք ուսանողներին կիսվել օրինակներով, թե երբ է այդ սկզբունքներից որևէ մեկն օգնել իրենց, երբ խնդիր, մտահոգություն կամ հարց են ունեցել:

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը: Դասարանին խնդրեք լսել, թե ինչպե՞ս երիտասարդ կինը դժվար իրավիճակում գործեց հավատքով:

«Վերջերս, ես զրուցում էի Միացյալ Նահանգներից մի դափնի աղջկա հետ: Ես մեջբերում կանեմ նրա նամակից.

«Անցյալ տարի իմ ընկերներից ոմանք Facebook-ում սկսեցին գրել իրենց դիրքորոշումը ամուսնության վերաբերյալ: Շատերը կողմ էին համասեռ ամուսնությանը, և մի քանի ՎՕՍ երիտասարդներ նշել էին, որ հավանում են այդ գրառումները: Ես ոչ մի կարծիք չգրեցի:

Որոշեցի ավանդական ամուսնության մասին իմ համոզմունքը հայտնել խելամիտ ձևով:

Իմ անձնական տվյալների մեջ նկարիս տակ ես ավելացրեցի հետևյալ գրառումը. «Ես հավատում եմ տղամարդու և կնոջ միջև ամուսնությանը»: Գրեթե անմիջապես ես սկսեցի ստանալ հաղորդագրություններ: «Դու եսասեր ես»: «Դու քննադատող ես»: Նրանցից մեկն ինձ համեմատեց ստրկատիրոջ հետ: Եվ ես ստացա հետևյալ գրառումը իմ ընկերոջից, ով Եկեղեցու ամուր անդամ է. «Դու պետք է ժամանակին համընթաց քայլես: Ժամանակները փոխվում են, և դու նույնպես պետք է փոխվես»:

«Ես չսկսեցի վիճաբանել,- ասաց նա,- բայց և չհանեցի իմ գրառումը»:

Նա եզրափակում է. «Երբեմն, ինչպես Նախագահ Մոնսոնն է ասում, դու պետք է միայնակ կանգնես»: Հուսով եմ, որպես երիտասարդներ, մենք կկանգնենք միասին՝ հավատարիմ Աստծուն և Նրա ապրող մարգարեների ուսմունքներին» («Հոգևոր պտտահողմեր», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2014, 19–20):

- Ի՞նչ ուղիներով երիտասարդ կինը դժվար իրավիճակում գործեց հավատքով:
- Երբևէ հանդիպե՞լ եք նման քննադատության, երբ պաշտպանել եք այն, ինչին հավատում եք: Ինչպե՞ս եք դուք արձագանքել:

Հրավիրեք ուսանողներին կիսվել դասարանի հետ, թե ինչպես է իրենց իմացածից կառչելը և դժվարությունների հանդիպելիս ամուր կանգնելն օրհնել իրենց կյանքը և օգնել մեծացնել վկայությունները (տես Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Տեր, հավատում եմ», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2013, 94): Խրախուսեք ուսանողներին որոշում կայացնել միշտ հավատարիմ մնալ Հիսուս Քրիստոսի և Նրա մարգարեների ուսմունքների վերաբերյալ իրենց վկայությանը (տես Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը, Ղուկաս 14.28 [Ղուկաս 14.27, ծանոթագրություն *բ*]):

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից

Բացատրեք, որ Պողոս Առաքյալի ժամանակներում մարդիկ ունենում էին այնպիսի հարցեր ու մտահոգություններ, ինչպիսին այսօր ունենում ենք մենք: Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ Ա Կորնթացիս 2.5, 9–11 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե ըստ Պողոսի ուսմունքների, ինչ էր անհրաժեշտ հոգևոր ճշմարտությունը հասկանալու համար: Դուք կարող եք շեշտել ոգեշնչված փոփոխությունը, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթը արել է 11-րդ հատվածում (տես Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը, Ա Կորնթացիս 2.11 [Ա Կորնթացիս 2.11, ծանոթագրություն *գ*]):

Հանձնարարեք ուսանողներին ամփոփել, թե ըստ այս հատվածների մենք ինչպես կարող ենք հասկանալ հոգևոր ճշմարտությունը: Օգնեք նրանց հասկանալ, որ միայն Աստծո Հոգու շնորհիվ է, որ մենք կարող ենք իմանալ «Աստուծոյ խորքն էլ» (Ա Կորնթացիս 2.10), որը նշանակում է

իմանալ ճշմարտությունները, որոնք կարող են հասկացվել միայն հայտնության միջոցով:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի 2-րդ սկզբունքը՝ «Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից», որը գտնվում է *Վարդապետության սերման հիմնարար փաստաթղթում:* Հանձնարարեք դասարանի անդամներին հետևել նրան և ուշադրություն դարձնել, թե ինչպես կարող ենք փնտրել Հոգու օգնությունը և քննել հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:

Խնդրեք ուսանողներին ներկայացնել ճշմարտությունները, որոնք թվարկված են 2-րդ սկզբունքում, որոնք օգնում են նրանց հասկանալ, թե ինչպես լավագույնս քննել հարցերը, որոնք առաջանում են նրանց մեջ: Պատասխանները գրեք գրատախտակին: (Ուսանողների պատասխանները կարող են ներառել նմանատիպ սկզբունքներ. **Հավերժական տեսանկյուն ունենալը մեզ թույլ է տալիս վերանայել հարցերը և տեսնել գաղափարներն ըստ Տիրոջ սահմանած ճշմարտության չափանիշների, այլ ոչ թե ըստ աշխարհի ենթադրությունների: Մինչ մենք լիովին վստահում ենք մեր Երկնային Հորը և Նրա փրկության ծրագրին, մենք կարողանում ենք ավելի պարզ տեսնել խնդիրները:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե այս սկզբունքներն ինչպես կարող են օգնել մեզ, մինչ մենք խորհում ենք մեր ունեցած և ուրիշների տված հարցերի շուրջ, հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ հայտարարությունը: Խնդրեք դասարանի անդամներին ուշադրություն դարձնել, թե ինչու է կարևոր հաշվի առնել ենթադրություններն ու համոզմունքները, որոնց վրա հիմնված է հարցը: (Կարող եք յուրաքանչյուր ուսանողի տրամադրել հետևյալ հայտարարության մեկական օրինակ:)

«[Փրկության ծրագրի] և այլ ճշմարտությունների մեր իմացության շնորհիվ, որոնք Աստված է հայտնի դարձնում, մեր ենթադրությունները [կամ համոզմունքները] տարբեր են նրանցից, ովքեր չունեն մեր գիտելիքները: Արդյունքում, մենք տարբեր եզրահանգումների ենք գալիս բազմաթիվ կարևոր թեմաների շուրջ, որոնց մասին մարդիկ դատում են միայն մահկանացու կյանքի վերաբերյալ իրենց կարծիքով: …

… [Մենք] ավելի լավ է հաճախ բացահայտենք աշխարհիկ նախադրյալները կամ ենթադրություններն այն պնդումներում, որոնց [մենք] առճակատվում ենք [ուրիշների միջոցով] և ապա բացահայտենք տարբեր ենթադրությունները կամ նախադրյալները, որոնք առաջնորդում են Վերջին Օրերի Սրբերի մտածելակերպը: Սա համաձայնություն չի առաջացնի այն անձանց մոտ, ովքեր չեն կիսում մեր հավատքը, բայց այն կհեռացնի քննարկումը վիճաբանությունից այն եզրակացությունների վերաբերյալ՝ բացահայտելով անհամաձայնության իսկական աղբյուրը» (“As He Thinketh in His Heart” [evening with Elder Dallin H. Oaks, Feb. 8, 2013], broadcasts.lds.org):

- Ինչպե՞ս կարող են մեր համոզմունքները կամ ենթադրություններն ազդել մեր տված հարցերի և եզրակացությունների վրա, որոնց հանգում ենք: (Օգնեք ուսանողներին հասկանալ, որ այն մարդը, ով սկսում է աշխարհիկ ենթադրություններ անել, ամենայն հավանականությամբ աշխարհիկ եզրահանգումներ կկատարի: Այնուամենայնիվ, քանի որ մենք ցանկանում ենք հասկանալ հավերժական ճշմարտությունը, կարևոր է խորհել հարցերի շուրջ համաձայն Աստծո և Նրա փրկության ծագրի մասին մեր արդեն իսկ ունեցած գիտելիքի:)

Շեշտեք, որ Աստծո և Նրա փրկության ծրագրի վերաբերյալ մեր գիտելիքներն օգնում են մեզ հասկանալ պատվիրանների նպատակը, որոնք Նա տվել է մեզ: Ի տարբերություն դրա, նրանք, ովքեր չունեն մեր գիտելիքները Երկնային Հոր փրկության ծրագրի վերաբերյալ, ամենայն հավանականությամբ, այլ մոտեցում կունենան պատվիրանների վերաբերյալ:

Մարդու ենթադրությունների և հարցերի ու եզրահանգումների միջև եղած կապը լուսաբանելու համար գրատախտակին գրեք հետևյալ հարցը. *Ինչո՞ւ պետք է սիրառատ Աստված սահմանափակեր կամ զրկեր մեզ իրավունքներից, տալով մեզ պատվիրաններ, այլ ոչ թե տար մեզ ազատություն՝ անելու այն ամենը, ինչը մեզ երջանիկ է դարձնում:*

- Ի՞նչ ենթադրություններ կարող է ունենալ մարդը, երբ տալիս է այս հարցը:
- Ի՞նչ ճշմարտություններ մենք գիտենք Երկնային Հոր և մեզ համար նախատեսված Նրա ծրագրի մասին, որ օգնում են մեզ այս հարցին նայել Նրա տեսանկյունից:
- Այս հավերժական հեռանկարն ինչպե՞ս է փոխում մտահոգության վերաբերյալ մեր հասկացողությունը:

Հրավիրեք ուսանողներին նշել այլ հարցեր կամ խնդիրներ, որոնց հավերժական տեսանկյունից նայելը կարևոր է: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին: Ապա խնդրեք ուսանողներին բացատրել, թե հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից քննելու սկզբունքն ինչպես կարող է օգնել մեզ ավելի պարզ հասկանալ հարցերն ու խնդիրները, որոնք նրանք ներկայացրին և գնահատել դրանք ըստ ճշմարտության Տիրոջ չափանիշի: Որպես ձեր քննարկման մի մաս, խորհեք հետևողական հարցեր տալու մասին, ինչպես օրինակ.

- Վերականգնման, Ջոզեֆ Սմիթի աստվածային կոչման և Մորմոնի Գրքի ճշմարտացիության վերաբերյալ Սուրբ Հոգու զորությամբ հոգևոր վկայություն ունենալն ինչպե՞ս է օգնում ձեզ, երբ հարց է առաջ գալիս Եկեղեցու վերաբերյալ:
- Տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից, և ընտանիքն ամենակարևոր դերն ունի Նրա փրկության ծրագրում. այս գիտելիքն ինչպե՞ս է ազդում ձեր տեսակետի վրա, երբ հասարակությունն այլ կարծիքներ է հայտնում տղամարդու և կնոջ ամուսնության վերաբերյալ:

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես են իրենք կամ իրենց ծանոթները կարողացել ավելի լավ հասկանալ որևէ գաղափար, ուսմունք կամ հարց, երբ խորհել են դրա մասին՝ ելնելով հավերժական տեսանկյունից: Կարող եք նաև կիսվել ձեր անձնական փորձառությամբ:

Զգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով

Հիշեցրեք ուսանողներին այն բանաստեղծությունը, որ գրվել է «Կույրերը և փիղը» վերնագրով հին առակի հիման վրա, որը կարդացել են «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» ուսումնական ձեռնարկի առաջին մասում տրված Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի ելույթի մեջբերման մեջ: Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե ինչպես է այս բանաստեղծությունը լուսաբանում ճշմարտությունը բացահայտելու և հասկանալու դժվարությունը:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի 3-րդ սկզբունքը՝ «Զգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով», որը գտնվում է *Վարդապետության սերման հիմնարար փաստաթղթում:* Դասարանին խնդրեք հետևել՝ փնտրելով, թե Աստված մեզ ի՞նչ է տվել, որպեսզի օգնի մեզ բացահայտել և հասկանալ ճշմարտությունը: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այն, ինչ գտնում են:

- Աստված մեզ ի՞նչ է տվել, որպեսզի օգնի մեզ բացահայտել և հասկանալ ճշմարտությունը:
- Ի՞նչ օրհնություններ մենք կարող ենք ստանալ, եթե դառնանք դեպի ճշմարտության աղբյուրները, որոնք աստվածայնորեն նշանակված են Տիրոջ կողմից: (Այս քննարկման ժամանակ դուք կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն հետևյալ սկզբունքը. **Երբ մենք հետևում ենք Տիրոջ կողմից աստվածայնորեն նշանակած աղբյուրներին, մենք կարող ենք օրհնվել՝ ճիշտը սխալից տարբերելու հատկությամբ:**)
- Կույրերի և փղի մասին բանաստեղծությունն ինչպե՞ս է լուսաբանում պատասխանների և ուղղության համար դեպի աստվածայնորեն նշանակված աղբյուրները դառնալու անհրաժեշտությունը:

Շեշտեք 3-րդ սկզբունքի՝ «Զգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով», երկրորդ պարբերության առաջին նախադասությունը, որտեղ ասվում է.«Մենք կարող ենք սովորել ճշմարտությունը նաև այլ վստահելի աղբյուրներից»:

- Ինչպե՞ս մենք կարող ենք ճանաչել ճշմարտությունը, որը գտնվում է տեղեկությունների այլ վստահելի աղբյուրներում:
- Ինչո՞ւ է կարևոր տեղեկացված լինել տեղեկությունների անհուսալի աղբյուրների մասին:

Հրավիրեք ուսանողներին կիսվել օրինակներով, թե ինչպես են օրհնվել, երբ պատասխաններ գտնելու համար դարձել են դեպի աստվածային

աղբյուրները, երբ առաջ են եկել հարցեր կամ խնդիրներ: Պատրաստ եղեք կիսվելու ձեր անձնական փորձառությամբ:

Ուսանողներին ասեք (և, եթե հնարավոր է, ցուցադրեք նրանց) Եկեղեցու պաշտոնական վեբկայքը՝ mormonnewsroom.org, որտեղ Եկեղեցին պարզաբանում է Եկեղեցու հետ կապված հանրային հետաքրքրության տարբեր խնդիրների վերաբերյալ տեղեկությունները և ուղղում լրատվամիջոցներում տարածված մասնակի կամ սխալ տեղեկությունները: Ուսանողներին նաև ցույց տվեք Եկեղեցու Ավետարանական Թեմաների էջը. topics.lds.org: Ավետարանական Թեմաներում տրված նյութերը պարունակում են արժեքավոր և հավաստի տեղեկություններ պատմական և վարդապետական բարդ հարցերի շուրջ:

Բացատրեք, որ ուսումնական տարվա ընթացքում, ի լրումն Նոր Կտակարանի ուսմունքները հերթականությամբ ուսումնասիրելուն, նրանք նաև կուսումնասիրեն ինը վարդապետական թեմաներ *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթից* (որոնք համապատասխանում են երիտասարդների կիրակնօրյա ուսումնական ծրագրի թեմաների հետ) և յուրաքանչյուր թեմայի հետ կապված Նոր Կտակարանի վարդապետությունների սերտման հատվածներ: Յուրաքանչյուր թեման ուսումնասիրելիս նրանք կօգտագործեն հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ սկզբունքները, որոնք քննարկվել են տվյալ դասի ժամանակ, որպեսզի խորհեն իրական հարցերի, խնդիրների և անձամբ դրանք օգտագործելու հնարավորությունների շուրջ:

Կիսվեք ձեր վկայությամբ՝ բարդ հասկացությունների կամ հարցերի հանդիպելիս այս սկզբունքները կիրառելու կարևորության վերաբերյալ: Վստահեցրեք ուսանողներին, որ Տերը ցանկանում է ուսուցանել նրանց Իր Հոգու միջոցով: Երբ մենք հավատքով դառնանք դեպի Նա, Նա կտա մեզ պատասխաններ և ուղղություն կտա մեր կյանքին:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Խորհեք օգտագործել հետևյալ վարժությունը մեկ այլ դասի ժամանակ, որպեսզի օգնեք ուսանողներին կրկնել Նոր Կտակարանի վարդապետությունների սերտման հատվածները, որոնց անդրադարձել ենք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու վերաբերյալ այս ուսումնական փորձառության 1-ին և 2-րդ մասերում:

Դասից առաջ հետևյալ վարդապետությունների սերտման հատվածները գրեք գրատախտակին. *Հովհաննես 7.17, Ա Կորնթացիս 2.5, 9–11, Բ Տիմոթեոս 3.15–17, Հակոբոս 1.5–6:*

Թող ուսանողներն աշխատեն երկու կամ երեք հոգանոց խմբերով: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք գրատախտակին գրված վարդապետությունների սերտման հատվածներից մեկը: Հրահանգեք նրանց իրենց խմբերում միասին կարդալ հատվածը և գտնել այդտեղ ուսուցանված վարդապետությունը:

Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով: (Խորհեք այն նյութին անդրադառնալու մասին, որը նախապես գտել են այս ուսուցման

փորձի մեջ *Նոր Կտակարանի սեմինարիայի ուսուցչի ձեռնարկում,* որպեսզի տեսնեն օրինակներ, թե ինչպես կարելի է ձևակերպել այս սուրբ գրությունների ճշմարտությունները:)

Հաջորդը, խնդրեք ուսանողներին աշխատել իրենց խմբերում և հատվածից ընտրել մի քանի բառեր, որոնք կարող են օգտագործվել՝ ուսուցանված վարդապետությունը լավագույնս ներկայացնելու համար: Օրինակ, Հակոբոս 1.5–6-ում ուսանողները կարող են ընտրել հետևյալ բառերը. *պակաս, իմաստություն, խնդրել* և *Աստված:*

Սկսելով այն խմբից, որին հանձնարարված է Հովհաննես 7.17-ը, խմբի անդամներից մեկին հրավիրեք գրել իրենց ընտրած բառերը՝ գրատախտակին տրված հղման տակ և բացատրել, թե ինչու են նրանք ընտրել այդ բառերը: (Եթե նույն հղումը հանձնարարված է մեկից ավելի խմբերի, թող յուրաքանչյուր խմբի մի ուսանող գրատախտակին գրի իրենց բառերը: Եթե բառերը տարբեր են, օգնեք դասարանին համաձայնության գալ այդ հարցում:) Ամբողջ դասարանով կրկնեք սուրբ գրության հղումը և գրատախտակին գրված բառերը: Կրկնեք դա սուրբ գրությունների մնացած երեք հատվածների համար:

Հաջորդ մի քանի դասերի ժամանակ կրկնեք վարդապետությունների սերտման հատվածները և բառերը, որոնք ուսանողներն ընտրել էին դրանցից յուրաքանչյուրի համար:

Աստվածագլուխ

Նշում. Վարդապետության սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մի քանի դասերի կամ մեկ դասի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (35 րոպե)

Մաս 1 (10 րոպե)

Բացատրեք, որ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք օրհնված ենք Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու դերերի մասին հստակ հասկացողությամբ:

Դասարանի անդամերին բաժանեք երեք կամ չորս հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրամադրեք հետևյալ հրահանգների մեկական օրինակ և հրավիրեք նրանց կատարել վարժությունը հրահանգված ձևով.

> Գտեք 1-ին վարդապետական թեման՝ «Աստվածագլուխ», *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի* ձեր օրինակում: Հերթով բարձրաձայն կարդացեք այս թեմայի ներքո գտնվող պարբերությունները՝ գաղափարներ փնտրելով Աստվածագլխի մասին:
>
> Կարդալուց հետո յուրաքանչյուր խմբի անդամը թող պատասխանի հետևյալ հարցերից մեկին.
>
> - Ի՞նչ նոր բան սովորեցիք Աստվածագլխի կամ դրա անդամներից մեկի մասին:
> - Աստվածագլխի կամ դրա անդամներից մեկի վերաբերյալ ո՞ր վարդապետությունն է ըստ ձեզ հատկապես կարևոր հասկանալ: Ինչո՞ւ:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո մի քանի ուսանողների հրավիրեք զեկուցել դասարանին, թե իրենց խմբով ի՞նչ քննարկեցին:

Մաս 2 (5 րոպե)

Ուսանողներին խնդրեք բացել 1-ին վարդապետական թեման՝ «Աստվածագլուխ», *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթում:* Այնուհետև հարցրեք.

- Ո՞ր հատվածն է օգտագործված այն վարդապետությունն ուսուցանելու համար, որ Աստված մեր հոգիների Հայրն է: (Երրայեցիս 12.9:)

Ուսանողներին խնդրեք բացել Եբրայեցիս 12.9: Բացատրեք, որ այս հատվածը պարունակում է Պողոս Առաքյալի կողմից իր օրերի Եկեղեցու հրեա անդամներին հղված հրահանգ: Պողոսը փորձում էր օգնել Եկեղեցու անդամներին հասկանալ, թե ինչպես արձագանքել Աստծո խրատներին, ուղղումներին ու հրահանգներին (տես Եբրայեցիս 12.7, ծանոթագրություն *բ*):

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Եբրայեցիս 12.9 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել նրան, և գտնել այն տիտղոսը, որով Պողոսը դիմում է Աստծուն:

- Ի՞նչ տիտղոս օգտագործեց Պողոսը Աստծուն դիմելու համար:

Հրավիրեք ուսանողներին գրել հետևյալ ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում Եբրայեցիս 12.9-ի կողքին. **Աստված մեր հոգիների Հայրն է:** Քանի որ սա վարդապետության սերտման հատված է, դուք կարող եք առաջարկել, որ նրանք նշեն Եբրայեցիս 12.9 հատվածը տարբերակիչ ձևով, որպեսզի կարողանան հեշտությամբ գտնել այն:

Մաս 3 (10 րոպե)

Դասարանի հետ միասին բարձրաձայն կարդացեք Եբրայեցիս 12.9 հատվածը: Հանձնարարեք ուսանողներին նշել Աստծո մասին այն վարդապետությունը, որը մենք սովորում ենք այդ հատվածից:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այն վարդապետությունը, որ Աստված մեր հոգիների Հայրն է, հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ պարբերություններ հետևյալ հայտարարությունից, որը գտնվում է Ավետարանական թեմաներ բաժնում, տես LDS.org: (Հնարավորության դեպքում դուք կարող եք ուսանողներին ցույց տալ, թե ինչպես գտնել Ավետարանական թեմաները, որպեսզի նրանք իմանան, թե ինչպես ինքնուրույն գտնել այդ հայտարարությունը:)

> «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ուսուցանում է, որ բոլոր մարդկային էակները՝ տղամարդ և կին, երկնային ծնողների՝ Երկնային Հոր և Երկնային Մոր սիրելի հոգեղեն զավակներն են: …
>
> Վերջին Օրերի Սրբերը երկրպագում են Երկնային Հորը Քրիստոսի անունով և չեն աղոթում Երկնային Մորը: Սրանում նրանք հետևում են Հիսուս Քրիստոսի օրինակին, ով ուսուցանեց Իր աշակերտներին. «Միշտ աղոթեք Հորը՝ իմ անունով» [3 Նեփի 18.19–21]: Վերջին Օրերի Սրբերին ուսուցանում են աղոթել Երկնային Հորը, սակայն, ինչպես ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին. «Այն փաստը, որ մենք չենք աղոթում մեր Երկնային Մորը, ոչ մի կերպ չի նսեմացնում կամ հեղինակազրկում նրան» [“Daughters of God,” *Ensign,* Nov. 1991, 100]:
>
> Ինչպես ավետարանական շատ ճշմարտությունների դեպքում, մեր ներկայիս գիտելիքը Երկնային մոր մասին սահմանափակ է: Այնուամենայնիվ, մեզ տրվել է բավարար գիտելիք՝ այս վարդապետության սրբությունը գնահատելու և որպես երկնային ծնողների զավակներ՝ մեզ համար հաստատված աստվածային օրինաչափությունը հասկանալու համար» (Ավետարանական թեմաներ, «Երկնային Մայր», lds.org/topics):

- Ինչո՞ւ է օգտակար հասկանալը, որ մենք ունենք Երկնային Հայր և Մայր:

Մաս 4 (10 րոպե)

Որպեսզի կրկնեք Եբրայեցիս 12.9 հատվածը և այն վարդապետությունը, որ Աստված մեր հոգիների Հայրն է, յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք հետևյալ հրահանգների մեկական օրինակ և հրավիրեք նրանց կատարել վարժությունը.

> Կարդացեք և խորհեք Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ հայտարարության շուրջ.

«Դուք Աստծո զավակն եք: Նա ձեր հոգու Հայրն է: Հոգևոր առումով դուք ազնվածին եք՝ Երկնային Թագավորի ազգիցն եք: Ամրագրեք այդ ճշմարտությունը ձեր մտքում և կառչեք դրանից: Ինչևէ, ձեր մահկանացու ծագման շատ սերունդներ, անկախ այն բանից, թե ինչ ռասա կամ ժողովուրդ եք դուք ներկայացնում, ձեր հոգու հարուստ կենսագրությունը կարող է գրվել մեկ տողով: Դուք Աստծո զավակ եք» (“To Young Women and Men,” *Ensign,* May 1989, 54):

Ձեր ուսումնական օրագրում կամ դասարանային տետրում պատասխանեք հետևյալ հարցերին.

- Որտեղի՞ց գիտեք, որ դուք Աստծո զավակն եք:
- Աստված ձեր հոգու Հայրն է. այս գիտելիքն ինչպե՞ս է ազդում ձեր ինքնազնահատականի և ձեր կատարած ընտրությունների վրա:
- Աստված մեր հոգիների Հայրն է. այս գիտելիքն ինչպե՞ս պիտի ազդի այն եղանակի վրա, որով դուք տեսնում և վերաբերվում եք ուրիշներին:

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո հրավիրեք մեկ կամ երկու ուսանողների, ովքեր ցանկանում են, կիսվել իրենց գրածով:

Հաջորդ մի քանի դասերի սկզբում դուք կարող եք մի քանի րոպե տրամադրել, իհարկե որպես դասի հոգևոր միտք, որպեսզի այլ ուսանողներ ևս կիսվեն, թե ինչ են գրել այդ վարժության մեջ: Երբ անեք դա, հրավիրեք առաջին ուսանողին, ով կիսվում է, բարձրաձայն կարդալ Եբրայեցիս 12.9 հատվածը և ևս մեկ անգամ շեշտել այն վարդապետությունը, որ Աստված մեր հոգիների Հայրն է: Այս հատվածը և վարդապետությունը կրկնելը կարող է օգնել ուսանողներին հիշել այս ճշմարտությունը:

Կիրառել վարժությունները (12–15 րոպե)

Խնդրեք ուսանողներին բացել «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժինը *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթի* իրենց օրինակում: Կրկնեք երեք սկզբունքների իմաստները՝ հավատքով գործելը, հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից քննելը և մեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով մեծացնելու ձգտումը:

Դասարանը բաժանեք երկու կամ երեք ուսանողից բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրամադրեք հետևյալ հրահանգների մեկական օրինակ և հրավիրեք նրանց կատարել վարժությունը:

1. Բարձրաձայն կարդացեք հետևյալ սցենարը և խորհեք, թե արդյոք ունեցել եք այնպիսի զգացողություններ, ինչպիսին երիտասարդ կինն ուներ.

   Լիան որոշակի դժվարությունների է հանդիպում իր ընտանիքում և որոշ ընկերների հետ իր հարաբերություններում: Մի գիշեր նա ծնկի է իջնում աղոթելու, սակայն այդպես էլ չի սկսում աղոթքը: Խորը հիասթափության մեջ նա ինքն իրեն ասում է. «Ինչո՞ւ Աստված հոգ չի տանում իմ մասին»: Նա նստում է իր մահճակալին ու մտածում իր ունեցած դժվարությունների մասին՝ յուրաքանչյուրը դիտարկելով որպես Աստծո կողմից լքված լինելու փաստ:

Մի քանի օր անց երիտասարդների միջոցառման ժամանակ Երիտասարդ կանանց մի ղեկավար հարցնում է Լիային նրա որպիսության մասին: Լիան պատասխանում է. «Ոչ այնքան լավ: Կյանքը դժվար է հիմա»: Լիայի ղեկավարը շարունակում է հարցեր տալ, և Լիան ի վերջո կիսվում է իր զգացողություններով, որ կարծես թե Աստված չի հոգում իր մասին:

2. Խմբերով քննարկեք հետևյալ հարցը.
   - Եթե դուք լինեիք Լիայի ղեկավարը, ի՞նչ կանեիք, որ օգնեիք Լիային հավատքով գործել, հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից քննել և մեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով մեծացնելու ձգտում ունենալ:
3. Բարձրաձայն կարդացեք սցենարը.

   Լիայի ղեկավարն անկեղծ կարեկցանք է հայտնում և հարցնում. «Երբևէ եղե՞լ է ժամանակ, երբ դու զգացել ես, որ Աստված հոգ է տանում քեզ համար»:

   Լիան մի պահ մտածում և հիշում է մի շարք փորձառություններ, երբ Աստված պատասխանել էր իր աղոթքներին: Նա կիսվում է դրանցով իր ղեկավարի հետ: Նրա ղեկավարը պատասխանում է. «Շնորհակալություն, որ կիսվեցիր ինձ հետ այդ փորձառություններով: Ես գիտեմ, որ Աստված մեր Հայրն է և սիրում է մեզ: Եվ ես գիտեմ, որ Նա սիրում և հոգ է տանում քեզ համար: Սակայն երբեմն դժվար է զգալ Նրա սերը, եթե մենք եռանդունորեն չենք ձգտում մոտենալ Նրան: Վերջերս ի՞նչ եք արել Երկնային Հորը մոտենալու համար:

   «Ես սովորաբար ասում եմ իմ երեկոյան աղոթքները: Սակայն ես չեմ աղոթել Երկնային Հորը այն խնդիրների համար, որոնց միջով անցնում եմ»,- պատասխանում է Լիան:

   «Քանի որ դու Նրա դուստրն ես, Երկնային Հայրը ցանկանում է լսել քեզ: Արդյո՞ք դուք կաղոթես ու կկիսվես քո խնդիրներով ու հարցերով Նրա հետ»,- հարցնում է Լիայի ղեկավարը:

   «Այո»,- ասում է Լիան: Նա շարունակում է. «Շնորհակալություն: Ես ունեի այդ հիշեցման կարիքը»:
4. Խմբով քննարկեք հետևյալ հարցերը.
   - Ձեր կարծիքով, հավատքով գործելու Լիայի որոշումն ինչպե՞ս կօգնի նրան:
   - Դուք ի՞նչ գիտեք Աստծո մասին, որը կարող է օգնել ձեզ այն պահերին, երբ ձեզ կթվա, թե հեռացել եք Նրանից, կամ կխորհեք, թե արդյոք Նա հոգում է այն մասին, թե ինչի միջով եք դուք անցնում:

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո մի քանի ուսանողների հրավիրեք զեկուցել, թե ինչ քննարկեցին իրենց խմբում:

Վերջում կարող եք վկայել, որ Աստված մեր հոգիների Հայրն է, որ Նա սիրում և հոգ է տանում մեզանից յուրաքանչյուրի համար՝ որպես Իր զավակների: Հրավիրեք ուսանողներին միշտ հիշել, որ նրանք Աստծո զավակներն են:

Վարդապետության սերտման կրկնություն

Գրատախտակին գրեք Նոր Կտակարանի վարդապետության սերտման հատվածներից յուրաքանչյուրը, որոնք մինչ այժմ ուսանողները սովորել են ուսումնական այս ծրագրի ընթացքում: Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք վարդապետության սերտման տարբեր հատվածներ: Հանձնարարեք ուսանողներին թերթիկի վրա գրել մի սցենար կամ որևէ

իրավիճակի նկարագրություն, երբ կարող են կիրառվել իրենց հանձնարարված վարդապետության սերտման հատվածում տրված սկզբունքները և ճշմարտությունները:

Երբ ուսանողներն ավարտեն, նրանց գրած սցենարները հավաքեք: Բարձրաձայն կարդացեք սցենարներից մեկը և հրավիրեք ուսանողներին ներկայացնել վարդապետության սերտման հատված, որը կարող է օգտակար լինել այդ սցենարին լուծում տալու համար: Հետևողական եղեք և հրավիրեք նրանց բացատրել, թե իրենց նշած վարդապետության սերտման հատվածներում ուսուցանված ճշմարտություններն ինչպես կարող են կիրառվել այդ սցենարում: Կրկնեք վարժությունը՝ բարձրաձայն կարդալով այլ սցենարներ: Կարող եք նաև հաջորդ շաբաթվա ընթացքում որոշ սցենարներ ներկայացնել դասերի սկզբում կամ վերջում:

Փրկության ծրագիրը

Նշում. Վարդապետության սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մեկ կամ մի քանի դասերի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (60-70 րոպե)

Մաս 1 (10 րոպե)

Նշեք, որ աշխարհում շատ մարդիկ ճշգրիտ կամ լիարժեք գիտելիք չունեն Երկնային Հոր փրկության ծրագրի մասին: Այնուամենայնիվ, որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք օրհնված ենք սուրբ գրությունների գիտելիքով և մարգարեների ուսմունքներով, որոնք օգնում են մեզ հասկանալ Երկնային Հոր ծրագիրը:

Հրավիրեք ուսանողներին նկարել փրկության ծրագրի պատկերը, որը ներառում է նախաերկրային կյանքը, երկրային կյանքը և կյանքը՝ մահից հետո: Երբ կավարտեն, բաժանեք ուսանողներին զույգերի և խնդրեք կարդալ 2-րդ վարդապետական թեման՝ «Փրկության ծրագիրը», *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում*, փնտրելով լրացուցիչ մանրամասներ, որոնք կարող են ավելացնել իրենց նկարածին: Խնդրեք նրանց ներկայացնել զուգընկերոջը իրենց գտած լրացուցիչ մանրամասները, և թե ինչով են այդ մանրամասները նպաստում, որ ավելի լավ հասկանան Աստծո ծրագիրը:

Մաս 2 (10 րոպե)

Ուսանողներին խնդրեք աչքի անցկացնել 2-րդ վարդապետական թեման՝ «Փրկության ծրագիրը», *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում* և նշել վարդապետական պնդումները, որոնք ամրապնդվում են Նոր Կտակարանի հղումներով: Դրանք ներառում են հետևյալը.

- **Որպեսզի իրականացնենք այս ծրագիրը և դառնանք մեր Երկնային Հոր նման, մենք պետք է ճանաչենք Նրան և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և ճիշտ պատկերացում ունենանք Նրանց էության և հատկանիշների մասին** (տես Հովհաննես 17.3):
- **Մեր մարմինները սուրբ են և դրանք պետք է հարգենք՝ որպես մեր Երկնային Հորից ստացած պարգևներ** (տես Ա Կորնթացիս 6.19–20):
- **Յուրաքանչյուր ոք ի վերջո հնարավորություն կունենա սովորելու ավետարանի սկզբունքները և ստանալու արարողությունները և ուխտերը: Հավատարիմներից շատերը շարունակում են քարոզել ավետարանը հոգևոր բանտում գտնվողներին: Նրանք, ովքեր ընդունում են ավետարանը, ապաշխարում և ընդունում են փրկության արարողությունները, որոնք կատարվում են նրանց համար տաճարներում, կապրեն դրախտում մինչև Հարությունը** (տես Ա Պետրոս 4.6):

- **Երկրի վրա ծնված ցանկացած անձ հարություն կառնի, որովհետև Հիսուս Քրիստոսը հաղթահարել է մահը** (տես Ա Կորնթացիս 15.20–22):
- **Վերջին Դատաստանը տեղի կունենա Հարությունից հետո: Հիսուս Քրիստոսը կդատի յուրաքանչյուր անձի և կորոշի, թե ինչ հավերժական փառքի կարժանանա տվյալ անձը: Այդ դատաստանը կլինի յուրաքանչյուր անձի ցանկությունների և Աստծո պատվերներին հնազանդվելու հիման վրա** (տես Հայտնություն 20.12):
- **Կան փառքի երեք արքայություններ՝ սելեստիալ արքայություն, թերեստրիալ արքայություն և թելեստիալ արքայություն** (տես Ա Կորնթացիս 15.40–42):

Մաս 3 (20-25 րոպե)

Վերոնշյալ վարդապետական պնդումներից և վարդապետական սերտման հատվածներից ընտրեք մի քանիսը կամ բոլորը՝ հետևյալ վարժության ժամանակ օգտագործելու համար: Եթե վարժության ժամանակ նախընտրում եք օգտագործել պնդումներից մի քանիսը, ապա կրկնեք վարժությունը մնացած վարդապետական պնդումների և վարդապետական սերտման հատվածների համար հաջորդ օրերի ընթացքում:

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք պատասխանելու են մի ընկերոջ հարցերին փրկության ծրագրի վերաբերյալ: Ուսանողներին հանձնարարեք աշխատել զույգերով կամ փոքր խմբերով և ուսումնասիրել ձեր ընտրած վարդապետական սերտման հատվածները: Գրատախտակին ուսանողների համար գրեք հետևյալ հարցերը, որպեսզի քննարկեն յուրաքանչյուր հատվածն ուսումնասիրելու ժամանակ.

- *Ինչպե՞ս կօգտագործեք վարդապետական սերտման հատվածները, որպեսզի բացատրեք վարդապետական պնդումը Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում:*
- *Ի՞նչ կերպ կարող են սուրբ գրություններն ու վարդապետությունը օգտակար լինել մեկին, ով շատ բան չգիտի Երկնային Հոր փրկության ծրագրի մասին:*
- *Ինչպե՞ս կարող են սերտման հատվածների վարդապետությունը և ուսմունքները ազդել այն բանի վրա, թե ինչպիսի կյանքով եք դուք ապրում այսօր:*

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո հրավիրեք ուսանողներից մի քանիսին բարձրաձայնել իրենց պատասխանները դասարանի համար: Որպեսզի խթանեք քննարկումն ու ըմբռնումը, կարող եք լրացուցիչ հարցեր տալ, ինչպես օրինակ՝

- Ինչո՞ւ է կարևոր, որ մենք և աշխարհի մյուս մարդիկ հասկանան այս վարդապետությունները:
- Երկնային Հոր ծրագրի հետ կապված ի՞նչ հարցերի են պատասխանում այս վարդապետությունները:

Մաս 4 (20-25 րոպե)

Հետևյալ հարցերից յուրաքանչյուրը գրեք առանձին քարտերի կամ թղթիկների վրա և քարտերը երեսնիվայր դրեք դասասեղանին:

- *Եթե փրկվելու համար անձը պետք է ընդունի Հիսուս Քրիստոսի ավետարանը, ապա ի՞նչ է պատահում այն մարդկանց, ովքեր մահացել են առանց երբևէ ավետարանի մասին իմանալու:*
- *Ո՞վ է հարություն առնելու:*
- *Ինչո՞ւ ես պետք է երախտապարտ լինեմ իմ մարմնի համար, նույնիսկ եթե այն խնդիրներով լինի:*
- *Ես լսել եմ, որ բոլոր մարդիկ ի վերջո գնալու են կամ երկինք, կամ դժոխք: Դա ճի՞շտ է:*
- *Ո՞րն է ամենակարևոր գիտելիքը, որը ես կարող եմ ստանալ:*
- *Ինչպե՞ս են իմ ընտրություններն այս կյանքում ազդում նրա վրա, թե ինչ է պատահելու ինձ մահից հետո:*

Անհրաժեշտության դեպքում վերանայեք Նոր Կտակարանի վարդապետական սերտման հատվածները, որոնք առնչվում են «Փրկության ծրագիրը» գլխագրով 2-րդ վարդապետական թեմային: Գրատախտակին կարող եք գրել հատվածների հղումները. *Հովհաննես 17.3, Ա Կորնթացիս 6.19–20, Ա Կորնթացիս 15.20–22, Ա Կորնթացիս 15.40–42, Ա Պետրոս 4.6, Հայտնություն 20.12:*

Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով: Հրավիրեք ուսանողներից մի զույգի կանգնել դասարանի առաջ: Բացատրեք, որ դասարանի մնացած անդամները կլինեն ընկերները, որոնք հարցեր ունեն Եկեղեցու ուսմունքների վերաբերյալ: Սեղանին դրված քարտերը ներկայացնում են ընկերների հարցերը փրկության ծրագրի վերաբերյալ: Խնդրեք զույգին մտածել, թե ինչպես կարող են պատասխանել այս հարցերին, օգտագործելով փրկության ծրագրի թեմայով իրենց սովորած վարդապետության սերտման հատվածները և վարդապետական պնդումները: Խնդրեք զույգին ընտրել մի քարտ, դասարանի մյուս անդամներից մեկը թող կարդա հարցը և ապա թույլ տվեք զույգին պատասխանել հարցին, օգտագործելով վարդապետական սերտման հատվածները: Կրկնեք խաղը մեկ այլ զույգի հետ, որոնք կպատասխանեն հարցերին:(*Նշում.* Որպեսզի բաժանեք այս միջոցառումը ժամանակի առումով փոքր հատվածների, կարող եք որոշ հարցերին պատասխանել հաջորդ օրերին, այլ ոչ թե մեկ միջոցառման ժամանակ):

Եզրափակեք, հարցնելով ուսանողներին, թե ինչպես է նրանց հասկացողությունն ու վկայությունը ամրապնդվել այս միջոցառման շնորհիվ:

Գործնական վարժություններ (30-40 րոպե)

Օգտագործելով «Ձեռք բերել հոգևոր գիտելիք» բաժինը *Վարդապետությունների սերմման հիմնական փաստաթղթից,* օգնեք ուսանողներին գործնականորեն վարժվել երեք սկզբունքների կիրառման մեջ՝ հավատքով գործել, հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից քննել և ձգտել մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով: Հետևյալ վարժությունները կօգնեն հասնել այդ նպատակին: Այս վարժությունները կարող են ուսուցանվել նույն օրը կամ տարբեր օրեր, կախված ձեր դասացուցակից և ուսանողների կարիքներից:

Վարժություն 1 (20-25 րոպե)

Բարձրաձայն կարդացեք հետևյալ պնդումը և հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ դա սոցիալական կայքում արված մի գրառում է.

«Ես չեմ հասկանում մորմոնների: Ինչո՞ւ են նրանք ապրում այդքան շատ սահմանափակումներով՝ ոչ մի դաջվածք կամ ալկոհոլ, ժուժկալություն ամուսնությունից առաջ, միայն համեստ հագուստ: Լսեք, դա ձեր մարմինն է և ձեր կյանքը: Եթե դուք չեք վնասում որևէ մեկին, արեք այն, ինչ ուզում եք: Մորմոնները պետք է ավելի ազատ զգան իրենց»:

Առաջարկեք ուսանողներին պատասխան գրել սոցիալական կայքի այս գրառմանը: Խնդրեք նրանց իրենց պատասխանի մեջ օգտագործել Ա Կորնթացիս 6.19–20 հատվածները և Հոգևոր գիտելիք ձեռք բերելու երեք սկզբունքները: Գրատախտակին գրեք սկզբունքները.

- *Գործեք հավատքով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Որպեսզի օգնեք ուսանողներին մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով, կարող եք առաջարկել նրանց բացել սուրբ գրությունների լրացուցիչ հատվածներ Թեմատիկ Ուղեցույցում, Աստվածաշնչի բառարանում կամ Սուրբ գրությունների ուղեցույցում: Նրանք կարող են նաև գտնել Եկեղեցու ղեկավարների խոսքերը, որոնք բացատրում են մեր մարմինների սրբությունը: Առկայության դեպքում նրանք կարող են էլեկտրոնային սարքերի օգնությամբ որոնել LDS.org կայքը, կամ այդ խոսքերը փնտրել Եկեղեցու ամսագրերում: Որպես օրինակ կարող եք կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքը.

«Նրանք, ովքեր հավատում են, որ մեր մարմինները միայն էվոլյուցիոն զարգացման արդյունք են, պատասխանատվություն չեն զգա ոչ Աստծո, ոչ էլ որևէ մեկի առաջ նրա վերաբերյալ, թե ինչ են անում իրենց մարմնի հետ: Մենք, որ ունենք նախամահկանացու, մահկանացու և ետմահկանացու կյանքի ավելի լայնարձակ իրականության վկայությունը, այնուամենայնիվ, պետք է գիտակցենք, որ պարտականություն ունենք առ Աստված՝ Նրա ֆիզիկական ստեղծման այս փառահեղ նվաճման համար: Ինչպես Պողոսն է ասել.

«Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են՝ որ ձեզանում է, որ նորան Աստվածանից ունիք. եւ ձերինը չէք:

Որովհետև մեծ գնով գնուեցաք. ուստի փառաւորեցէ՛ք Աստուծուն ձեր մարմնումը եւ ձեր հոգումն՝ որ Աստուծունն են» (Ա Կորնթացիս 6.19–20):

Հասկանալով այս ճշմարտությունները … մենք, իհարկե, չենք այլանդակի մեր մարմինը, օրինակ դաջվածքներով, կամ չենք թուլացնի այն, օրինակ թմրանյութերով, չենք պղծի պոռնկությամբ, շնությամբ կամ անհամեստությամբ: Քանի որ մեր մարմինը մեր հոգու գործիքն է, կարևոր է, որ մենք լավագույն ձևով հոգ տանենք նրա համար: Մենք պետք է սրբագործենք նրա զորությունը՝ Քրիստոսի գործին ծառայելով և այդ գործն առաջ տանելով» (“Reflections on a Consecrated Life,” *Ensign* կամ *Լիահոնա*, Նոյ. 2010, 17):

Երբ ուսանողներն ավարտեն գրելը, հրավիրեք նրանց կարդալ իրենց պատասխանները դասարանի մյուս անդամների համար և քննարկել, թե ինչպես են օգտագործել երեք սկզբունքները՝ պատասխանելով կայքի գրառմանը: Հրավիրեք նրանց՝ դասարանի հետ կիսվել իրենց գրած մի քանի պատասխաններով և քննարկել, թե ինչպես են այդ պատասխանները կյանքի կոչում Հոգևոր գիտելիք ձեռք բերելու սկզբունքները:

Եզրափակեք, հրավիրելով ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են բարելավվել իրենց ապրելակերպը՝ համաձայն այն վարդապետությանը, որին անդրադարձան այսօր:

Վարժություն 2 (10-15 րոպե)

Ուսանողների հետ հակիրճ վերանայեք Նոր Կտակարանի վարդապետական սերտման հատվածները, որոնք բացատրում են փրկության ծրագիրը: Այնուհետև հրավիրեք ուսանողներից մեկին դասարանի համար բարձրաձայն կարդալ հետևյալ սցենարը: Խնդրեք դասարանին մտածել, թե փրկության ծրագրի վարդապետություններն ինչպես կօգնեին Ժոզեին իր ընտրություններում.

«Արագ», - գոռաց գլխավոր մարզիչը Ժոզեին, որը հենց նոր բաց թողեց գոլ խփելու հնարավորությունը: Ժոզեի ընկերուհին՝ Սիլվիան, նայում էր, թե ինչպես է նա հիասթափված քայլում դեպի նստարանը: Նա գիտեր, թե որքան էր Ժոզեն ցանկանում լավ հանդես գալ: Ժոզեն մեծ ջանքերով էր հավաքել ֆուտբոլի թիմը: Նա թիմի ամենաարագ կամ ամենաուժեղ մարզիկը չէր, սակայն յուրահատուկ հմտություններ ուներ, որ տպավորել էր մարզիչներին:

Ժոզեն և Սիլվիան ընկերներ էին այն պահից, երբ մի քանի տարի առաջ Ժոզեն տեղափոխվեց այդ ծուխ: Սիլվիան տպավորված էր ոչ միայն նրա բարությամբ, այլև նրա նվիրվածությամբ քահանայության իր

պարտականություններին: Նա երախտապարտ էր՝ ունենալով մի ընկեր, ով կիսում էր իր հավատքը:

Սիլվիան տեսավ, թե ինչպես Ժոզեն պայուսակից հանեց իր ջրի շիշը և վերցրեց կանաչ հաբերից մեկը, որոնք երևացին պայուսակի ստորին մասում: Նա խոժոռվեց, երբ տեսավ, թե ինչպես է Ժոզեն խմում այդ հաբը մի քանի կում ջրով: Թիմակիցներից ոմանք մի քանի օր առաջ տվել էին նրան արգելված խթանիչ հաբեր: Ժոզեն ասաց, որ ինչ սկսել է օգտագործել դրանք՝ ավելի ուժեղ է զգում իրեն խաղերին մասնակցելիս:

Սիլվիան նաև առավոտյան էր տեսել, թե ինչպես է նա ընդունում հաբը և այժմ որոշեց խոսել նրա հետ: «Գիտես, ճիշտ չէ ընդունել դրանք,- ասաց նա, և եթե մարզիչն իմանա, հաստատ դու թիմից կհեռացվես»:

«Մեծ բան չէ», - պատասխանեց նա: «Սա իմ մարմինն է, և ես կդադարեմ, երբ ուժով ու արագությամբ հասնեմ մյուս տղաներին: Արի խոսենք ուրիշ բանի մասին»:

- Ի՞նչ դժվարություններ եք դուք տեսնում այս սցենարում:
- Ի՞նչն է սխալ թվում Ժոզեի մտածելակերպի և պահվածքի մեջ:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է Սիլվիան նայում իրավիճակին:

Երբ ուսանողները պատասխանեն այս հարցերին, հիշեցրեք նրանց Հոգևոր գիտելիք ձեռք բերելու երեք սկզբունքների մասին՝ հավատքով գործել, հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից քննել և ձգտել մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:

Կարող եք առաջարկել երկու ուսանողների, որ դերակատարմամբ շարունակեն սցենարը՝ կատարելով Սիլվիայի և Ժոզեի դերերը: Հրավիրեք Սիլվիայի դերակատարուհուն ցույց տալ, թե ինչպես է պետք օգտագործել Հոգևոր գիտելիք ձեռք բերելու երեք սկզբունքները, որ օգնի Ժոզեին վերանայել իր ընտրությունները: Խնդրեք ուսանողին, ով կատարում է Ժոզեի դերը, արձագանքել խելամիտ ու ազնիվ կերպով:

Դերախաղից հետո հրավիրեք դասարանի մյուս անդամներին թվել, թե որ սկզբունքները գործածվեցին: Կարող եք նաև խնդրել դասարանին, որ առաջարկեն, թե դերակատարման ընթացքում այդ սկզբունքներն ուրիշ ինչպես կարող են կիրառվել:

Քաջալերեք ուսանողներին կիսվել իրենց վկայություններով այս միջոցառման ժամանակ ուսուցանված վարդապետության և սկզբունքների վերաբերյալ:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Կրկնեք վարդապետությունների սերտման հատվածները ուսանողների հետ հետագա դասերի ժամանակ, որպեսզի օգնեք նրանց հիշել և օգտագործել դրանք: Առիթ փնտրեք կրկնելու այս սուրբ գրությունների հատվածները ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Հետևյալ վարժությունը նախատեսված է օգնելու ուսանողներին հիշել Նոր Կտակարանի վարդապետական սերտման վեց հատվածները, որոնք

թվարկված են 2-րդ վարդապետական թեմայում՝ «Փրկության ծրագիրը» վերնագրով, *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում*: Այնուամենայնիվ, դուք կարող եք հարմարեցնել այս վարժությունը, ներառելով այլ վարդապետական սերտման հատվածներ, որոնք ուսանողները սովորել են այս ուսումնական տարվա ընթացքում:

Յուրաքանչյուր ուսանողի տվեք հետևյալ թեստից մի օրինակ, որտեղ կան Նոր Կտակարանի վարդապետական սերտման հատվածները, որոնք օգնում են մեզ հասկանալ փրկության ծրագրի վարդապետությունը: Այս միջոցառումից առաջ կարող եք պարբերաբար վերանայել այդ սուրբ գրությունների հատվածները, որպեսզի ուսանողները ծանոթանան հղումներին և տեքստում հանդիպող գլխավոր բառերին: Թույլ տվեք ուսանողներին օգտվել իրենց սուրբ գրություններից և 2-րդ վարդապետական թեմայից, որը կոչվում է «Փրկության ծրագիրը» *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում*, որպեսզի զուգընկերոջ հետ միասին թեստին մասնակցելուց առաջ մի քանի րոպե ուսումնասիրեն դրանք: Այնուհետև անցկացրեք թեստը, խնդրելով ուսանողներին գրել սուրբ գրության ճիշտ հղումը դատարկ տարածքում յուրաքանչյուր թվի դիմաց:

Ստուգեք թեստի արդյունքները դասարանի հետ, այնպես, որ կարողանաք պատասխանել հարցերին կամ լրացուցիչ բացատրություններ տալ հատվածների վերաբերյալ:

1. _____«Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճարն են»:
2. _____«Մեռելները դատվեցան այն գրքերում գրվածներից իրանց գործերի համեմատ»:
3. _____«Ուրիշ է արեգակի փառքը, և ուրիշ է լուսնի փառքը, և ուրիշ է աստղերի փառքը: … Այնպես էլ մեռելների հարությունը»:
4. _____«Որովհետև իսկ սորա համար մեռելներին էլ ավետարանվեցավ»:
5. _____«Քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են»:
6. _____«Եւ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. և նորան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին»:

Քաջալերեք ուսանողներին անգիր սովորել այս հղումներն ու կարևոր արտահայտությունները: Կարող եք ստուգել ուսանողների այս հատվածների իմացությունը այլ ձևերով հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում:

Թեստի պատասխանները. (1) Ա Կորնթացիս 6.19–20, (2) Հայտնություն 20.12, (3) Ա Կորնթացիս 15.40–42, (4) Ա Պետրոս 4.6, (5) Ա Կորնթացիս 15.20–22, (6) Հովհաննես 17.3:

Հիսուս Քրիստոսի Քավությունը

Նշում. Վարդապետության սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մեկ կամ մի քանի դասերի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (65 րոպե)

Մաս 1 (10 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ պնդումը. *Իր Քավության շնորհիվ Հիսուս Քրիստոսը մեզ համար կարող է ավելին անել, քան մեր մեղքերի ներումն է:*

Հրավիրեք ուսանողներին բացի մեղքերի ներումից թվարկել այլ օրհնություններ, որոնք կարող ենք ստանալ Փրկչի Քավության շնորհիվ: Ուսանողների պատասխանները թվարկեք գրատախտակին:

Ուսանողներին խնդրեք բացել 3-րդ վարդապետական թեման՝ «Հիսուս Քրիստոսի Քավությունը», *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում:* Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ առաջին հինգ պարբերությունները: Դասարանին հանձնարարեք հետևել, փնտրելով, թե ինչ օրհնություններ կարող ենք ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց հայտնաբերածով և գրատախտակին գրված ցուցակին ավելացրեք այն օրհնությունները, որոնք այնտեղ նախապես նշված չէին:

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք չորրորդ պարբերության վրա և առաջարկեք նրանց նշել հետևյալ ճշմարտությունը. **Երբ մենք հավատով գանք Նրա մոտ, Փրկիչը կամրացնի մեզ, որ տանենք բեռներ և լուծենք խնդիրներ, որոնք չէինք կարող կրել և լուծել ինքնուրույն**:

- Ի՞նչ տեսակի բեռներ և խնդիրներ կարող ենք ունենալ մահկանացու կյանքում, որոնք մեր մեղքերի արդյունքը չեն:

Հրավիրեք ուսանողներին մտածել իրենց հանդիպող դժվարությունների մասին: Շարունակելով սովորել Հիսուս Քրիստոսի Քավության մասին, քաջալերեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են ուժ ստանալ Փրկչից, որը կօգնի իրենց դժվարությունների ժամանակ:

Մաս 2 (5 րոպե)

Ուսանողներին բաժանեք զույգերի և հրավիրեք նրանց միասին կարդալ և նշել վարդապետական սերտման հատվածը Մատթեոս 11.28–30: Խնդրեք նրանց քննարկել հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է այս հատվածը պատկերում այն պնդումը, որի մասին ավելի վաղ խոսել էինք. Երբ մենք հավատով գանք Նրա մոտ, Փրկիչը կամրացնի մեզ, որ տանենք բեռներ և լուծենք խնդիրներ, որոնք չէինք կարող կրել և լուծել ինքնուրույն:

- Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները մեր պարտականությունների մասին:
- Ի՞նչ են դրանք սովորեցնում այն մասին, թե Փրկիչը ինչ կանի մեզ համար, երբ գանք Նրա մոտ:

Մաս 3 (5 րոպե)

Ցուցադրեք կամ թղթային տարբերակով բաժանեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի և Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ խոսքերը: Բացատրեք, որ այս երկու Առաքյալների խոսքերը օգնում են մեզ ավելի լավ հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավության վարդապետական սերտման թեման և հատկապես այն վարդապետությունը, որ երբ մենք հավատով գանք Նրա մոտ, Փրկիչը կամրացնի մեզ, որ տանենք բեռներ և լուծենք խնդիրներ, որոնք չէինք կարող կրել և լուծել ինքնուրույն: Խնդրեք երկու ուսանողների բարձրաձայն կարդալ այդ խոսքերից յուրաքանչյուրը: Դասարանին խնդրեք հետևել՝ փնտրելով մտքեր, թե Փրկիչն ինչպես կարող է ամրապնդել մեզ մեր բեռը կրելիս:

«Չկա ֆիզիկական ցավ, հոգու տառապանք, հոգու ցավ, թուլություն կամ տկարություն, որ դուք և ես երբևէ ունենանք մեր մահկանացու ճամփորդության ընթացքում, որը Փրկիչը առաջինը կրած չլինի: Թուլության պահին դուք և ես գուցե աղաղակենք. «Ոչ ոք չգիտի, թե դա ինչ է: Ոչ ոք չի հասկանում»: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանզի Նա զգացել և կրել է մեր անհատական բեռը: Եվ Իր անսահման և հավերժական զոհաբերության շնորհիվ (տես Ալմա 34.14) Նա ունի կատարյալ կարեկցանք և կարող է մեկնել մեզ Իր ողորմած ձեռքը: Նա կարող է հասնել, դիպչել, սատարել, բուժել և ամրացնել մեզ, որ ավելի լավը լինենք, քան երբևէ եղել ենք, կարող է օգնել մեզ, որ անենք այն, ինչ երբեք չէինք կարող անել՝ ապավինելով մեր սեփական ուժին» (David A. Bednar, "Bear Up Their Burdens with Ease," *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2014, 90):



«Քավությունը նաև ուժ է տալիս մեզ՝ տանելու «ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի», քանի որ մեր Փրկիչը նույնպես վեր առավ Իր վրա «իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները» (Ալմա 7.11): Եղբայրներ և քույրեր, եթե ձեր հավատն ու աղոթքները, ինչպես նաև քահանայության զորությունը չեն թեթևացնում ձեր չարչարանքը, Քավության զորությունը հաստատ ուժ կտա ձեզ՝ տանելու ձեր բեռը» (Dallin H. Oaks, "He Heals the Heavy Laden," *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2006, 9):

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել որևէ արտահայտությամբ կամ մտքով, որը նշանակալից էր նրանց համար, և ինչպես է դա հարստացնում իրենց գիտելիքը՝ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մեզ հասանելի դարձած օրհնությունների մասին:

- Ինչպե՞ս եք դուք կամ ձեզ ծանոթ մեկը օրհնվել Փրկչից ստացած այս տեսակ օգնությամբ և զորությամբ:

Կարող եք եզրափակել, կիսվելով ձեր վկայությամբ Փրկչի զորության մասին՝ ամրապնդելու մեզ, եթե Նրա մոտ գանք հավատքով:

Մաս 4 (5 րոպե)

Սկսեք բացատրելով, որ այսօր աշխարհում շատ մարդիկ կան, այդ թվում՝ քրիստոնյաներ, որոնք չեն հասկանում, որ Հիսուսը Քրիստոսն ունի մսից ու ոսկորից բաղկացած հարություն առած մարմին: Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչու է կարևոր այն ճշմարտությունը, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել անմահ ֆիզիկական մարմնով:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ղուկաս 24.36–39 հատվածները: Դասարանի անդամներին խնդրեք հետևել՝ տեսնելով, թե ինչ է ուսուցանվում այդտեղ Հիսուս Քրիստոսի հարություն առած մարմնի վերաբերյալ: Նրանց ասացեք, որ Ղուկաս 24.36–39-ը վարդապետական սերտման հատված է և առաջարկեք նշել այդ հատվածը տարբերակիչ ձևով, որպեսզի կարողանան հեշտությամբ գտնել այն:

- Ըստ այս հատվածի, ի՞նչ արեց Փրկիչը, որպեսզի վկայի Իր աշակերտներին, որ Ինքը հարություն է առել մահացածներից, փառավորված ֆիզիկական մարմնով:

Հրավիրեք ուսանողներին Ղուկաս 24.36–39 հատվածների լուսանցքում գրել այս վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսը բարձրացավ գերեզմանից փառավորված, մսից ու ոսկորից կազմված անմահ մարմնով:**

Մաս 5 (5 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ վարդապետական պնդումը և հարցերը.

> *Հիսուս Քրիստոսը բարձրացավ գերեզմանից փառավորված, մսից ու ոսկորից կազմված անմահ մարմնով:*
>
> 1. *Ինչո՞ւ Հիսուս Քրիստոսը կարողացավ առաջինը լինել, ով հարություն առավ:*
> 2. *Ի՞նչ ազդեցություն է ունենում ամբողջ մարդկության վրա Հիսուս Քրիստոսի հարությունը փառավորված, մսից ու ոսկորից կազմված անմահ մարմնով:*

Ուսանողներին խնդրեք բացել 3-րդ վարդապետական թեման՝ «Հիսուս Քրիստոսի Քավությունը», *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում:* Դասարանը երկու մասի բաժանեք և հանձնարարեք մի կեսին մտքում կարդալ երկրորդ պարբերությունը, փնտրելով գրատախտակին գրված առաջին հարցի պատասխանները: Հանձնարարեք մյուս կեսին մտքում կարդալ երրորդ պարբերությունը և փնտրել գրատախտակին գրված երկրորդ հարցի պատասխանները:

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո հրավիրեք նրանց, ովքեր ուսումնասիրում էին առաջին հարցը, բարձրաձայնել իրենց մտքերը:

Այնուհետև հրավիրեք նրանց, ովքեր ուսումնասիրում էին երկրորդ հարցը, ասել, թե ինչ իմացան:

Մաս 6 (5 րոպե)

Որպեսզի օգնեք ուսանողներին ամրապնդել իրենց հասկացողությունն այն վարդապետության վերաբերյալ, որ Հիսուս Քրիստոսը բարձրացավ գերեզմանից փառավորված, մսից ու ոսկորից կազմված անմահ մարմնով՝ ցուցադրեք կամ թղթային տարբերակով բաժանեք Առաջին Նախագահության Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հետևյալ հայտարարությունը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Դասարանին խնդրեք հետևել՝ փնտրելով, թե ըստ Նախագահ Ուխդորֆի վաղ շրջանի Առաքյալների վրա ինչ ազդեցություն էր ունեցել հարություն առած Հիսուս Քրիստոսին տեսնելը:

«Խաչելությանը հետևող առաջին ժամերի ընթացքում [Փրկչի Առաքյալներին] պատել էր հուսահատությունն ու վիշտը, թույլ չտալով հասկանալ, թե ինչ էր կատարվում: Բայց մի իրադարձություն փոխեց ամեն ինչ: Տերը հայտնվեց նրանց և հայտարարեց. «Տեսէք իմ ձեռքերը եւ իմ ոտները, որ ես ինքս եմ»[Ղուկաս 24.39]:

Երբ Առաքյալները ճանաչեցին կենդանացած Քրիստոսին, երբ նրանք ականատես եղան իրենց սիրելի Փրկչի փառահեղ Հարությանը, նրանք ուրիշ մարդ դարձան: Ոչինչ չէր կարող նրանց ետ պահել իրենց առաքելությունը կատարելուց: Նրանք փոխեցին մարդկանց կյանքն ամենուր: Նրանք փոխեցին աշխարհը» («Երախտապարտ լինել ցանկացած պայմաններում», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2014, 76):

- Ինչպիսի՞ ազդեցություն թողեց Առաքյալների վրա այն, որ նրանք ականատեսը եղան հարություն առած Հիսուս Քրիստոսի:
- Արդյո՞ք կարող է ձեր կյանքի վրա նույն կերպ ազդել այն վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել փառավորված, մսից ու ոսկորից կազմված անմահ մարմնով:

Մաս 7 (10 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Վճարելով մեր մեղքերի տուգանքը, Հիսուս Քրիստոսը չի վերացրել մեր անձնական պատասխանատվությունը:** Խնդրեք ուսանողներին իրենց բառերով բացատրել, թե ինչ է դա նշանակում:

Ուսանողներին խնդրեք բացել 3-րդ վարդապետական թեման՝ «Հիսուս Քրիստոսի Քավությունը», *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում* և մտքում կարդալ հինգերորդ պարբերությունը, որը սկսվում է գրատախտակին գրված նախադասությամբ: Քաջալերեք ուսանողներին փնտրել կարևոր գաղափարներ, թե մենք ինչ պետք է անենք, որպեսզի Հիսուս Քրիստոսի Քավության զորությունը հասանելի լինի մեզ:

- Ո՞րն է մեր անձնական պատասխանատվությունը Փրկչի Քավության լիարժեք օրհնությունները ստանալու հարցում: (Մենք պետք է

հավատք գործադրենք Նրա հանդեպ, ապաշխարենք, մկրտվենք, ստանանք Սուրբ Հոգի և հավատարմությամբ համբերենք մինչև մեր կյանքի վերջը)։

Բացատրեք, որ «Հիսուս Քրիստոսի Քավությունը» 3-րդ վարդապետական թեմայի «Հավատ Հիսուս Քրիստոսի հանդեպ» և «Ապաշխարություն» բաժինները օգնում են մեզ ավելի լավ հասկանալ, թե մենք ինչ պետք է անենք, որպեսզի ստանանք օրհնությունները, որոնք մատչելի են Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ։ Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ «Հավատ Հիսուս Քրիստոսի հանդեպ» բաժինը, իսկ երկրորդ ուսանողին՝ «Ապաշխարություն» բաժինը։ Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով կարևոր գաղափարներ, թե մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի ընդունենք Փրկչի զոհաբերությունը։*Նշում.* Կարող եք տեղեկացնել, որ Արարողություններ և ուխտեր կոչվող 7-րդ վարդապետական թեմայում քննարկվում է մկրտության արարողության, Սուրբ Հոգու պարգևը ստանալու և ուխտերը պատվելու մասին։

Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատ ունենալու և ապաշխարելու մասին բաժինները կարդալուց հետո հրավիրեք ուսանողներին կիսվել վարդապետական պնդումներով ու գաղափարներով, որոնք կարևոր են իրենց համար։

Մաս 8 (5 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունը. *Հիսուս Քրիստոսի հանդեպ ճշմարիտ հավատը մղում է …*

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ «Հիսուս Քրիստոսի Քավությունը» 3-րդ վարդապետական թեմայից՝ «Հավատ Հիսուս Քրիստոսի հանդեպ» բաժինը *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից։* Դասարանին հանձնարարեք հետևել՝ փնտրելով, թե ինչպես կարող են լրացնել գրատախտակին գրված անավարտ նախադասությունը։

- Ինչպե՞ս կավարտեիք գրատախտակին գրված նախադասությունը։ (Ուսանողների պատասխաններից հետո լրացրեք գրատախտակին գրված նախադասությունն այնպես, որ այն պարունակի հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսի հանդեպ ճշմարիտ հավատը մղում է գործելու և արտահայտվում է մեր ապրելակերպով**)։
- Ինչո՞ւ պետք է ճշմարիտ հավատը կենտրոնացած լինի Տեր Հիսուս Քրիստոսի վրա։
- Ի՞նչ օրինակներ կան սուրբ գրություններում, երբ Հիսուս Քրիստոսի հանդեպ ճշմարիտ հավատքը դրդել է ինչ-որ մեկին արդար գործողությունների։

Մաս 9 (5 րոպե)

Գրատախտակին գրեք *Հակոբոս 2.17–18*։ Ասացեք, որ սա վարդապետական սերտման հատված է և հրավիրեք ուսանողներին բացել այն սուրբ գրություններում, կարդալ մտքում և նշել առանձնահատուկ ձևով։ Կարող եք առաջարկել ուսանողներին, որ իրենց

սուրբ գրություններում այս հատվածների կողքի լուսանցքում գրեն հետևյալ վարդապետական պնդումը. *Հիսուս Քրիստոսի հանդեպ ճշմարիտ հավատը մղում է գործելու և արտահայտվում է մեր ապրելակերպով:*

Մաս 10 (10 րոպե)

Դասարանը բաժանեք երեք-չորս ուսանողից բաղկացած խմբերի: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին միասին բարձրաձայն կարդալ Հակոբոս 2.17–18 հատվածները և պատրաստվել դասարանի հետ կիսվելու հետևյալ հարցերի պատասխաններով: (Կարող եք գրել այս հարցերը գրատախտակին կամ պատրաստել թերթիկների տեսքով յուրաքանչյուր ուսանողի համար): Մինչև կարդալը օգտակար կլինի բացատրել դասարանին, որ *գործ* բառն այս հատվածներում վերաբերում է արդար գործողություններին:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ հավատն առանց գործերի (կամ արդար գործողությունների) «մեռած է»:
- Որո՞նք են այն գործողությունները, որ պետք է ուղեկցեն Հիսուս Քրիստոսի հանդեպ ճշմարիտ հավատին:
- Ինչպե՞ս կուսուցանեք այս հավատի ու արդար գործելակերպի միջև կապը հինգ տարեկան մի երեխայի Երեխաների Միությունից այնպես, որ նա հասկանա դա:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո մեկ կամ երկու խմբի խնդրեք կիսվել իրենց մտքերով առաջին հարցի վերաբերյալ, և մյուս խմբերից մեկին կամ երկուսին՝ երկրորդ հարցի վերաբերյալ: Այնուհետև հրավիրեք խմբերից առնվազն մեկին ուսուցանել հավատքի և գործողության միջև կապը, կարծես ուսուցանում են մի երեխայի:

Դասարանային քննարկումից հետո կարող եք կիսվել ձեր վկայությամբ՝ մեր արդար գործերի միջոցով Փրկչի հանդեպ հավատ գործադրելու զորության մասին:

Գործնական վարժություն (20 րոպե)

Ուսանողների համար կարդացեք հետևյալ իրավիճակները.

Վերջին օրերի սուրբ մի երիտասարդ կին սկսում է ընտրություններ կատարել և այնպիսի գործելակերպ է դրսևորում, որը հակառակ է Եկեղեցու որոշ չափանիշներին, այդ թվում՝ մաքրաբարոյության օրենքին: Նա արդարացնում է իր գործողությունները, ասելով, որ ոչ ոք կատարյալ չէ, և որ ինքը շարունակում է գնալ Եկեղեցի և սեմինարիա ու շարունակում է հավատալ Հիսուս Քրիստոսին:

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը կամ տրամադրեք դրանք թղթիկների տեսքով և հրավիրեք ուսանողներին քննարկել դրանք փոքր խմբերով.

Գործեք հավատով.

- Եթե այս երիտասարդ աղջիկը լիներ ձեր ընկերուհին, ի՞նչ կքաջալերեիք նրան անել, որպեսզի գործադրեր իր հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ:

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից.

- Փրկության ծրագրի և Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի հետ կապված ո՞ր ճշմարտությունները կօգնեն այս աղջկան ավելի լավ գնահատել իր ընտրություններն ու գործողությունները:

Զգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով.

- Ո՞ր սուրբ գրություններով կամ մարգարեական ուսմունքներով կկիսվեիք նրա հետ, որպեսզի օգնեիք այս երիտասարդ կնոջը հասկանալ, թե ինչ է նշանակում գործերով ցույց տալ Հիսուս Քրիստոսի հանդեպ իր հավատքը:

Վկայեք այս վարդապետության մասին, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ ճշմարիտ հավատքը մղում է գործելու և արտահայտվում է մեր ապրելակերպով:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Վարդապետական սերտման հատվածների հետ կապված ուսանողների հասկացողությունը մեծանում է, երբ նրանք իրենց հուշումներն են ստեղծում հատվածների մասին: Այս հուշումները կարող են լինել հարցեր, կարևոր բառեր, սցենարներ կամ կիրառումներ: Հրավիրեք ուսանողներին աշխատել որպես դասարան կամ փոքր խմբերով, գրելու համար հուշումներ, որոնք բնութագրում են վարդապետական սերտման որոշակի հատվածները: (Կարող եք ընտրել մի խումբ հատվածներ, որոնք կցանկանայիք, որ ուսանողները սովորեին կամ վերանայեին): Այնուհետև հրավիրեք ուսանողներին հերթով կարդալ իրենց հուշումները ձեր և դասարանի համար: Մեկ միավոր ստանում է նա, ով ճիշտ է գուշակում վարդապետական սերտման հատվածը՝ դուք կամ դասարանը:

Վերականգնում

Նշում. Վարդապետությունների սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մեկ կամ մի քանի դասերի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (40 րոպե)

Մաս 1 (6 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ հարցը. *Ինչո՞ւ ավետարանը կարիք ուներ վերականգնվելու:* Հրավիրեք ուսանողներին քննարկել հարցը և ապա խնդրեք նրանց բացել 4-րդ վարդապետական թեման՝ «Վերականգնում», *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում:* Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ «Ուրացություն» բաժինը: Դասարանի անդամներին խնդրեք հետևել նրան և ուշադրություն դարձնել, թե ինչ պատահեց Հիսուս Քրիստոսի խաչելությունից և Նրա Առաքյալների մահից հետո:

- Ի՞նչ պատահեց Հիսուս Քրիստոսի խաչելությունից և Նրա Առաքյալների մահից հետո: (Օգնեք ուսանողներին բացահայտել հետևյալ վարդապետական ճշմարտությունը. **Մեծ Ուրացությունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ մարդիկ շրջվել են ավետարանի ճշմարտություններից և Տերը հեռացրել է քահանայության իշխանությունը և բանալիները երկրի վրայից:**
- Որո՞նք են ընթերցված բաժնում նկարագրված որոշ խնդիրները, որ Մեծ Ուրացության մասն են հանդիսանում:

Մաս 2 (8 րոպե)

Ուսանողներին խնդրեք բացել 4-րդ վարդապետական թեման՝ «Վերականգնում», *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում:* Խնդրեք նրանց աչքի անցկացնել «Ուրացություն» բաժինը և վերհիշել վարդապետությունը, որը նրանք դրանից առաջ բացահայտել էին Մեծ Ուրացության մասին: Այնուհետև խնդրեք նրանց գտնել, թե վարդապետության սերտման որ հատվածն է ընկած այս վարդապետության հիմքում:

Ուսանողներին խնդրեք բացել Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3: Կարող եք հրավիրել ուսանողներին նշել այդ հատվածը տարբերակիչ ձևով, որպեսզի կարողանան հեշտությամբ այն գտնել:

Բացատրեք, որ Պողոս Առաքյալը գրել է այս հատվածը վստահեցնելու համար Եկեղեցու անդամներին, ովքեր մտահոգված էին, որ երկրորդ գալուստը գուցե արդեն տեղի է ունեցել կամ մոտ է: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ հատվածը: Դասարանին հանձնարարեք հետևել նրան և տեսնել, թե ըստ Պողոսի, ինչ տեղի կունենա Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստից առաջ:

- Ըստ Պողոսի, ինչ տեղի կունենա Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստից առաջ:

- Ձեր կարծիքով ի՞նչ նկատի ուներ Պողոսը՝ ասելով «ապստամբություն» (Բ Թեսաղոնիկեցիս 2.3):

Եթե կարիք կա, բացատրեք, որ «ապստամբությունը» Մեծ Ուրացությունն էր, որը պետք է տեղի ունենար Հիսուս Քրիստոսի Առաքյալների մահից հետո:

- Այս բացատրությունն ինչպե՞ս օգնեց Եկեղեցու անդամներին Պողոսի օրոք:
- Ինչո՞ւ է այսօր կարևոր մեզ համար հասկանալ, որ Պողոս Առաքյալի կանխատեսած «ապստամբությունը» արդեն կատարվել է:

Մաս 3 (6 րոպե)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այն ճշմարտությունը, որ Մեծ Ուրացությունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ մարդիկ հեռացել են ավետարանի ճշմարտություններից, և Տերը հեռացրել է քահանայության իշխանությունն ու բանալիները երկրի վրայից, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքը.



«Եկեղեցու ճշմարիտ անունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի է: Այն Հիսուս Քրիստոսի վերահաստատված նախնական Եկեղեցին է: Երբ Նա երկրի վրա էր, Նա կազմակերպեց Իր Եկեղեցին: Նա կանչեց Առաքյալների, Յոթանասունականների և այլ ղեկավարների, ում տվեց քահանայության իշխանություն՝ գործելու Իր անունով [տես Մատթեոս 10.1, Ղուկաս 6.13, 10.1, Եփեսացիս 4.11–12]: Երբ Քրիստոսը և Նրա Առաքյալները մահացան, մարդիկ փոխեցին արարողություններն ու վարդապետությունը: Նախնական Եկեղեցին և քահանայությունը կորան: Խավարի դարերից հետո և Երկնային Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսը հետ բերեց Իր Եկեղեցին: Այժմ այն նորից ապրում է, վերականգնված է և գործում է Նրա սուրբ ղեկավարման ներքո [տես ՎԱՈՒ 1.30]» (“Ask the Missionaries! They Can Help You!” *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2012, 18):

- Ըստ Նախագահ Նելսոնի, ինչո՞ւ էր կարևոր վերականգնումը:
- Մեծ Ուրացության մասին իմանալն ինչպե՞ս է մեզ օգնում գնահատել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կարևորությունը:

Մաս 4 (8 րոպե)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ «Վերականգնում» կոչվող 4-րդ վարդապետական թեմայի առաջին երեք պարբերությունները *Վարդապետությունների սերման հիմնական փաստաթղթից:* Դասարանին խնդրեք հետևել, փնտրելով վերջին օրերում ավետարանի վերականգնմանը նպաստած իրադարձությունները: Խնդրեք ուսանողներին նշել իրենց գտած նշանակալից իրադարձություններից մի քանիսը:

Ուշադրություն հրավիրեք առաջին պարբերության հետևյալ վարդապետությանը. **Հնագույն մարգարեները կանխագուշակել էին ավետարանի վերականգնումը վերջին օրերում:** Կարող եք առաջարկել

ուսանողներին գրել այս ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում՝ Գործք 3.19–21 վարդապետության սերտման հատվածի լուսանցքում:

- Ձեր կարծիքով՝ Տերն ինչո՞ւ էր հայտնել Իր վաղեմի մարգարեներին այն մասին, որ վերջին օրերում վերականգնում է լինելու և պատվիրել էր նրանց մարգարեանալ այդ մասին:

Մաս 5 (12 րոպե)

Առաջարկեք ուսանողներին նշել Գործք 3.19–21 հատվածը որպես վարդապետության սերտման հատված: Բացատրեք, որ Պետրոս և Հովհաննես Առաքյալները Երուսաղեմի տաճարի մոտ բուժեցին մի մարդու, ով կաղ էր կամ անկարող էր քայլել: Հրաշքի լուրը արագ տարածվեց, և շատ մարդիկ հավաքվեցին, այդ թվում՝ նրանք, ովքեր նախկինում մերժել էին Հիսուս Քրիստոսին: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ հատվածը: Դասարանին հանձնարարեք հետևել՝ տեսնելով, թե Պետրոս Առաքյալն ինչ հրահանգեց անել այնտեղ հավաքված մարդկանց:

- Ի՞նչ ուղերձ հղեց Պետրոսը մարդկանց:

Օգտակար կլինի նշել, որ «Որ Տիրոջ երեսիցը հանգստանալու ժամանակները գան. և նա ուղարկէ առաջուց ձեզ համար քարոզված Հիսուս Քրիստոսին» 20 հատվածում վերաբերում է Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստի ժամանակին, երբ «երկիրը կնորանա և կընդունի իր դրախտային փառքը» (Հավատո Հանգանակներ 1.10):

Բացատրեք, որ համաձայն Գործք 3.21 հատվածի, Պետրոսը մարգարեացավ, որ Հիսուս Քրիստոսը կմնա երկնքում մինչև «այն ամեն բաների հաստատվելու ժամանակները»: «Ամեն բաների հաստատուելու ժամանակները» արտահայտությունը վերաբերում է վերջին օրերում ավետարանի վերականգնմանը:

- Համաձայն 21 հատվածի, բացի Պետրոսից ովքե՞ր մարգարեացան վերջին օրերում ավետարանի վերականգնման մասին:
- Ե՞րբ սկսեց իրականանալ Պետրոսի մարգարեությունը: (Երբ Հայր Աստված և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին սուրբ պուրակում):

Կիսվեք ձեր վկայությամբ, որ Տիրոջ մարգարեները երկրի տարբեր մասերում մարգարեացել են մեր օրերի մասին և անհամբեր սպասել են ավետարանի վերականգմանը և Տիրոջ Երկրորդ Գալուստին:

Գործնական վարժություն (25 րոպե)

Օգնեք ուսանողներին կիրառել հոգևոր գիտելիք ձեռք բերելու երեք սկզբունքները, որոնք վերաբերում են Վերականգնման թեմային. գործել հավատքով, քննել հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից և ձգտել մեծացնել մեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:

Հետևյալ վարժությունը կարող է կատարվել մեկ դասի ընթացքում կամ բաժանվել տարբեր դասերի միջև՝ կախված դասացուցակից և ձեր ուսանողների կարիքներից:

Ուսանողներին բաժանեք զույգերի և յուրաքանչյուր զույգին տվեք հետևյալ հրահանգներից մեկ օրինակ: (Որպեսզի օգնեք ուսանողներին պատրաստել պատասխաններ սուրբ աղբյուրների հարցերին, կարող եք ցույց տալ նրանց, թե ուրացությանը և վերականգնմանը վերաբերող տեղեկատվությունն ինչպես գտնել սուրբ գրություններում, սուրբ գրությունների ուղեցույցում կամ թեմատիկ ուղեցույցում: Կարող եք նաև ցույց տալ նրանց, թե ինչպես բացել այս թեմայով Եկեղեցու ղեկավարների ելույթները՝ որոնելով LDS.org կայքում:)

Միասին կարդացեք հետևյալ սցենարը, այնուհետև քննարկեք յուրաքանչյուր սկզբունքից հետո տրվող հարցերը: Պատրաստ եղեք օգնել սցենարում նկարագրվող ընկերոջը հասկանալ, թե ինչպես գործել հավատով, հարցերին նայել հավերժական ճշմարտության տեսանկյունից և ձգտել մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով: (Ավելի ուշ դուք հնարավորություն կունենաք դերախաղ կազմակերպել այս սցենարով ուսանողների մեկ այլ զույգի հետ:)

Ձեր ընկերներից մի քանիսը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ չեն: Մի օր դուք բացատրում եք նրանց Ջոզեֆ Սմիթի և ավետարանի վերականգնման մասին, երբ ընկերներից մեկը՝ այլ դավանանքի պատկանող մի անկեղծ քրիստոնյա, հարցնում է. «Ինչո՞ւ պետք է Աստված հայտնվեր Ջոզեֆ Սմիթին, եթե քրիստոնեությունն արդեն երկրի վրա էր և շատ մարդիկ հավատում էին Աստվածաշնչին»:

Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով.

- Ինչպե՞ս կարող եք օգտագործել վարդապետությունները և վարդապետությունների սերտման հատվածները, որոնք մենք ուսումնասիրեցինք, օգնելու ձեր ընկերոջը այս հարցի վերաբերյալ հասկացողություն ձեռք բերել:
- Սուրբ գրությունների հետ մեկտեղ աստվածայնորեն նշանակված ի՞նչ լրացուցիչ աղբյուրների խորհուրդ կտայիք ձեր ընկերոջը դիմել ավելի շատ բան հասկանալու համար:

Քննեք հարցը հավերժական տեսանկյունից.

- Հաշվի առնելով ձեր ընկերոջ հավատն առ Աստված և Հիսուս Քրիստոսը, ինչպե՞ս կարող եք օգնել նրան քննել հարցը ծանոթ տեսանկյունից, երբ Աստծո զավակները շրջվել են ճշմարտությունից անցյալում շատ անգամներ: (Օրինակ, կարող եք նշել, թե ինչպես են մարդիկ շրջվել Նոյի և Մովսեսի պես մարգարեների ուսմունքներից:)
- Հարցը քննելիս ինչպե՞ս կարող եք խրախուսել ձեր ընկերոջը հաշվի առնել այն, ինչ նա գիտի Աստծո մասին և իր ունեցած հավատքը, ինչպես նաև հաշվի առնել Աստծո ցանկությունը ուսուցանել Իր զավակներին:

Գործեք հավատով.

- Ինչպե՞ս կարող է ձեր ընկերը հավատ գործադրել ճշմարտությունը սովորելու համար:
- Ի՞նչ կխրախուսեիք անել ձեր ընկերոջը, ինչը կամրացներ նրա հավատքը:

Բավարար ժամանակից հետո ուսանողներին այնպես կազմակերպեք, որ յուրաքանչյուր զույգն աշխատի մեկ այլ զույգի հետ: Հրավիրեք մի զույգին կատարել այն ընկերոջ դերը, ով հարց ունի, իսկ մյուս զույգին՝ պատասխանել հարցին՝ համաձայն քննարկվածի, օգտագործելով երեք

սկզբունքները: Զույգի պատասխանից հետո հրավիրեք զույգերին փոխվել դերերով:

Կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել քննարկումից և դերախաղից իրենց սովորածով կամ զգացածով: Եզրափակեք, հնարավորություն տալով մի քանի ուսանողների կիսվել իրենց վկայություններով մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով վերջին օրերում ավետարանի վերականգնման մասին:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Կրկնեք վարպետությունների սերտման հատվածները ուսանողների հետ հետագա դասերի ժամանակ, որպեսզի օգնեք նրանց հիշել և օգտագործել դրանք: Առիթ փնտրեք կրկնելու այս սուրբ գրությունները ողջ ուսումնական տարվա ընթացքում: Կարող եք օգտագործել հետևյալ տիպի վարժություն.

Ուսանողներին բաժանեք դատարկ քարտեր կամ թղթի կտորներ: Հրավիրեք ուսանողներին ընտրել վարդապետությունների սերտման մի քանի հատվածներ, որոնք ուսումնասիրել եք այս տարվա ընթացքում և յուրաքանչյուր քարտի վրա գրել որևէ հատվածի համարը: Քարտի հակառակ կողմում ուսանողները թող գրեն գլխավոր արտահայտությունը կամ այլ հուշում, որը կօգնի կռահել հատվածը: (Վարդապետությունների սերտման հատվածների գլխավոր արտահայտությունները տրված են վարդապետությունների սերտման էջանշանի վրա:)

Դասարանը բաժանեք երկու կամ երեք ուսանողից բաղկացած խմբերի: Հրավիրեք ուսանողներին օգտագործել իրենց պատրաստած քարտերը իրենց խմբի մյուս ուսանողների գիտելիքը ստուգելու համար: Ուսանողները կարող են ցույց տալ քարտի հակառակ կողմը, որտեղ գրված է հատվածի համարը և խնդրեն մյուս ուսանողներին կռահել հատվածը, կամ նրանք կարող են ցույց տալ գլխավոր արտահայտությունը և խնդրեն մյուս ուսանողներին կռահել, թե որ գրքից է, որ գլուխն է և որ հատվածն է կամ հատվածները, որտեղ գտնվում է վարդապետությունների սերտման տվյալ հատվածը:

Վարժության վերջում կարող եք բանավոր կամ գրավոր թեստ տալ ուսանողներին՝ համապատասխանեցնելով սուրբ գրությունների հատվածների համարները վարդապետությունների սերտման հատվածների իրենց գլխավոր արտահայտությունների հետ:

Մարգարեներ և հայտնություն

Նշում. Վարդապետության սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մեկ կամ մի քանի դասերի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (35 րոպե)

Մաս 1 (10 րոպե)

Հետևյալ հարցը գրեք գրատախտակին. *Որո՞նք են մեր Եկեղեցու առանձնահատկությունները:* Խնդրեք ուսանողներին պատասխանել: Երբ նրանք պատասխանեն, գրեք նրանց պատասխանները գրատախտակին: Բացատրեք, որ առանձնահատկություններից մեկը, որն առանձնացնում է մեր Եկեղեցին մյուսներից, մեր հավատն է ապրող մարգարեների և շարունակական հայտնության հանդեպ:

Նշեք, որ Նոր Կտակարանը պարունակում է երեք վարդապետությունների սերտման հատվածներ, որոնք օգնում են մեզ ավելի լավ հասկանալ մարգարեների և հայտնության թեման: Հետևյալ հղումները գրեք գրատախտակին և ուսանողներին ժամանակ տվեք կարդալու, նշելու կամ նշում կատարելու յուրաքանչյուր հատվածը տարբերակիչ ձևով, որ երևա, որ դրանք վարդապետությունների սերտման հատվածներ են. *Հովհաննես 15.16, Եփեսացիս 2.19–20, Եփեսացիս 4.11–14:*

Ուսանողներին խնդրեք բացել «Մարգարեներ և հայտնություն» կոչվող 5-րդ վարդապետական թեման *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում:* Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ առաջին հինգ պարբերությունները: Հանձնարարեք դասարանին հետևել, փնտրելով վարդապետական պնդումներ, որոնք հիմնված են գրատախտակին գրված վարդապետությունների սերտման երեք հատվածների վրա:

Խնդրեք ուսանողներին պատմել՝ ինչ գտան նրանք: Կարող եք հրավիրել ուսանողներին նշել կամ ընդգծել հետևյալ վարդապետական պնդումները.

- **Մարգարեն այն անձն է, որը կանչվում է Աստծո կողմից՝ Նրա անունից խոսելու համար:**
- **Մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում են Նրա ավետարանը: Նրանք հայտնի են դարձնում Աստծո կամքը և Նրա ճշմարիտ էությունը: Նրանք դատապարտում են մեղքը, նախազգուշացնում են դրա հետևանքների մասին և օգնում են մեզ խուսափել մոլորությունից:**
- **Իր մահկանացու ծառայության ընթացքում և մեր օրերում նույնպես, Տերը հիմնեց Իր Եկեղեցին մարգարեների և առաքյալների հիմքի վրա:**

Մաս 2 (5 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ վարդապետությունը. *Մարգարեն այն անձն է, որը կանչվում է Աստծո կողմից՝ Նրա անունից խոսելու համար:* Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Հովհաննես 15.16-ը, փնտրելով բառեր կամ բառակապակցություններ, որոնք ուսուցանում են այս վարդապետությունը:

Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով: Կարող եք առաջարկել, որ նրանք նշեն. «Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք. Այլ ես ընտրեցի ձեզ, և կարգեցի ձեզ» արտահայտությունը:

- Ի՞նչ է սովորեցնում մեզ այս հատվածը մեկի մասին, ով դառնում է մարգարե:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ մարգարեները ընտրվում և կանչվում են Աստծո կողմից և ոչ թե մարդու:

Բացատրեք, որ *կարգել* բառը նշանակում է պաշտոնապես լիազորվել Աստծո քահանայության իշխանությամբ՝ ձեռնադրման միջոցով:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ մեկը պատշաճ ձևով կարգված լինի Աստծո անունից խոսելու համար:

Մաս 3 (10 րոպե)

Գրեք վարդապետական հետևյալ պնդումը գրատախտակին. *Մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում են Նրա ավետարանը: Նրանք հայտնի են դարձնում Աստծո կամքը և Նրա ճշմարիտ էությունը: Նրանք դատապարտում են մեղքը, նախազգուշացնում են դրա հետևանքների մասին և օգնում են մեզ խուսափել մոլորությունից:*

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Եփեսացիս 4.11-14 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել ՝ փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք հիմնված են գրատախտակին գրված վարդապետական պնդումների վրա:

Հորդորեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

Նշեք, որ 12-րդ հատվածն ուսուցանում է երեք կարևոր պատճառներ, թե ինչու է Աստված մարգարեներ կանչում: Կարող եք առաջարկել ուսանողներին նշել այս երեք պատճառները:

Դասարանը բաժանեք երեք խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք քննարկել հետևյալ հարցերից մեկը: (Խրախուսեք ուսանողներին դիմել Եփեսացիս 4.11–14-ի վարդապետությանը, որը գրված է գրատախտակին: Հիշեցրեք նրանց, որ մենք աջակցում ենք Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին՝ որպես մարգարեներ):

1. Ինչպե՞ս են մարգարեներն օգնում կատարելագործել սրբերին:
2. Որո՞նք են մարգարեների կատարած «պաշտոնի գործի» որոշ օրինակները (հատված 12):
3. Ինչպե՞ս են մարգարեները շենացնում կամ ամրացնում Եկեղեցին:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Եփեսացիս 4.13–14 հատվածները, տեսնելով, թե ինչ օրհնություններ ենք ունենում Եկեղեցու ապրող մարգարեների շնորհիվ:

Հանձնարարեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

- Ինչպե՞ս են մարգարեներն օգնում մեզ՝ Եկեղեցու անդամներիս, հասնել «հավատքի միությանը» (հատված 13): Ինչո՞ւ է դա կարևոր:
- Ինչպե՞ս են մարգարեներն օգնում մեզ, որ չլինենք «երերված ու տատանված [կեղծ] վարդապետության ամեն քամուցը» (հատված 14):
- Կեղծ վարդապետությունների ի՞նչ օրինակներ կան, որոնցից մեր մարգարեներն օգնում են մեզ պաշտպանված լինել:

Կարող եք հրավիրել ուսանողներին պատասխանել հետևյալ հարցին իրենց սուրբ գրությունների ուսումնասիրության օրագրում կամ դասարանի նոթատետրում.

- Ինչպե՞ս է մարգարեի վերջին ելույթը, ուսմունքը կամ վկայությունը օգնել ձեզ աճելու Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին գիտելիքով և խուսափել խաբեությունից:

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո հրավիրեք ուսանողներին, եթե հարմար են գտնում, կիսվել դասարանի հետ իրենց գրածով:

Մաս 4 (10 րոպե)

Գրատախտակին գրեք Եփեսացիս 2.19–20-ում ուսուցանվող վարդապետության պնդումը. *Իր մահկանացու ծառայության ընթացքում և մեր օրերում նույնպես, Տերը հիմնեց Իր Եկեղեցին մարգարեների և առաքյալների հիմքի վրա:*

Բացատրեք, որ Պողոս Առաքյալը գրել է իր նամակը եփեսացիներին՝ այնտեղի Եկեղեցու անդամներին հոգեպես ամրապնդելու, պաշտպանելու և միավորելու նպատակով, որոնցից մի քանիսը տատանվում էին իրենց հավատքում:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Եփեսացիս 2.19-20 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել՝ փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնք ամրացնում են գրատախտակին գրված պնդումը:

Խնդրեք ուսանողներին հաղորդել իրենց գտածի մասին:

- Ձեր կարծիքով ինչպե՞ս ամրապնդեց Եփեսոսի սրբերին այն գիտելիքը, որ Քրիստոսը կազմակերպել է Իր Եկեղեցին մարգարեների և առաքյալների հիմքի վրա:
- Ձեր կարծիքով ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին նույնպես կազմակերպված է մարգարեների և առաքյալների հիմքի վրա:

Ուսանողներին բաժանեք զույգերի կամ փոքր խմբերի և հանձնարարեք նրանց քննարկել հետևյալը.

- Շատերը կարծում են, որ կազմակերպված կրոնը ավելի շատ նման է մարդակերտ գյուտի: Ինչպե՞ս դուք կարող եք օգտագործել Եփեսացիս 2.19–20 հատվածներում ուսուցանված ճշմարտությունը, որպեսզի ինչ-որ մեկին օգնեք հասկանալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն պատկանելու և մասնակից լինելու կարևորությունը:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել, թե ինչ են քննարկել:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին լսել, թե Երեց Քրիստոֆերսոնը ինչ է ասել Եկեղեցու նպատակի մասին: (Կարող եք յուրաքանչյուր ուսանողի տրամադրել այդ խոսքից մեկական օրինակ:)

«Ես գիտեմ, որ կան մարդիկ, ովքեր իրենց համարում են կրոնասեր կամ հոգևոր, սակայն հրաժարվում են Եկեղեցի հաճախելուց կամ նույնիսկ ժխտում են այդպիսի հաստատության կարիքը: Կրոնասերի կյանքով ապրելը նրանց համար բացառապես անձնական է: Այնուամենայնիվ, Եկեղեցին ստեղծագործությունն է Նրա՝ Հիսուս Քրիստոսի, ում մեջ կենտրոնացված է մեր հոգևորությունը: …

…Հետո, ժամանակների գագաթնակետին, Հիսուսը կազմակերպեց Իր աշխատանքը այնպիսի եղանակով, որ ավետարանը հնարավոր լիներ հաստատել բազմաթիվ ազգերի մեջ և տարբեր ազգությունների մեջ միաժամանակ: Այդ կազմակերպությունը՝ Հիսուս Քրիստոսի այս Եկեղեցին, հիմնվել է «առաքեալների և մարգարէների հիմքի վրա շինած, որի անկիւնի գլուխը Հիսուս Քրիստոսն է» [Եփեսացիս 2.20]: Այն ներառում էր հավելյալ պաշտոնյաներ, ինչպիսիք են՝ յոթանասունականները, երեցները, եպիսկոպոսները, քահանաները, ուսուցիչները և սարկավագները: …

Ուրացությունից ու Եկեղեցու մասնատումից հետո, որը Նա կազմավորել էր, մինչ երկրի վրա էր, Տերը մեկ անգամ ևս վերահաստատեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Հնադարյան նպատակը, այսինքն՝ քարոզել Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրը և սպասավորել փրկության արարողությունները, շարունակում է գործել. այլ կերպ ասած մարդկանց բերել դեպի Քրիստոսը» (“Why the Church,” *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2015, 108):

- Ըստ երեց Քրիստոֆերսոնի՝ ո՞րն է եղել Եկեղեցու նպատակը հնում և այսօր:

Գործնական վարժություններ (30-40 րոպե)

Օգնեք ուսանողներին կիրառել Հոգևոր գիտելիք ձեռք բերելու երեք սկզբունքները, որոնք վերաբերում են «Մարգարեներ և հայտնություն» թեմային. գործել հավատքով, քննել հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից և ձգտել մեծացնել մեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:

Այս բաժնի վարժությունները կարող են կատարվել մեկ դասի ընթացքում կամ բաժանվել տարբեր դասերի միջև՝ կախված դասացուցակից և ձեր ուսանողների կարիքներից:

Վարժություն 1 (20-25 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ երեք սկզբունքները.

- *Գործեք հավատով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Զգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք *Երիտասարդներին զորացնելու համար* [գրքույկ, 2011] գրքույկից մեկական օրինակ և խնդրեք նրանց կարդալ այն, տեսնելով թե ապրող մարգարեները մեզ ինչ վարքագծից են խորհուրդ տալիս խուսափել:

Խնդրեք ուսանողներին ներկայացնել իրենց բացահայտումները և գրատախտակին թվարկեք նրանց պատասխաններից մի քանիսը:

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ նրանք ունեն այլ հավատի մի ընկեր, որը հարցնում է. «Իմ կարծիքով շատ տարօրինակ է, որ մորմոնները չեն …»: Հրավիրեք ուսանողներին ավարտել նախադասությունը գրատախտակին գրված ցուցակից որևէ մեկով:

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կօգտագործեն գրատախտակին գրված երեք սկզբունքները՝ իրենց ընկերների հարցին վստահ պատասխանելու համար: Բացատրեք, որ նրանք հնարավորություն կունենան դերերով խաղալ այդ երկխոսությունը: Հետևյալ հարցերը կարող եք օգտագործել, որպեսզի օգնեք ուսանողներին ձևակերպել իրենց մտքերը: (Կարող եք տրամադրել այս հարցերն ուսանողներին թերթիկների տեսքով:)

Հավատով գործեք.

- Ձեր կարծիքով, մարգարեների ուսմունքներին ձեր հնազանդությունն ինչպե՞ս կօգնի ձեզ պատասխանել ձեր ընկերոջ հարցին:
- Ինչպե՞ս կկարողանայիք հրավիրել ձեր ընկերոջը գործել հավատքով իր ունեցած հարցի դեպքում:

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից.

- Ի՞նչ դուք գիտեք մարգարեների դերի մասին Երկնային Հոր փրկության ծրագրում:
- Ի՞նչ հնարավոր թյուր կարծիք կամ կեղծ ենթադրություն կարող է ձեր ընկերն ունենալ մարգարեների մասին:
- Ինչպե՞ս են մարգարեներն ամրապնդել ձեզ և օգնել ավելին իմանալ Հիսուս Քրիստոսի և Երկնային Հոր մասին:

Զգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով.

- Ի՞նչ աղբյուրներից կարող եք օգտվել, որպեսզի ավելի խորը իմացություն ձեռք բերեք այն մասին, թե ինչու են մարգարեները մեզ խորհուրդ տալիս խուսափել այնպիսի վարքագծից, ինչի մասին ձեր ընկերոջ հարցն էր: (Կարող եք ուսանողներին ժամանակ տալ, որ

պրպտեն որոշ նյութեր [ինչպես օրինակ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում], վերջին օրերի մարգարեների ելույթները և վկայությունները, որոնք կօգնեն նրանց ավելի խորը հասկանալ և բացատրել մարգարեների խորհուրդներն ու ուսմունքները:)

Բավարար ժամանակ հետո ուսանողներին բաժանեք զույգերի և խնդրեք նրանց հերթով կիսվել միմյանց հետ, թե ինչպես կարձագանքեին ընկերոջ հարցին վերոհիշյալ իրադրությունում: Երբ բոլորը կմասնակցեն, կարող եք եզրափակել այս վարժությունը, հրավիրելով մի քանի ուսանողների կիսվել իրենց վկայություններով վերջին օրերի մարգարեների մասին:

Վարժություն 2 (10-15 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ երեք սկզբունքները.

- *Գործեք հավատով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Դասարանի համար բարձրաձայն կարդացեք հետևյալ իրավիճակը.

Դուք մի ընկեր ունեք քվորումում կամ դասարանում, ով սկսել է չհաճախել ընդհանուր և կիրակնօրյա եկեղեցական ժողովներին: Դուք որոշում եք զրուցել նրա հետ այդ մասին: Ձեր ընկերն ասում է. «Գիտես, ես սկսել եմ մտածել, թե արդյոք ինչո՞ւ է անհրաժեշտ գնալ որոշակի Եկեղեցի: Այս երկրի վրա բազմաթիվ լավ մարդիկ կան, ովքեր չեն հաճախում որևէ Եկեղեցի, էլ չեմ ասում մեր Եկեղեցու մասին: Ես կարծում եմ, որ քանի դեռ նրանք լավ կյանքով են ապրում և լավ են վերաբերվում ուրիշներին, նրանք երկնքում վարձք ունեն»:

- Մարգարեների և հայտնության վերաբերյալ վարդապետության ո՞ր կետերը կօգնեն ձեր ընկերոջը հասկանալ Եկեղեցու ժողովներին հավատարիմ հաճախելու կարևորությունը:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի օգնեք ընկերոջը գործել հավատով, քննել հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից և ձգտել մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով, որպեսզի ավելի լավ հասկանա Եկեղեցու ժողովներին հաճախելու կարևորությունը:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Ուսանողներին տվեք մի քանի րոպե վերանայելու վարդապետության սերտման հատվածները, որոնք սովորել են այս ուսումնական տարվա ընթացքում: Հրավիրեք ուսանողներից մեկին իր սուրբ գրություններով կանգնել դասարանի առաջ: Խնդրեք այդ ուսանողին բացել

վարդապետությունների սերտման հատվածներից մեկը, առանց որևէ մեկին ցույց տալու: Խնդրեք ուսանողին գրատախտակին մի բառ գրել վարդապետության սերտման տվյալ հատվածից: (Ասացեք ուսանողին, որ հատվածից ընտրի կարևոր բառերը, ոչ թե այնպիսի բառեր, ինչպես օրինակ *և* կամ *այս*):

Հրավիրեք մյուս ուսանողներին իրենց սուրբ գրություններում փնտրել վարդապետության սերտման այն հատվածը, որտեղից կարող է լինել այդ բառը: Եթե մի բառի օգնությամբ ոչ մեկը չկարողանա կռահել հատվածը, խնդրեք ուսանողին գրատախտակին ևս մեկ բառ գրել վարդապետությունների սերտման այդ հատվածից: Կրկնեք այնքան, մինչև գոնե մի ուսանող կարողանա բացել ճիշտ հատվածը: Խնդրեք դասարանին բացել այդ հատվածը և միասին արտասանել այն: Կրկնեք խաղը մեկ այլ ուսանողի և վարդապետությունների սերտման մեկ այլ հատվածի հետ:

Քահանայություն և քահանայության բանալիներ

Նշում. Վարդապետության սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մեկ կամ մի քանի դասերի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (20 րոպե)

Մաս 1 (7 րոպե)

Ուսանողներին ցույց տվեք մի բանալի կամ բանալի նկարեք գրատախտակին և խնդրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ նպատակով է այն օգտագործվում: Բացատրեք, որ Տերն օգտագործել է բանալու համանմանությունը, որպեսզի օգնի մեզ հասկանալ, թե ինչպես է Ինքը ղեկավարում և կառավարում Իր քահանայությունը և երկրի վրա Իր աշխատանքը:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ «Քահանայություն և քահանայության բանալիներ» կոչվող 6-րդ վարդապետական թեման *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում:* Հանձնարարեք դասարանին հետևել և ընդգծել վարդապետական այն պնդումները, որոնք օգնում են իրենց հասկանալ, թե ինչ են քահանայության բանալիները և ինչպես են դրանք առնչվում քահանայության զորության հետ:

- Ինչպե՞ս է սահմանվում քահանայությունը:
- Ի՞նչ վարդապետական պնդումներ հայտնաբերեցիք, որոնք պարզաբանում են, թե ինչ են քահանայության բանալիները: (Հնարավոր է, ուսանողները ցանկանան քննարկել վարդապետական մի քանի պնդումներ իրենց կարդացածներից: Քննարկումից հետո առաջարկեք նրանց նշել երրորդ պարբերության հետևյալ վարդապետությունը. **Քահանայության բանալիները նախագահելու իրավունքներն են, կամ զորությունը, որն Աստված տալիս է մարդուն՝ Աստծո թագավորությունը երկրի վրա ղեկավարելու և առաջնորդելու համար**):

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ վարդապետությունը, հրավիրեք նրանց հետևյալ հարցերը քննարկելիս օգտագործել այն, ինչն իրենք նշել են այս վարդապետական թեմայից.

- Ի՞նչ կապ եք դուք տեսնում քահանայության բանալիների և արարողությունների միջև:
- Քահանայության ո՞ր արարողությունները պետք է թույլատրվեն նրանց կողմից, ովքեր կրում են քահանայության համապատասխան բանալիները:

Օգնեք ուսանողներին հասկանալ, որ փրկող արարողությունները (ներառյալ մկրտությունը, հաստատումը, Մելքիսեդեկյան Քահանայության կարգումը [տղամարդկանց համար], տաճարային օժտումը և տաճարային կնքումը) պահանջում են հաստատում քահանայության ղեկավարի կողմից, ով կրում է քահանայության համապատասխան բանալիները կամ ով գործում է այն անձի ղեկավարության ներքո, ով կրում է այդ բանալիները (տես նաև 7-րդ վարդապետական թեման՝ «Արարողություններ և ուխտեր» *Վարդապետությունների սերման հիմնական փաստաթղթում*)։ Հաստատում է պահանջվում նաև երեխայի անվանակոչման և օրհնության համար, գերեզմանի օծման, հայրապետական օրհնություն տալու, ինչպես նաև հաղորդությունը պատրաստելու, օրհնելու և բաժանելու համար։ Սակայն Մելքիսեդեկյան քահանայություն կրողները կարող են սրբագործել յուղը, սպասավորել հիվանդներին, տալ հայրական օրհնություններ, ինչպես նաև մխիթարության ու խորհրդի այլ օրհնություններ՝ առանց քահանայության ղեկավարից նախապես թույլտվություն ստանալու։

- Ո՞րն է կապը Եկեղեցու կոչումների և քահանայության բանալիների միջև թե տղամարդկանց, թե կանանց համար։

Մաս 2 (7 րոպե)

Ուսանողների հետ վերանայեք հետևյալ վարդապետությունը. Քահանայության բանալիները նախագահելու իրավունքներն են կամ զորությունն է, որն Աստված տալիս է մարդուն՝ Աստծո թագավորությունը երկրի վրա ղեկավարելու և առաջնորդելու համար։ Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել իրենց հասկացողությունն այս ճշմարտության վերաբերյալ, խնդրեք նրանց պատկերացնել, թե նրանց տվել են մի մեքենա, որը վարելու համար բանալի է պահանջվում, սակայն բանալին չեն տրվել։

- Ինչո՞ւ է ձեզ հարկավոր բանալին, եթե դուք կարող եք մտնել այդ մեքենայի մեջ։ (Թեև նրանք կարող են մտնել մեքենայի մեջ, բայց բանալի է հարկավոր, որպեսզի շարժիչը սկսի աշխատել և թույլ տա, որ մեքենան գործի։)
- Այս համանմանությունն ինչպե՞ս կարելի է վերագրել քահանայության բանալիներին, որոնք անհրաժեշտ են երկրի վրա քահանայության աշխատանքը և Աստծո թագավորությունը ղեկավարելու համար։

Ցուցադրեք կամ թղթային տարբերակով բաժանեք Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Երեց Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ բացատրությունը քահանայության բանալիների վերաբերյալ։ Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ մեկնաբանությունը։ Դասարանին խնդրեք հետևել՝ գտնելով, թե Նախագահ Նելսոնն ինչպես է նկարագրել քահանայության բանալիները։



«Բանալիները կարևոր են և արժեքավոր: Ուր էլ որ գնում ենք, շատերս մեր գրպաններում բանալիներ ենք պահում: Կան այլ բանալիներ, որ ոչ միայն կարևոր ու արժեքավոր են, այլև թանկարժեք են, զորավոր և անտեսանելի: Դրանք հավերժական կարևորություն ունեն: Դրանք քահանայության բանալիներն են: …

Քահանայությունը Աստծո իշխանությունն է, որը տրվել է մարդուն՝ սպասավորելու համար մարդկանց փրկությունը: Այդ գործերն ուղղորդող զորությունը կազմում է քահանայության բանալիները» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* [1998], 141): Քահանայություն կրելը և քահանայության բանալիները կրելը տարբեր բաներ են: Երբ անհատին տրվում են բանալիները, նա էլ չի ստանում քահանայություն: Այն, ինչ նա ունի, քահանայության աշխատանքը ղեկավարելու իրավունքն է» (“Keys of the Priesthood,” *Ensign*, Oct. 2005, 40):

- Ի՞նչ սովորեցիք Նախագահ Նելսոնի բացատրությունից, որն օգնում է ձեզ ավելի լավ հասկանալ քահանայության բանալիների իմաստը:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ «Քահանայություն և քահանայության բանալիներ» կոչվող 6-րդ վարդապետական թեմայի չորրորդ պարբերությունը՝ *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից:* Խնդրեք նրանց գտնել այնպիսի մարդկանց, ովքեր կրում են քահանայության բանալիներ: Հրավիրեք ուսանողներին պատմել իրենց գտածի մասին:

- Ե՞րբ է ձեր կյանքն օրհնվել քահանայության բանալիներ կրող մեկի կողմից:

Մաս 3 (6 րոպե)

Գրատախտակին գրեք *Մատթեոս 16.15–19* և բացատրեք, որ սա վարդապետական սերտման հատված է , որն ուսուցանում է մեզ քահանայության բանալիների մասին: Հրավիրեք ուսանողներին նշել այս հատվածները տարբերակիչ ձևով, որտեղից պարզ կլինի, որ դրանք վարդապետական սերտման հատվածներ են: Խրախուսեք նրանց հուշող բառեր գրել իրենց սուրբ գրությունների լուսանցքում, որոնք կօգնեն հիշել սուրբ գրության այս հատվածներում ուսուցանվող վարդապետությունը քահանայության բանալիների վերաբերյալ:

Բացատրեք, որ Փրկիչը մի անգամ հարցրեց Իր Առաքյալներին, թե նրանց կարծիքով, ո՞վ է Ինքը: Ի պատասխան, Պետրոսը վկայեց, որ Հիսուսը Աստծո Որդին է: Այնուհետև Հիսուսը հայտարարեց, որ Նա կտա Պետրոսին Իր արքայության բանալիները: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մատթեոս 16.15–19: Խնդրեք դասարանի անդամներին հետևել, տեսնելով, թե Հիսուսն ինչ ասաց Պետրոսին քահանայության բանալիների վերաբերյալ:

- Համաձայն 19-րդ հատվածի, ըստ Փրկիչի, Պետրոսն ի՞նչ զորություն կունենա անելու, երբ ստանա արքայության կամ քահանայության բանալիները: (Կապելու և արձակելու երկրի վրա և երկնքում: Սա նշանակում է, որ այս քահանայության բանալիների ներքո կատարված գործողությունները, այսինքն արարողությունները, վավեր են և ուժի

մեջ են երկրի վրա և հավերժության մեջ, այդ թվում՝ տաճարներում ընտանիքներ կապելը կամ կնքելը):

- Ինչպե՞ս կօգտագործեք այս վարդապետական սերտման հատվածը, որպեսզի օգնեք ինչ-որ մեկին հասկանալ իշխանության կարևորությունը, որ մարգարեն և առաքյալներն ունեն այսօր՝ Աստծո գործը ղեկավարելու համար:

Նշում. Կրկնեք վարպետությունների սերտման հատվածները ուսանողների հետ հետագա դասերի ժամանակ, որպեսզի օգնեք նրանց հիշել և օգտագործել դրանք: Առիթ փնտրեք կրկնելու այս և մյուս վարդապետական սերտման հատվածները ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Գործնական վարժություն (25-30 րոպե)

Օգնեք ուսանողներին փորձել կիրառել Հոգևոր գիտելիք ձեռք բերելու երեք սկզբունքները, որոնք վերաբերում են 6-րդ վարդապետական թեմային. «Քահանայություն և քահանայության բանալիներ» *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից:* Կարող եք գրել այդ սկզբունքները գրատախտակին՝ գործնական վարժությունները սկսելուց առաջ.

- *Գործեք հավատով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Դասարանը բաժանեք երեք խմբի և յուրաքանչյուր խմբի ուսանողներին տվեք օժանդակ նյութից մի օրինակ, որը համապատասխանում է իրենց խմբի համարին: Յուրաքանչյուր խմբին տվեք 8-10 րոպե ժամանակ քննարկելու իրենց օժանդակ նյութում առկա սցենարը և հարցերը: Բացատրեք, որ խմբի քննարկումից հետո յուրաքանչյուր ուսանող հնարավորություն կունենա փորձելու պատասխանել հանձնարարված հարցին մյուս երկու խմբերի ուսանողների հետ:

Խումբ 1

Խմբով կարդացեք հետևյալ սցենարը.

Դուք ծառայում եք որպես միսիոներ, և դուք ու ձեր զուգընկերը մի լսողի ուսուցանում եք մկրտության կարևորության մասին: Երբ դուք հրավիրում եք ձեր լսողին մկրտվել, նա պատասխանում է հարցով. «Ինչո՞ւ ես պետք է նորից մկրտվեմ: Ես արդեն մկրտված եմ իմ Եկեղեցում»:

Քննարկեք, թե ինչպես կարող եք օգնել ձեր լսողին, ստորև բերված սկզբունքների ու հարցերի օգնությամբ.

Գործեք հավատքով.

- Ի՞նչ կարող է անել ձեր լսողը, որպեսզի գործի հավատքով, եթե ձգտում է հասկանալ, թե ինչու կարիք ունի մկրտվելու քահանայության իշխանությամբ և մեկի ղեկավարության ներքո, ով կրում է քահանայության բանալիները:

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից.

- Քահանայության և քահանայության բանալիների մասին իմանալն ինչպես է օգնում, որ ձեր լսողի հարցը մի նոր լույսի տակ դիտվի:

Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով.

- Ինչպե՞ս կարող է Մատթեոս 16.15–19 հատվածներում ուսուցանվող վարդապետությունը օգնել ձեր լսողին գտնել իր հարցի պատասխանը:
- Արդյոք կա՞ն սուրբ գրության ուրիշ հատվածներ, որոնք կօգնեն ձեր լսողին հասկանալ, թե ինչու նա պետք է մկրտվի պատշաճ իշխանությամբ:

Խումբ 2

Խմբով կարդացեք հետևյալ սցենարը.

Մի ընկեր խոստովանում է ձեզ, որ գործել է որոշ լուրջ մեղքեր, այդ թվում՝ խախտել է մաքրաբարոյության օրենքը և փորձում է ապաշխարել: Սուրբ գրություններն ուսումնասիրելիս դուք իմացել եք, որ Եկեղեցու ցանկացած եպիսկոպոս կամ ճյուղի նախագահ կրում է Ահարոնյան Քահանայության բանալիները, այդ թվում «ապաշխարության ավետարանի» բանալիները (ՎևՈւ 13.1):

Դուք քաջալերում եք ձեր ընկերոջը հանդիպել իր եպիսկոպոսի հետ, բայց նա այսպես է արձագանքում. «Ես չգիտեմ, թե ինչու պետք է հանդիպեմ իմ եպիսկոպոսի հետ: Ես գիտեմ, որ պետք է խոստովանեմ այն, ինչ արել եմ, բայց արդեն խոստովանել եմ Տիրոջը: Ես աղոթել եմ ներում ստանալու համար և փոխել եմ իմ վարքը: Ես ընդունել եմ հաղորդությունը: Ինչո՞ւ ես պետք է գնամ եպիսկոպոսի մոտ, որ ստանամ Տիրոջ ներումը: Արդյո՞ք դա իմ ու Տիրոջ խնդիրը չէ»:

Քննարկեք, թե ինչպես կարող եք պատասխանել ձեր ընկերոջը ստորև բերված սկզբունքների ու հարցերի օգնությամբ.

Գործեք հավատքով.

- Ի՞նչ կարող է անել ձեր ընկերը, որպեսզի գործադրի և ամրապնդի իր հավատքը Փրկչի հանդեպ և քահանայության բանալիների հանդեպ, որոնք Նա տվել է Իր լիազորված ծառաներին:

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից.

- Այս գիտելիքը, որ եպիսկոպոսը կրում է քահանայության բանալիները, ինչպե՞ս կօգնի պարզաբանել ձեր ընկերոջ հարցը:

Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով.

- Փրկչի խոսքերը Մատթեոս 16.19-ում ինչպե՞ս կօգնեն ձեր ընկերոջը հասկանալ, թե եպիսկոպոսի կրած քահանայության բանալիներն ինչպե՞ս են առնչվում հավերժական օրհնությունների հետ, որոնք հասանելի են իրեն, ներառյալ մեղքի ներումը:

- Աստվածայնորեն նշանակված ի՞նչ այլ աղբյուրներ կարող է բացել ձեր ընկերը՝ ավելի շատ բան հասկանալու համար:

Խումբ 3

Խմբով կարդացեք հետևյալ սցենարը.

Ձեր ընտանիքի ու մոտ հարազատների հետ միասին մեկ շաբաթ հանգստանալու ժամանակ ընտանիքում քննարկվում է, թե կիրակի օրը որ ծուխը կամ ճյուղը հաճախեք: Ձեր եղբայրը, ով Ահարոնյան Քահանայության քահանա է, ասում է ձեզ. «Իսկ ինչո՞ւ մենք չենք ունենում հենց մեր հաղորդության ժողովը: Ես քահանա եմ և կարող եմ օրհնել ու բաժանել հաղորդությունը, իսկ դու և ընտանիքի մի քանի մյուս անդամները կարող են ասել աղոթքները և ելույթ ունենալ»:

Քննարկեք, թե ինչպես կարող եք պատասխանել ձեր եղբոր առաջարկին ստորև բերված սկզբունքների ու հարցերի օգնությամբ.

Գործեք հավատքով.

- Ծրագրելով մասնակցել հաղորդությանը, ինչպե՞ս կարող է ձեր ընտանիքը հավատք ցուցաբերել իշխանություն ունեցողների հանդեպ, ովքեր կրում են քահանայության բանալիները, որպեսզի ղեկավարեն քահանայության գործերը:

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից.

- Քահանայության բանալիների վարդապետության ըմբռնումն ինչպե՞ս է օգնում իմանալ, թե քահանայություն կրողը երբ կարող է կատարել արարողություն, ինչպես օրինակ՝ հաղորդության սպասավորումը:

Զգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով.

- Աստվածայնորեն նշանակված ուրիշ ի՞նչ աղբյուրների կարող եք դիմել, որ ավելի հարստացնեք ձեր գիտելիքն այն մասին, թե քահանայություն կրողը երբ է լիազորված կատարելու քահանայության արարողությունը:

Եթե ուսանողները օգնության կարիք ունեն, թե իրենց հանձնարարված սցենարներում առկա հարցերի վերաբերյալ որ աստվածային աղբյուրներին դիմել, կարող եք առաջարկել, որ ուսումնասիրեն հետևյալ աղբյուրները.

Խումբ 1. Վարդապետություն և Ուխտեր 22.2-4:

Խումբ 2. Մոսիա 26.12–15, 29–31, Երեց Ս. Սքոթ Գրոու, «Ինչո՞ւ և ինչ ես պետք է խոստովանեմ իմ եպիսկոպոսին»: *New Era,* Oct. 2013, 28–30, կամ *Լիահոնա,* հոկտ. 2013, 58–60:

Խումբ 3. «Քահանայության արարողությունները և օրհնությունները», *Handbook 2: Administering the Church* (2010), 20.1, LDS.org, Երեց Դալլին Հ. Օուքս, «Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2014, 49–52:

Երբ յուրաքանչյուր խումբը կքննարկի իրեն հանձնարարված սցենարը, կքննարկի, թե ինչպես պետք է վարվեն այդ դեպքում, երեք ուսանողից բաղկացած խմբեր կազմեք այնպես, որ ամեն խմբում լինի մի ուսանող՝ Խումբ 1-ից, մի ուսանող՝ Խումբ 2-ից և մի ուսանող՝ Խումբ 3-ից: Հրավիրեք յուրաքանչյուր ուսանողի կարդալ իրեն հանձնարարված

սցենարը խմբի մյուս ուսանողներին և ապա դերախաղով ցուցադրի, թե ինչպես կպատասխաներ սցենարի հարցին:

Բավարար ժամանակ հատկացնելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց մտքերով և վկայություններով օրհնությունների վերաբերյալ, որոնք մենք ունենք՝ առաջնորդվելով քահանայության բանալիները կրողների կողմից:

Վարդապետության սերտման կրկնություն

Որպեսզի օգնեք ուսանողներին հիշել վարդապետության սերտման սուրբ գրությունների հատվածների տեղերը, որոնք ուսումնասիրել են այս դասընթացի շրջանակներում, խնդրեք յուրաքանչյուր ուսանողի թղթի մի կտորի վրա գծել 4 տող × 4 սյունակից բաղկացած մի աղյուսակ: Խնդրեք նրանց համարակալել տողերը վերևից ներքև և սյունակների վերևում հերթականությամբ գրել տառեր *Ա*, *Բ*, Գև Դ:

	Ա	Բ	Գ	Դ
1				
2				
3				
4				

Կրկնեք վարդապետության սերտման հատվածները, որոնք ուսանողները սովորել են այս դասընթացի ընթացքում: Այնուհետև խնդրեք նրանց աղյուսակի մեջ գրել վարդապետությունների սերտման 16 հատվածների հղումներ՝ կամայական հերթականությամբ: (Եթե ուսանողների անցած հատվածները 16-ից քիչ են, նրանք կարող են որոշ հատվածներ մի քանի անգամ գրել: Եթե նրանք անցել են 16-ից շատ հատվածներ, կարող եք ասել, որ ավելացնեն տողեր և սյունակներ որքան հարկավոր է):

Բարձրաձայն կարդացեք վարդապետական սերտման հատվածներից մեկի մի մասը և յուրաքանչյուր ուսանող իր մատը թող դնի աղյուսակի այն վանդակի վրա, որում գրված հղումը, իր կարծիքով, համապատասխանում է այդ հատվածին: Կարդալուց հետո բարձրաձայն ասացեք հատվածի հղումը, որպեսզի ուսանողները ստուգեն իրենց պատասխանները: Եթե նրանք ճիշտ հղումն են մատնանշել, թող այնտեղ դնեն *X* նշանը:

Եթե ուսանողը նշել է մի տողի կամ սյունակի բոլոր չորս վանդակները, նա պետք է բացականչի. «Վարդապետության սերտում»: Կարող եք շարունակել, մինչև յուրաքանչյուրը կնշի չորս վանդակ մի տողում, կամ մինչև ուսանողները նշեն իրենց աղյուսակի բոլոր վանդակները:

Արարողություններ և ուխտեր

Նշում. Վարդապետությունների սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մեկ կամ մի քանի դասերի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (20 րոպե)

Մաս 1 (10 րոպե)

Գրատախտակին գրեք *Արարողություններ* և *Ուխտեր* բառերը: Խնդրեք ուսանողներին ասել, թե ինչպես կսահմանեին այս խոսքերից յուրաքանչյուրը մեկի համար, ով ծանոթ չէ դրանց:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ «Արարողություններ և ուխտեր» կոչվող 7-րդ վարդապետական թեմայի պարբերությունները *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից:* Խնդրեք ուսանողներին հետևել և նշել այն բառերն ու արտահայտությունները, որոնք օգնում են նրանց հասկանալ, թե ինչ են իրենցից ներկայացնում արարողությունները և ուխտերը:

Բավարար ժամանակից հետո հրավիրեք մի քանի ուսանողի կիսվել, թե ինչ են նշել: Խորհեք հետևյալ հարցերը տալու շուրջ.

- Ի՞նչ է փրկող արարողությունը:
- Ավետարանի ո՞ր փրկող արարողություններն եք դուք ստացել:
- Ի՞նչ է սովորեցնում վարդապետական այս թեման այն մասին, թե ինչո՞ւ է կարևոր մկրտությունը: (Հրավիրեք ուսանողներին նշել հետևյալ ճշմարտությունը *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթի* իրենց օրինակում. **Մկրտությունն անհրաժեշտ է մարդուն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դառնալու և սելեստիալ արքայություն մտնելու համար:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհրաժեշտ մկրտությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դառնալու և սելեստիալ արքայություն մտնելու համար:

Խնդրեք ուսանողներին լուռ մտաբերել այն պահը, երբ նրանք մկրտվել և հաստատվել են որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե որտեղ են մկրտվել, ով է նրանց մկրտել և դրա հետ կապված ինչ տպավորություններով կամ զգացումներով կցանկանային կիսվել:

Մաս 2 (10 րոպե)

Ուսանողների հետ միասին կրկնեք «Արարողություններ և ուխտեր» վարդապետական թեմայից, *Վարդապետական սերտման հիմնական փաստաթղթի* հետևյալ վարդապետությունը. Մկրտությունն ահրաժեշտ է

մարդուն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դառնալու և սելեստիալ արքայություն մտնելու համար:

- Նոր Կտակարանից ո՞ր սուրբ գրության հատվածն է ընկած այս վարդապետության հիմքում:

Հրավիրեք ուսանողներին բացել Հովհաննես 3.5 հատվածը. կարող եք առաջարկել, որ նրանք նշեն վարդապետության սերտման այս հատվածը տարբերակիչ ձևով, որպեսզի կարողանան հեշտությամբ գտնել այն: Բացատրեք, որ Հովհաննես 3 գլուխը պարունակում է Փրկչի ուսմունքները, ուղղված Նիկոդեմոս անունով մի փարիսեցու, ով ձգտեց ավելին իմանալ ավետարանի մասին:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հովհաննես 3.5 հատվածը: Դասարանին հրավիրեք հետևել՝ փնտրելով, թե ըստ Փրկչի, ի՞նչ է պահանջվում Աստծո արքայությունը մտնելու համար:

- Փրկչի խոսքերով՝ ի՞նչ է անհրաժեշտ Աստծո արքայությունը մտնելու համար:
- Ո՞ր փրկող արարողությանն է վերաբերում «ջրից ծնվելը»:
- Ո՞ր փրկող արարողությանն է վերաբերում «Հոգուց ծնվելը»:
- Մկրտված լինելն ինչպես է օգնում ձեզ ձեր ջանքերում արժանի լինել սելեստիալ արքայություն մտնելու և Երկնային Հոր հետ կրկին ապրելու համար:

Գործնական վարժություն (10 րոպե)

Հիշեցրեք ուսանողներին երեք սկզբունքների մասին, որոնք զետեղված են «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնում, *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթում* և գրեք դրանք գրատախտակին.

- *Գործեք հավատով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Որպեսզի օգնեք ուսանողներին գործնականում վարժվել այս սկզբունքները կիրառելու ուղղությամբ՝Արարողություններ և ուխտեր թեմային վերաբերող հարցերի հետ կապված, բարձրաձայն կարդացեք հետևյալ սցենարը.

Ձեր ընկերներից մեկը հետաքրքրված է Եկեղեցով և մասնակցում է միսիոներական զրույցներին: Նա կարդացել է Մորմոնի Գրքից հատվածներ, մի քանի անգամ հաճախել է Եկեղեցի և հավատ է ցուցաբերում վերականգնված ավետարանի հանդեպ: Մի օր միսիոներական զրույցից հետո տուն գնալիս ձեր ընկերն ասում է. «Ես հավատում եմ նրան, ինչ ուսուցանել են միսիոներները, բայց արդյոք չե՞մ

կարող ես լինել լավ մարդ և լավ քրիստոնյա առանց մկրտվելու որոշակի եկեղեցում»:

- Ինչպե՞ս կարող եք հրավիրել ձեր ընկերոջը հավատով գործել, այն ժամանակ, երբ նա մտածում է մկրտվելու հրավերի շուրջ:
- Ինչպե՞ս կարող եք օգնել ձեր ընկերոջը մկրտության վերաբերյալ իր հարցին նայել հավերժական տեսանկյունից: Փրկության ծրագրի և Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին ինչ ճշմարտություններով կարող եք կիսվել նրա հետ, որ օգնեք նրան հասկանալ մկրտության արարողության հավերժական կարևորությունը:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի օգնեք ձեր ընկերոջը ավելի խորը հասկացողություն փնտրել սուրբ աղբյուրների միջոցով:
- Ինչպե՞ս կօգտագործեք Հովհաննես 3.5 հատվածը ձեր ընկերոջն օգնելու համար:

Ուսանողներին մի քանի րոպե ժամանակ տվեք, որպեսզի որոնեն «Մկրտություն» բառը Թեմաների Ուղեցույցում, սուրբ գրությունների ուղեցույցում, Աստվածաշնչի բառարանում կամ Աստվածաշնչի թեմաներում՝ (lds.org/topics կայքում), փնտրելով լրացուցիչ տեղեկատվություն կամ սուրբ գրությունների հատվածներ, որոնք կարող են օգնել իրենց ընկերոջը նրա հարցի հետ կապված: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո ուսանողներին բաժանեք զույգերի կամ փոքր խմբերի և հրավիրեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց գտածով: Կարող եք ամեն խմբի հետ որոշ ժամանակ անցկացնել, որպեսզի լսեք նրանց քննարկումները և անհրաժեշտության դեպքում օգնեք:

Կարող եք եզրափակել, հրավիրելով ուսանողներից մեկին կամ մի քանիսին կիսվել իրենց վկայություններով արարողությունների և ուխտերի կարևորության վերաբերյալ, մասնավորապես՝ Երկնային Հոր ծրագրում մկրտության արարողության մասին:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Կարող եք կազմակերպել վիկտորինաներ, որպեսզի ուսանողներին հնարավորություն տաք ստուգելու, թե որքան լավ են հիշում վարդապետությունների սերտման հատվածները: Հարցերը կարող են պարունակել հուշումներ, ինչպես օրինակ գլխավոր բառեր կամ սուրբ գրությունների հղումներ, հատվածներից մեջբերումներ կամ հնարավոր դեպքեր, որոնք ներկայացնում են հատվածներում ուսուցանված ճշմարտությունները: Վիկտորինաների ժամանակ կարող եք կարդալ հարցերը բարձրաձայն, գրել դրանք գրատախտակին կամ թղթի վրա: Վիկտորինայի հարցերին պատասխանելուց հետո կարող եք ուսանողներից զույգեր կազմել՝ բարձր միավորներ վաստակած ուսանողը ավելի ցածր միավորներ ունեցողի հետ: Բարձր միավորներ ունեցող ուսանողը կարող է օգնել ավելի ցածր միավորներ ունեցողին հասկանալ, թե ինչպես արդյունավետ ուսումնասիրել և բարելավել վարդապետությունների սերտման հատվածները: Այս ջանքերի շնորհիվ զույգը կարող է նաև նպատակ դնել հաջորդ վիկտորինայի ժամանակ միասին բարձր միավորներ վաստակել: Պատրաստեք աղյուսակ կամ

ազդատախտակ, որպեսզի ցուցադրեք ուսանողների նպատակները և նշեք նրանց առաջընթացը:

Ամուսնություն և ընտանիք

Նշում. Վարդապետության սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մեկ կամ մի քանի դասերի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (25-30 րոպե)

Մաս 1 (10 րոպե)

Գրատախտակին գրեք *Ա Կորնթացիս 11.11*: Ասացեք, որ սա վարդապետության սերտման հատված է և հրավիրեք ուսանողներին բացել այն սուրբ գրություններում, կարդալ մտքում և նշել առանձնահատուկ ձևով: Բացատրեք, որ այս հատվածն օգնում է մեզ հասկանալ ամուսնության և ընտանիքի վարդապետական թեման:

Բացատրեք, որ Կորնթոսի Եկեղեցու անդամներին ուղղված իր նամակով (ժամանակակից հունարենով) Պողոս Առաքյալն ուսուցանել է ամուսնության մասին: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ա Կորնթացիս 11.11 հատվածը: Խնդրեք դասարանի անդամներին հետևել, տեսնելով, թե Պողոսն ինչ է ուսուցանել ամուսնու և կնոջ հարաբերությունների մասին:

Բացատրեք, որ «Տէրումը» բառը վերաբերում է Երկնային Հոր ավետարանի ծրագրին, որը թույլ է տալիս մեզ ստանալ հավերժական կյանք և դառնալ Նրա նման:

- Այս հատվածն ի՞նչ է ասում տղամարդու և կնոջ միջև ամուսնության կարևորության մասին:

Խնդրեք ուսանողներին կարդալ «Ամուսնություն և ընտանիք» վերնագրով 8-րդ վարդապետական թեման *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից*, փնտրելով արտահայտություններ, որոնք օգնում են մեզ հասկանալ Աստծո ծրագրում տղամարդու և կնոջ միջև ամուսնության կարևորությունը:

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով: Այնուհետև նշեք թեմայի հետևյալ ճշմարտությունը. **Միայն սելեստիալ ամուսնության ուխտի մեջ մտնելու և այն հավատարմորեն պահելու միջոցով կարող են տղամարդն ու կինը իրագործել իրենց աստվածային, հավերժական ներուժը**: Կարող եք առաջարկել ուսանողներին գրել այս վարդապետությունն իրենց սուրբ գրություններում, Ա Կորնթացիս 11.11 հատվածի կողքի լուսանցքում:

Մաս 2 (5-10 րոպե)

Գրատախտակին գրեք այս վարդապետությունը. *Միայն սելեստիալ ամուսնության ուխտի մեջ մտնելու և այն հավատարմորեն պահելու միջոցով կարող են տղամարդն ու կինը իրագործել իրենց աստվածային, հավերժական ներուժը*: Խնդրեք ուսանողներին Նոր Կտակարանում գտնել վարդապետության սերտման հատվածը, որն ուսուցանում է այս վարդապետությունը: Երբ ուսանողները գտնեն Ա Կորնթացիս 11.11-ը խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն:

Հրավիրեք ուսանողներից մեկին կանգնել դասարանի առաջ: Ապա խնդրեք նրան վեր բարձրացնել իր ձեռքերը:

- Ինչո՞վ են նման ձեր երկու ձեռքերը:
- Ինչո՞վ են դրանք տարբեր:

Խնդրեք ուսանողին մի ձեռքը տանի մեջքի հետևը: Այնուհետև դասարանին տվեք հետևյալ հարցերը.

- Ո՞ր գործողություններն է դժվար անել միայն մի ձեռքով:
- Ի՞նչ օրինակներ կան, թե ինչպես են երկու ձեռքերը միասին աշխատելով՝ ուժեղացնում մեզ:
- Ձեռքերի այս օրինակն ինչպե՞ս կարող ենք վերագրել տղամարդու և կնոջ միջև ամուսնության վերաբերյալ վարդապետական այս ճշմարտությանը:

Նշեք, որ ոմանք հնարավորություն չունեն այս կյանքում մտնելու սելեստիալ ամուսնության ուխտի մեջ: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Հովարդ Վ. Հանթերի հետևյալ խոսքերը.



«Ոչ մի օրինություն, ներառյալ հավերժական ամուսնությունը և հավերժական ընտանիքը, չի մերժվի որևէ արժանավոր մարդու: Թեև այս օրինությանը հասնելու համար ոմանք կարող են սպասել որոշ չափով ավելի երկար, երևի նույնիսկ այս մահկանացու կյանքից այն կողմ, բայց այն չի մերժվի» (“The Church Is for All People,” *Ensign,* June 1989, 76):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Երկնային Հոր ծրագրում բոլոր արժանի մարդիկ ի վերջո հնարավորություն կունենան մտնելու սելեստիալ ամուսնության ուխտի մեջ և ունենալ հավերժական ընտանիք:

Մաս 3 (10 րոպե)

Ցուցադրեք կամ յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Խնդրեք դասարանին հետևել, փնտրելով գաղափարներ տղամարդու և կնոջ միջև ամուսնության վարդապետության վերաբերյալ, որն իրենք ուսումնասիրում են:

«Երկրի ստեղծումից հետո Ադամը դրվեց Եդեմական Պարտեզում: Կարևոր էր, սակայն, որ Աստված ասաց. «լավ չէ, որ մարդը մենակ լինի» (Մովսես 3.18, տես նաև Ծննդոց 2.18), և Եվան դարձավ Ադամի կինը և օգնականը: Անհրաժեշտ էր ինչպես արական, այնպես էլ իգական սեռի հոգևոր, ֆիզիկական, մտավոր և հուզական կարողությունների առանձնահատուկ միավորում երջանկության ծրագիրը գործարկելու համար: … Տղամարդն ու կինը նախատեսված են, որ միմյանցից սովորեն, զորացնեն, օրհնեն և լրացնեն միմյանց» (“We Believe in Being Chaste,” *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2013, 41-42):

- Երեց Բեդնարի ուսուցանածն ինչպե՞ս է առնչվում Ա Կորնթացիս 11.11 հատվածում ուսուցանվող ճշմարտության հետ:

Հրավիրեք ուսանողներին սուրբ գրությունների ուսումնասիրության իրենց օրագրում պատասխանել հետևյալ հարցերից մեկին.

- Ի՞նչ կերպ են տղամարդկանց և կանանց հատկանիշներն ու պարտականությունները լրացնում միմյանց ամուսնության մեջ և ընտանիքում:
- Ամուսինն ու կինը ի՞նչ հատկանիշներ կարող են զարգացնել ամուսնության իրենց ուխտի մեջ, որոնք կօգնեն նրանց ավելի նմանվել Երկնային Հորը:

Հրավիրեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց պատասխաններով:

Գործնական վարժություններ (45-55 րոպե)

Հետևյալ վարժությունները կօգնեն ուսանողներին կիրառել տարվա սկզբին սովորած սկզբունքները Հոգևոր գիտելիք ձեռք բերելու ուսումնական փորձի շրջանակներում: Ուսանողներին այս սկզբունքները հիշեցնելու համար օգտակար կլինի գրել դրանք գրատախտակին.

- *Գործեք հավատքով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Զգուշացեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Այս վարժությունները կարող են ուսուցանվել նույն օրը կամ տարբեր օրեր՝ կախված ձեր դասացուցակից և ուսանողների կարիքներից:

Վարժություն 1 (20-25 րոպե)

Նշում. Անհրաժեշտության դեպքում հարմարեցրեք հետևյալ սցենարը ձեր ուսանողների կենսափորձին համաձայն:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ սցենարը.

Միսիայից հետո լրացուցիչ կրթություն ստանալու ճանապարհին դուք հանդիպում և սկսում եք ժամադրվել մեկի հետ, ով Հիսուս Քրիստոսի հանդեպ ամուր վկայություն ունի, հարգալից է վերաբերվում ձեզ և օգնում է ձեզ ավելի լավը դառնալ: Ժամանակի ընթացքում ձեր սերը միմյանց հանդեպ աճում է, և դուք սկսում են խոսել ամուսնության մասին: Սակայն, մտածելով ամուսնության մասին, դուք անհանգստանում եք ամուսնությունից բխող լարվածության և դժվարությունների, ինչպես նաև ընտանիք կազմելու համար այն ժամանակ, երբ զուգահեռ պետք է դպրոց հաճախեք, աշխատեք և սկսեք ձեր կարիերան: Դուք մտածում եք. «Ավելի հեշտ ու ավելի լավ չի՞ լինի սպասել ու հետաձգել ամուսնությունն ու

ընտանիքը, մինչև ավարտեմ դպրոցը, գտնեմ լավ վարձատրվող աշխատանք և բավականաչափ գումար խնայեմ»:

- Ինչո՞ւ է կարող է գայթակղիչ լինել այս պարագայում հետաձգել ամուսնությունը կամ խուսափել դրանից:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի այս հարցի շուրջ մտածելիս և ապագա ծրագրերը կազմելիս հավատով գործեք:
- Աստվածային առաջնորդությունն ունենալու ձգտումը ինչպե՞ս կօգնի ձեզ, որ խելամիտ որոշումներ կայացնեք կրթության, կարիերայի պլանավորման, ամուսնության և ընտանիքի վերաբերյալ:

Հարցրեք ուսանողներին, թե ի՞նչ գիտեն ամուսնության և ընտանիքի դերի մասին փրկության ծրագրում:

- Ինչպե՞ս է Ա Կորնթացիս 11.11 հատվածից մեր սովորած վարդապետությունը վերաբերում տվյալ իրավիճակին:
- Ինչպե՞ս կարող եք վերարտադրել կամ այլ կերպ ձևակերպել այս խնդիրը, որպեսզի այն դիտվի հավերժական տեսանկյունից: (Հնարավոր տարբերակներն են. Ես ի՞նչ կկորցնեմ, եթե հետաձգեմ ամուսնությունը: Որո՞նք են ամուսնությունն ու ընտանիքը իմ կյանքում առաջնահերթ դարձնելու օգուտն ու օրհնությունները՝ այժմ և հավիտյան:

Դասարանը բաժանեք երեքից հինգ ուսանողներից բաղկացած խմբերի և նրանց տվեք 5-10 րոպե ժամանակ՝ որոնելու սուրբ գրությունները և, առկայության դեպքում, ամենավերջին գերագույն համաժողովի ելույթները, ինչպես նաև Եկեղեցու այլ աղբյուրներ՝ ավելի հստակ պատկերացում կազմելու համար, ինչը կառաջնորդի ամուսնության և ընտանիքի հետ կապված նրանց գործողությունների ու որոշումների հարցում: Որպես օրինակ, կարող եք խնդրել մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքը Եկեղեցու տղամարդկանց.



«Եթե դուք մտահոգված եք ձեր կնոջը և ընտանիքը ֆինանսապես ապահովելու հարցով, թույլ տվեք հավաստիացնել ձեզ, որ ամոթ չէ, երբ զույգը խնայում և տնտեսում է: Սովորաբար այդ դժվար ժամանակներում է, որ դուք ավելի եք մոտենում իրար՝ սովորելով զոհաբերել և դժվար որոշումներ կայացնել» (“Priesthood Power,” *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2011, 67):

Հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել, թե ինչ սուրբ գրություններ և թեման հասկանալու համար պիտանի ինչ աղբյուրներ են գտել:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ամուսնությունն ու ընտանիքը առաջնահերթություն դարձնել ձեր կյանքում:
- Ի՞նչ կարող եք անել այժմ, որպեսզի պատրաստվեք հավերժական ամուսնությանն ու ընտանիք կազմելուն:

Վարժություն 2 (25-30 րոպե)

Բարձրաձայն կարդացեք հետևյալ սցենարը.

Երեկոյան ձեր եղբոր հետ զրուցելիս նա խոստովանում է ձեզ, որ դժվարանում է հասկանալ Եկեղեցու ուսմունքները նույնասեռ ամուսնության վերաբերյալ: Նա ասում է. «Ինձ դժվար է հասկանալ, թե ինչու է Եկեղեցին շարունակում ուսուցանել, որ նույնասեռ ամուսնությունը սխալ է: Ինչո՞ւ զրկել մարդկանց երջանկությունից, որը կունենային նույնասեռ հարաբերություններ ստեղծելուց»:

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարձագանքեին այս իրավիճակում:

- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի հավատքով գործեք, երբ ձգտում եք պատասխանել ձեր եղբոր հարցերին:
- Ինչպե՞ս կարող եք օգնել ձեր եղբորը՝ գործել հավատով:
- Ի՞նչ վարդապետություն ենք մենք սովորում, ուսումնասիրելով Ա Կորնթացիս 11.11-ը, որը կօգնի մեզ հասկանալ նույնասեռ ամուսնության խնդիրը Տիրոջ տեսանկյունից:
- Ուրիշ ի՞նչ վարդապետական ճշմարտություններ կան, որոնք կօգնեն մեզ տեսնել նույնասեռ ամուսնության խնդիրը հավերժական տեսանկյունից:

Որպեսզի քաջալերեք ուսանողներին լրացուցիչ գաղափարների համար պրպտել մարգարեական ուսմունքները, այս ուսումնական դասաժամից հետո բաժանեք նրանց «Ինչո՞ւ է ամուսնությունը կարևոր» վերնագրով թերթիկները: Դա քաղվածք է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի ելույթից, որը կոչվում է «Ամուսնությունը կարևոր է Նրա հավերժական ծրագրում»: Հրավիրեք ուսանողներին կարդալ այն իրենց համադասարանցու հետ և փնտրել ամուսնության և ընտանիքի մասին ճշմարտություններ, որոնք կօգնեն իրենց պատասխանել նույնասեռ ամուսնության վերաբերյալ հարցերին:

- Ինչպե՞ս կարող եք օգտագործել Երեց Բեդնարի ուսմունքները, որպեսզի օգնեք ձեր եղբորը նայել նույնասեռ ամուսնության երևույթին փրկության ծրագրի և Հիսուս Քրիստոսի ավետարանի տեսանկյունից:

Նշում. Այս թերթիկում զետեղված ելույթի փոխարեն կարող եք օգտագործել Եկեղեցու որևէ ղեկավարի մեկ ուրիշ կամ ավելի նոր ելույթներից մեկը:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Օգնելով ուսանողներին հիշել և իմանալ, թե ինչպես գտնել վարդապետության սերտման հատվածները, որոնք սովորել են այս ուսումնական տարվա ընթացքում, օգտագործեք հուշումներ, որոնց օգնությամբ ուսանողները կվարժվեն՝ իրենց սուրբ գրություններում հատվածներն արագ գտնելու մեջ: Հուշումները կարող են ներառել

հիմնաբառեր, պնդումների համատեքստեր, վարդապետություն և սկզբունքներ, ինչպես նաև կիրառման գաղափարներ:

Սուրբ գրություններն արագ գտնելու վարժությունները, որոնք կատարելիս ուսանողները մրցում են վարդապետության սերտման հատվածները գտնելու մեջ, կարող են օգնել նրանց ակտիվորեն ներգրավվել հատվածները սովորելու մեջ: Սուրբ գրություններն արագ գտնելու վարժությունները չպետք է հանգեցնեն նրան, որ որևէ մեկը, կամ Հոգին վիրավորվի: Օգնեք ուսանողներին խուսափել իրենց սուրբ գրություններին անհարգալից վերաբերվելուց կամ չափից դուրս մրցակցային լինելուց: Աշխատեք այնպես անել, որ ուսանողները մրցեն չափանիշի, այլ ոչ թե իրար հետ: Օրինակ, ուսանողները կարող են մրցել ուսուցչի հետ, կամ կարող եք այնպես անել, որ նրանք մրցեն, տեսնելու, թե արդյոք դասարանի որոշ տոկոսը կարող է գտնել որոշակի հատված նշված ժամանակահատվածում:

Որպեսզի ուսանողները պատրաստվեն սուրբ գրություններն արագ գտնելու վարժություններին, կարող եք վարժությունը սկսելուց առաջ նրանց մի քանի րոպե ժամանակ տալ, որպեսզի կրկնեն վարդապետությունների սերտման հատվածների հղումներն ու հիմնաբառերը: Դա կարող են անել զույգերով կամ էլ՝ կրկնել հատվածները դասարանով:

Ինչու է ամուսնությունը կարևոր

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

Տասներկու Առաքյալների Քվորումից

Քաղվածք՝ "Marriage Is Essential to His Eternal Plan," *Ensign*, June 2006, 82–87; կամ *Լիահոնա*, հունիս 2006, 50–55

«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» հռչակագրում Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը հայտարարում է, «որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի Ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար» [«Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2010, 129]: Հռչակագրի այս առանցքային նախադասությունը շատ բան է ասում մեզ ամուսնության վարդապետական կարևորության մասին և շեշտում է ամուսնության և ընտանիքի գերակայությունը Հոր Ծրագրում: Օրինական ամուսնությունը՝ պատվիրան և կարևոր քայլ է սիրո հիմքերով ընտանեկան հարաբերություն ստեղծելու գործընթացում, որը կարող է հարատևել մահից հետո:

Երկու համոզիչ վարդապետական պատճառներ կան, որ օգնում են մեզ հասկանալ, թե ինչու է հավերժական ամուսնությունը էական Հոր Ծրագրում:

Պատճառ 1. *Տղամարդու և կնոջ հոգիների բնույթները լրացնում և կատարյալ են դարձնում միմյանց և այդպիսով նախատեսված է, որ տղամարդիկ և կանայք միասին զարգանան դեպի վեհացում:*

Ամուսնության հավերժական բնույթը և կարևորությունը կարելի է լիովին հասկանալ միայն Իր զավակների համար նախատեսված Հոր Ծրագրի բազմակողմանի համատեքստի շրջանակներում: «Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և … ունի աստվածային բնույթ և ճակատագիր» [«Ընտանիք՝ հայտարարություն

աշխարհին»]: Երջանկության մեծ ծրագիրը հնարավորություն է տալիս Երկնային Հոր հոգևոր որդիներին և դուստրերին ձեռք բերել ֆիզիկական մարմիններ, երկրային փորձառություն և զարգանալ դեպի կատարելություն:

«Սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի» [«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»] և մեծ մասամբ որոշում է, թե ով ենք մենք, ինչու ենք մենք այստեղ՝ երկրի վրա և ինչ պետք է անենք կամ դառնանք: Աստվածային նպատակներով, տղամարդ և կին հոգիները տարբեր են, առանձնահատուկ և միմյանց լրացնող:

Երկրի ստեղծումից հետո Ադամը տեղադրվեց Եդեմի պարտեզում: Կարևոր է սակայն, որ Աստված ասաց, որ «լավ չէ, որ մարդը մենակ լինի» (Ծնունդոց 2.18, Մովսես 3.18), և Եվան դարձավ Ադամի զուգընկերը և օգնականը: Անհրաժեշտ էր թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց հոգևոր, ֆիզիկական, մտավոր և էմոցիոնալ կարողությունների եզակի համադրությունը, որպեսզի երջանկության ծրագիրն իրականանար: Ո՛չ տղամարդը, և ո՛չ էլ կինը միայնակ չէին կարող իրագործել իրենց ստեղծման նպատակները:

Աստվածային ծրագրով տղամարդիկ և կանայք պետք է միասին առաջանան դեպի կատարելություն և լիարժեք փառք: Իրենց տարբեր բնավորությունների և ընդունակությունների շնորհիվ տղամարդիկ և կանայք ամուսնական հարաբերությունների մեջ յուրահատուկ հայացք ու փորձառություններ են մտցնում: Տղամարդն ու կինը տարբեր ձևով, սակայն հավասարապես են ներդրում կատարում ընդհանուր միասնությանն ու ամբողջականությանը, որոնց հնարավոր չէ հասնել որևէ այլ ճանապարհով: Տղամարդը լրացնում և կատարելագործում է կնոջը, իսկ կինը լրացնում և կատարելագործում է տղամարդուն, երբ նրանք սովորում, ամրապնդում և օրհնում են իրար: «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, *Տէրումը»* (Ա Կորնթացիս 11.11, շեղագիրն ավելացված է):

Պատճառ 2. Աստվածային ծրագրի համաձայն, անհրաժեշտ էր թե՛ տղամարդու, և թե՛ կնոջ մասնակցությունը՝ երեխաներ լույս աշխարհ բերելու և նրանց զարգացման ու դաստիարակման համար լավագույն պայմաններ ապահովելու համար:

Դեռևս ուժի մեջ է հնում Ադամին և Եվային տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ պատվիրանը: «Աստված պատվիրել է, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին: … Երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից» [«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»]: Այսպիսով, ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև լիազորված մի ուղի է, որի միջով նախաերկրային հոգիները մտնում են մահկանացու կյանք: Ամուսնությունից առաջ սեռական հարաբերություններից ամբողջովին զերծ մնալը և բացարձակ հավատարմությունը ամուսնության մեջ պահպանում են այս սուրբ պարտականության սրբությունը:

Սիրող ու հավատարիմ ամուսնուց և կնոջից բաղկացած տունը լավագույն վայրն է, որտեղ երեխաները կարող են դաստիարակվել սիրով և արդարությամբ, և որտեղ երեխաների հոգևոր և ֆիզիկական կարիքները կարող են բավարարվել: Ճիշտ այնպես, ինչպես տղամարդկանց և կանանց յուրահատուկ բնութագրերը նպաստում են ամուսնական հարաբերությունների ամբողջականությանը, այդ նույն բնութագրերն էլ կենսական են երեխաների զարգացման, դաստիարակման և ուսուցման համար: «Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան ողջ հավատարմությամբ» [«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»]:

Պատվիրաններ

Նշում. Վարդապետությունների սերտման հետևյալ վարժությունները կարող են կատարվել դասընթացի մի քանի դասերի կամ մեկ դասի ընթացքում:

Հասկանալ վարդապետությունը (25 րոպե)

Մաս 1 (10 րոպե)

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

- *Աստված ինչո՞ւ է մեզ պատվիրաններ տալիս:*
- *Ինչո՞ւ մենք պետք է հնազանդվենք դրանց:*

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ «Պատվիրաններ» կոչվող 9-րդ վարդապետական թեմայի առաջին պարբերությունը *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից,* փնտրելով գրատախտակին գրված հարցերի պատասխանները:

- Աստված ինչո՞ւ է մեզ պատվիրաններ տալիս: (Որպեսզի օգնի մեզ զարգանալ և դառնալ Իր նման: Պատվիրանները մեր հանդեպ Աստծո սիրո արտահայտությունն են:
- Ինչո՞ւ է կարևոր, որ հնազանդվենք Աստծո պատվիրաններին: (Պատվիրաններին հնազանդվելը թույլ է տալիս մեզ ցույց տալ մեր սերը Տիրոջ հանդեպ և կբերի մեզ երջանկություն և օրհնություններ):

Խնդրեք ուսանողներին կարդալ Հովհաննես 14.15-ը և առաջարկեք նրանց նշել այդ հատվածը որպես վարդապետության սերտման հատված: Բացատրեք, որ Առաքյալների հետ վերջին անգամ ընթրելուց հետո, Իր խաչելությունից առաջ, Հիսուսը մի կարևոր գաղափար տվեց Իր Առաքյալներին, թե մենք ինչպես պետք է վերաբերվենք պատվիրաները պահելուն: Մի քանի րոպե հատկացրեք, որպեսզի ուսանողները անգիր սովորեն սուրբ գրության այդ հատվածի տեղը և բովանդակությունը, ապա հարցրեք:

- Ըստ այս հատվածի, ի՞նչ ենք մենք ցույց տալիս Փրկչին՝ պահելով պատվիրանները: (Ուսանողների պատասխաններից հետո գրատախտակին կարող եք գրել հետևյալ ճշմարտությունը. **Պահելով Փրկչի պատվիրանները, մենք ցույց ենք տալիս մեր սերը Նրա հանդեպ:**)
- Ըստ ձեզ, պատվիրանների պահելը ինչո՞ւ է խոսում Փրկչի հանդեպ մեր սիրո մասին:

Մաս 2 (5 րոպե)

Հրավիրեք ուսանողներին որպես խաչաձև հղում գրել Մատթեոս 22.36–39 հատվածները իրենց սուրբ գրություններում Հովհաննես 14.15 հատվածի

լուսանցքում: Ապա խնդրեք նրանց կարդալ Մատթեոս 22:36–39 հատվածները և հրավիրեք նրանց նշել այդ հատվածը որպես վարդապետության սերտման հատված:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս հատվածների համատեքստը, խնդրեք նրանց մտքում կարդալ Մատթեոս 22.34–36-ը, փնտրելով, թե ինչ հարց տվեցին Փրկչին:

- Ի՞նչ հարց տվեց օրինականը Փրկչին:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մատթեոս 22.37-39 հատվածները: Խնդրեք դասարանի անդամներին հետևել՝ փնտրելով Փրկչի պատասխանը:

- Ըստ Փրկիչի, որո՞նք են երկու մեծ պատվիրանները: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ վարդապետությունը. **Երկու մեծ պատվիրաններն են. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը: Սիրիր քո ընկերին քո անձի պէս»:**)

Հրավիրեք ուսանողներից մեկին կարդալ «Պատվիրաններ» կոչվող 9-րդ վարդապետական թեմայի երկրորդ պարբերությունը *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից*: Դասարանին հրավիրեք հետևել նրան՝ փնտրելով կապը Աստծուն սիրելու և մյուսներին սիրելու միջև:

- Ո՞րն է կապը Աստծուն սիրելու և մյուսներին սիրելու միջև:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են այս երկուսը համարվում մեծ պատվիրաններ:

Քաջալերեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ են իրենք անում, որպեսզի ցույց տան իրենց սերը Աստծո և իրենց շրջապատի մարդկանց հանդեպ:

Մաս 3 (5 րոպե)

Խնդրեք ուսանողներին վերհիշել, թե Հիսուս Քրիստոսն ինչ ուսուցանեց՝ որոնք են երկու մեծ պատվիրանները և պարզել վարդապետության սերտման հատվածները, որոնք ուսուցանում են այս ճշմարտությունը:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ Մատթեոս 22.36–39 և երկու մեծ պատվիրանները. սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը, և սիրիր քո ընկերին քո անձի պէս, թող որևէ ուսանող բարձրաձայն կարդա Մատթեոս 22.40 հատվածը: Խնդրեք դասարանի անդամներին հետևել, ուշադրություն դարձնելով, թե Հիսուս Քրիստոսն ինչ ասաց այս երկու մեծ պատվիրանների մասին:

- Հիսուսն ի՞նչ ասաց այս պատվիրանների մասին: (Օրենքով և մարգարեների կողմից ուսուցանված բոլոր պատվիրանները իրենցից ներկայացնում են սուրբ գրությունների երկու հիմնական բաժիններ, որոնք հիմնված են այս երկու մեծ պատվիրանների վրա կամ կախված են դրանցից):

Կարող եք ցուցադրել կամ բաժանել թերթիկներ՝ Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ Ուխդորֆի հետևյալ

խոսքերով. Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ հայտարարությունը: Խնդրեք դասարանին հետևել՝ փնտրելով, թե ինչպես են մյուս բոլոր պատվիրանները հիմնված այս երկու մեծ պատվիրանների վրա:

«Որքան հստակ էր խոսում Փրկիչը, երբ ասաց, որ ամեն պատվիրան հիմնված է սիրո սկզբունքի վրա: Եթե մենք չենք անտեսում մեծ օրենքները, եթե մենք իսկապես սովորում ենք սիրել մեր Երկնային Հորը և մեր մերձավորին մեր ողջ սրտով, հոգով և մտքով, ամեն բան իր տեղը կընկնի» (“The Love of God,” *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2009, 24):

- Ինչպե՞ս են մյուս բոլոր պատվիրանները հիմնվում երկու մեծ պատվիրանների վրա:

Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան պատասխանելու համար, հրավիրեք նրանց կարդալ «Պատվիրաններ» 9-րդ վարդապետական թեմայի վերջին երեք պարբերությունները *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից:* Խրախուսեք նրանց նշել այնտեղ թվարկված պատվիրաններից մի քանիսը և մտածել, թե ինչպես է դրանց հանդեպ մեր հնազանդությունը ցույց տալիս մեր սերը Աստծո և ուրիշների նկատմամբ:

Մաս 4 (5 րոպե)

Կարող եք առաջարկել ուսանողներին, որ գրեն Մատթեոս 5.14–16 խաչաձև հղումը իրենց սուրբ գրություններում՝ Մատթեոս 22.36–39 հատվածների լուսանցքում: Բացատրեք, որ Լեռան Քարոզի ժամանակ Փրկիչն ուսուցանեց, թե ինչպես մենք կարող ենք ցույց տալ մեր սերը Աստծո և ուրիշների հանդեպ: Խնդրեք ուսանողներին կարդալ Մատթեոս 5.14–16-ը և առաջարկեք նրանց նշել այդ հատվածը որպես վարդապետության սերտման հատված: Բացատրեք, որ այդ հատվածներում Փրկիչը Իր աշակերտներին մի պատվիրան է տվել, որը ամենակարևոր եղանակներից մեկն է, որով մենք կարող ենք ցույց տալ մեր սերը Աստծո և մեր շրջապատի մարդկանց հանդեպ:

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Մատթեոս 5.14–16 հատվածները՝ տեսնելով, թե ինչ ուսուցանեց Փրկիչն Իր աշակերտներին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «այսպես լուսավորէ ձեր լոյսը մարդկանց առաջին» (Մատթեոս 5.16):
- Վարդապետության սերտման այս հատվածն ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալ, թե ինչպես կարող ենք կիսվել ավետարանով մեր շրջապատի մարդկանց հետ: (Երբ մենք պահում ենք պատվիրանները, արդար օրինակ ենք հանդիսանում, շրջապատի մարդիկ տեսնում են մեր ընտրություններն ու դրա արդյունքում մեր ստացած օրհնությունները, ուստի, կարող են ավելի բաց լինել ավետարանն ընդունելու համար):

Հրավիրեք ուսանողներին գրել հետևյալ սկզբունքը. **մենք կարող ենք ուսուցանել ավետարանը մյուսներին մեր լավ օրինակի միջոցով** Մատթեոս 5.14–16 հատվածի լուսանցքում:

Հարցրեք ուսանողներին, թե պատահե՞լ է երբևէ, որ նրանք ուսուցանվեն կամ ամրապնդվեն մի ընկերոջ կամ ընտանիքի անդամի լավ օրինակի շնորհիվ, ովքեր պահում են պատվիրանները: Հրավիրեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց փորձառությամբ, եթե հարմար է:

Կարող եք առաջարկել ուսանողներին, որ գրեն Հովհաննես 14.15 խաչաձև հղումը իրենց սուրբ գրություններում՝ Մատթեոս 5.14–16 հատվածների լուսանցքում: Եթե դասին ազատ ժամանակ լինի, օգնեք ուսանողներին գտնել լուսանցքներում իրենց գրած հատվածները՝ որպես վարդապետության սերտման այս գործընթացի վարժություն և նրանց ժամանակ տվեք, որ անգիր սովորեն այդ հատվածները:

Եզրափակեք, բերելով ձեր վկայությունը «Պատվիրաններ» վարդապետական թեմայի շրջանակներում քննարկված սկզբունքների մասին *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից:*

Գործնական վարժություն (20 րոպե)

Հետևյալ վարժությունը կօգնի ուսանողներին կիրառել սկզբունքները, որոնք նրանք սովորեցին «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնում, *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից:* Որպեսզի հիշեցնեք ուսանողներին այս սկզբունքները, լավ կլինի գրեք դրանք գրատախտակին.

- *Գործեք հավատքով:*
- *Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից:*
- *Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:*

Հրավիրեք ուսանողներին կրկնել «Պատվիրաններ» 9-րդ վարդապետական թեման *Վարդապետությունների սերտման հիմնական փաստաթղթից,* ապա հարցրեք նրանց, թե որ պատվիրաններին երիտասարդներին դժվար կլինի հնազանդվել, եթե նրանք չունենան հստակ պատկերացում իրենց նպատակի մասին: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին:

Ուսանողներին հանձնարարեք աշխատել զույգերով և ընտրել գրատախտակին գրված պատվիրաններից մեկը: Յուրաքանչյուր զույգին տվեք հետևյալ օժանդակ նյութը և խնդրեք նրանց կարդալ այն և քննարկել հարցերի պատասխանները:

Գործեք հավատով.

- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի խրախուսեք ինչ-որ մեկին գործել հավատով, եթե նա դժվարություններ ունի հասկանալու, թե ինչու է Աստված տվել տվյալ պատվիրանը:

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից.

Կրկնեք վարդապետությունը, որն ուսուցանվում է Հովհաննես 14.15, Մատթեոս 5.14–16 և Մատթեոս 22.36–39 հատվածներում:

- Ինչպե՞ս կարող է այս հատվածներում ուսուցանվող վարդապետությունը օգնել ինչ-որ մեկին ավելի լավ հասկանալ ձեր ընտրած պատվիրանը:
- Ուրիշ ի՞նչ ճշմարտություններ կարող են նպաստել, որ ոչ թե աշխարհիկ, այլ հավերժական տեսանկյունից դիտվի ձեր ընտրած պատվիրանը:

Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով.

- Ի՞նչ են վերջերս սովորեցրել Տիրոջ մարգարեները, որը կօգնի ինչ-որ մեկին հասկանալ ձեր ընտրած պատվիրանին հնազանդվելու կարևորությունը: (Կարող եք վկայակոչել Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների խոսքերը, որոնք հասանելի են LDS.org կայքում կամ Եկեղեցու ամսագրերում:)

Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան այդ հարցերը քննարկելու համար, հրավիրեք նրանց մասնակցել մի դերախաղի: Թող յուրաքանչյուր զույգից մեկը մի մարդու դեր խաղա, ով դժվարանում է հասկանալ, թե ինչու է Տերը պահանջում Իր զավակներից ապրել այն պատվիրանով, որը զույգն ընտրել է: Թող նրա զույգը օգնի դժվարացող անձին գործել հավատով, քննել պատվիրանը հավերժական տեսանկյունից և ձգտել մեծացնել հասկացողությունը սուրբ աղբյուրների միջոցով: Ուսանողներին մոտավորապես 10 րոպե հատկացրեք իրավիճակի դերախաղի համար:

Երբ ուսանողները բավականաչափ ժամանակ ունենան դերախաղի համար, կարող եք դասարանով քննարկել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կերպ մենք կարող ենք հավատով գործել, երբ չենք հասկանում որոշակի պատվիրաններ կամ դրանք պահելը դժվար ենք համարում:
- Ինչպե՞ս եք օգնել ձեր ընկերոջը որևէ պատվիրանի վերաբերյալ իր հատուկ հարցը կամ մտահոգությունը քննել հավերժական տեսանկյունից:
- Ի՞նչ սուրբ աղբյուրներ եք դուք օգտագործել ձեր դժվարացող ընկերոջ հարցին պատասխանելու կամ նրան քաջալերելու համար, որ լրացուցիչ գիտելիք որոնի:

Եզրափակեք միջոցառումը, հրավիրելով ուսանողներին կիսվել իրենց մտքերով, որոնք նրանք ունեցան, մասնակցելով այս վարժությանը:

Վարդապետությունների սերտման կրկնություն

Հրավիրեք ուսանողներին աչքի անցկացնել Նոր Կտակարանի վարդապետությունների սերտման հատվածները և ընտրել մեկը, որը պարունակում է վարդապետություն կամ սկզբունք, որի մասին նրանք վկայություն ունեն: Հրավիրեք նրանց վկայել այդ վարդապետության կամ

սկզբունքի մասին և կիսվել փորձառություններով, որոնք նպաստել են այդ վկայությունն ունենալուն: Երբ ուսանողները կիսվեն իրենց վկայություններով, Սուրբ Հոգին կհաստատի վարդապետության կամ սկզբունքի ճշմարտացիությունը, որի մասին նրանք վկայում են: Նրանց վկայությունները կարող են նաև ոգեշնչել ուրիշներին՝ գործելու հավատով:

ՍԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ և
ԿՐՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02132 31201 1
13231 201